

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈՂԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

***Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի երաշխավորությամբ***

Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման
վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Բսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ գլխավոր խմբագրի տեղակալ
Ա. Մնացականյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ"**

"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
*Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса полиции Республики Армения*

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В
ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ
ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА
СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: заместитель главного редактора Артак Мнацакяня

**FOUNDER AND PUBLISHER:
"POLICE EDUCATIONAL COMPLEX OF RA" STATE NON-PROFIT
ORGANIZATION**

"BULWARK OF LAW" scientific-methodical journal

**It is published with the warranty of the Scientific Council of the Police
Educational Complex of RA**

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S
MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE'S IN THE
ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

**The representative of the journal publishing: Deputy Head of the editor-in-chief
A. Mnatsakanyan**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Գլխավոր խմբագիր - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Տիգրան Եսայան,**

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ. **Արտակ Մնացականյան,**

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ **Միրանուշ Պողոսյան:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան,**

ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան,**

ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ. **Գրիգոր Բաղիրյան,**

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Մերգել Առաքելյան,**

Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան **Արթուր Ղամբարյան,**

ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետ, ոստիկանության գնդապետ **Աշոտ Ահարոնյան,**

ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Արա Տիդանյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գազիկ Գրիգորյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան,**

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով,**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով,**

ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն:**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор- первый заместитель начальника Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Есяян Тигран Микаелович,**

Заместитель главного редактора- начальник отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, майор полиции, кандидат юридических наук **Мнацаканян Артак Самвелович,**

Ответственный секретарь- заместитель начальника отдела научных работ Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции **Погосян Сирануш Гришаевна.**

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Заместитель начальника полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук **Кочарян Оганнес Ишханович,**

Судья конституционного суда Республики Армения, доктор юридических наук, профессор **Хачатрян Ашот Гайкович,**

Главный советник начальника Полиции Республики Армения, полковник полиции, доктор юридических наук **Бадирян Григор Микаелович,**

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор **Аракелян Сергей Ваганович,**

Заведующий кафедрой теории и истории государства и права Института права и политики Российско-Армянского университета, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА **Гамбарян Артур Сиреканович,**

Начальник Управления по связям с общественностью и информации Полиции Республики Армения, полковник полиции **Агаронян Ашот Сирасович,**

Начальник Национального бюро Интерпола РА, полковник полиции, кандидат юридических наук **Фидания Ара Хоренович,**

Начальник академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Григорян Гагик Таарович,**

Заместитель начальника академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Мурадян Манук Оганнесович,**

Начальник юридического факультета академии Образовательного комплекса полиции РА, подполковник полиции, кандидат юридических наук **Марандян Руслан Рафикович,**

Начальник кафедры уголовного права и криминологии академии юридического факультета Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент **Маркосян Мисак Меружанович.**

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, доктор технических наук, профессор, генерал-майор полиции **Булгаков Олег Митрофанович,**

Первый заместитель начальника Академии управления МВД России, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Парадников Александр Геннадьевич,**

Заместитель начальника Омской академии МВД РФ (по научной работе), полковник полиции доктор юридических наук, профессор, **Бавсун Максим Викторович,**

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2018 թվականի դեկտեմբերին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիրը ընդգրկվեց ատենախոսությունների հիմնական արդյունքների եվ դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՆ Բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում:

Ամսագրի գործունեության երեք տարիների նվիրական աշխատանքների ընթացքում հրապարակվել են ավելի քան 100 գիտական հոդվածներ և ԲՈԿ-ի համապատասխան ցանկում ընդգրկվելը մեր գործունեության արժանի գնահատականն էր:

Այս ձեռքբերումը մեծ պատիվ է ամսագրի խմբագրական խորհրդի և առհասարակ ամսագրի խմբագրության համար: Ամսագրում տպագրվող հոդվածները անցնում են ուսումնասիրման մի քանի փուլեր, որպեսզի ապահովվեն համապատասխան գիտականությունը և ԲՈԿ-ի նշված ցանկում ընդգրկվելը ավելի է պարտավորեցնում պահպանել արդեն իսկ ձևավորված մոտեցումները:

«Օրենքի պատվար» ամսագիրը ոչ միայն հոդված տպագրելու միջոց է, այլ մի հարթակ է, որտեղ իրականացվում է մասնագիտական ոլորտի ուսումնասիրություններ և քննարկումներ, որտեղ հոդվածների միջոցով լուսաբանվում է արտասահմանյան հեղինակների փորձը, որով ամրապնդվում է համագործակցությունը ներպետական և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատությունների հետ գիտահետազոտական ոլորտում:

Շնորհավորում եմ ամսագրի խմբագրական խորհրդի անդամներին և խմբագրությանը ձեռք բերված նվաճման կապակցությամբ և մաղթում եմ արդյունավետ աշխատանք:

Հարգանքով՝

գլխավոր խմբագիր

Տիգրան Եսայան

К читателю.

В декабре 2018 года издаваемый в Образовательном комплексе полиции Республики Армения научно-методический журнал «Защитник закона», был включён в перечень ведущих рецензируемых научных журналов и изданий Высшей аттестационной комиссии при Министерстве науки и образования Республики Армения, в которых должны быть опубликованы основные научные результаты диссертаций на соискание ученых степеней доктора и кандидата наук.

Это явилось достойной оценкой трёх прошедших лет нашей активной деятельности, на протяжении которых на страницах журнала было опубликовано более ста научных статей.

Для редакционного совета и редакции журнала подобное достижение - большая честь. Благодаря сложившимся подходам, публикуемые нами статьи подвергаются тщательному изучению и отбору, что обеспечивает их актуальность и научную ценность и интерес для наших читателей.

Цель журнала «Защитник закона» - не только создание специальной научной площадки для публикации статей, но и формирование платформы, на которой реализуются профессиональные исследования и обсуждения.

В каждом из изданных номеров журнала широко представлены работы, как отечественных, так и зарубежных авторов, что позволяет активно развивать наше сотрудничество в научно-исследовательской области.

В связи со значимым событием позвольте поздравить членов редакционного совета и редакцию журнала с заслуженным успехом и пожелать всем дальнейшей плодотворной работы.

С уважением,

Главный редактор

Тигран Есаян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրիգորյան Լալա

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՐՈՒՄ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ----- 9

Խաչատրյան Հռիփսիմե

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ----- 18

Ղազարյան Արտակ

ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԻ և ԴԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՅԻ ՄԱՍԻՆ---- 27

Մուրադյան Մանուկ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ ----- 36

Մելիքսեթյան Մարթա

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝ «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ----- 57

Պետրոսյան Հակոբ, Ներսիսյան Հայկ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ----- 68

Մահակյան Ալեքսանդր

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԻՐԱՎԱԽԱՄՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ----- 74

Մարդարյան Վահագն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ----- 87

Մարդարյան Լուսինե

ՄԱՐԴՈՒ ԶԵՌՔԻ ՔՐՏՆԱՃԱՐՊԱՅԻՆ ՀԵՏՔԵՐԻ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՐԶՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ----- 96

Օհանյան Դավիթ

ՏԱՔՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԻՆՏԵՐՆԵՏ-ՄԻՋՆՈՐԴ----- 108

Волков Вячеслав Юрьевич ОТДЕЛЬНЫЕ НАПРАВЛЕНИЯ БОРЬБЫ С КАРТЕЛЯМИ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ -----	122
Гамбарян Артур Сиреканович ОТКАЗ ОТ ПРАВА НА ЛИЧНУЮ СВОБОДУ И ВОПРОСЫ УГОЛОВНО- ПРОЦЕССУАЛЬНОГО ВМЕШАТЕЛЬСТВА -----	129
Казарян Кристина Васаковна АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУЦИОНАЛЬНОГО И ПРАВОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИГРАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ -----	141

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գրիգորյան Լալա

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի
դասախոս, ռստիկանության մայրը,
ՀՀ ռստիկանության կրթահամալիրի ասպիրանտ*

Մասնագիտական գրականության մեջ հանցանքի միջնորդավորված կատարումն ավանդաբար քննարկվում է հանցակցության ինստիտուտի շրջանակներում հանցանքը կատարողի և հանցանքի կատարման տարբեր դրսևորումների խնդիրներն ուսումնասիրելիս: Սակայն հետազոտության շրջանակների նման սահմանափակումը թույլ չի տալիս բացահայտելու հանցանքի միջնորդավորված կատարման իրական տեղն ու նշանակությունը քրեաիրավական ինստիտուտների համակարգում: Ներկայիս օրենսդրական կարգավորման պայմաններում լուծված չեն հիմնախնդրին վերաբերող մի շարք վիճահարույց հարցեր, մասնավորապես մինչև այժմ կարգավորված չէ հանցակցությունից դուրս միջնորդավորված կատարման հնարավորությունը, լուծված չեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալին, սահմանազանցմանը, չավարտված միջնորդավորված կատարմանը վերաբերող խնդիրները:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասը տալիս է հանցանք կատարողի սահմանումը, որի տեսակներից է համարվում հանցանքի միջնորդավորված կատարումը, այսինքն՝ այն դեպքերը, երբ անձն իր հանցավոր մտադրություններն իրականացնելու համար օգտագործում է օրենքի ուժով քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձանց կամ այնպիսի անձանց, ովքեր հանցանքը կատարել են անզուտությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 38-ը սահմանում է, որ կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը: Այս հոդվածի տրամաբանությունից պարզ է դառնում, որ միջնորդա-

վորված կատարողը հանցակցության կազմում գործելու համար պետք է ունենա այլ հանցակիցներ՝ դրդիչ, օժանդակող, կազմակերպիչ կամ հանցանքն իրականացնի մեկ այլ կատարողի հետ: Օրինակ՝ Կ.-ն որոշում է գողություն կատարել: Իր բացահայտման հավանականությունը նվազեցնելու համար նա խնդրում է իր 10 տարեկան տղային, որպեսզի իրենց հարևանի բնակարանից աննկատ դուրս հանի նրանց թանկարժեք զարդերը: Կ.-ն նաև խնդրում է իր ընկեր փականագործ Գ.-ին, որ հարևանի տան փականը բացող բանալի պատրաստի՝ բացատրելով դրա անհրաժեշտությունը: Գ.-ն օգնում է ընկերոջը՝ զիտակցելով իր ունեցած դերը հանցագործության մեջ:

Բերված օրինակում գողությունը կատարվել է հանցակցությամբ. կա կատարող, ով հանցանքն իրականացրել է միջնորդավորված ձևով, և կա օժանդակող: Սակայն հնարավոր են իրավիճակներ, երբ միջնորդավորված կատարողը գործի միայնակ, այսինքն՝ առանց քրեական պատասխանատվության սուբյեկտ համարվող անձի: Օրինակ բերենք վերևում քննարկված դեպքը՝ առանց Կ.-ի ընկեր Գ.-ի օժանդակության: Փաստորեն, գողությունը կատարեց Կ.-ն՝ միջնորդավորված ձևով, բայց Կ.-ն չունի հանցակից, ուստի հանցակցության կազմում հանդես գալ չի կարող: Գործող օրենսդրական կարգավորման պայմաններում ստացվում է, որ Կ.-ին չենք կարող կոչել հանցանքի միջնորդավորված կատարող, մինչդեռ նրա արարքը ոչ այլ ինչ է, քան հանցանքի միջնորդավորված կատարում: Ահա այստեղ բախվում ենք օրենսդրական բացի, որը լրացնելու համար առավել նպատակահարմար է հանցանքի միջնորդավորված կատարման սահմանումը դուրս բերել հանցակցության ինստիտուտից՝ միաժամանակ չբացառելով դրա գոյությունը նաև հանցակցության դեպքում:

Այսպիսով, վերոնշյալ հարցին լուծում տալու համար առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ գլխի վերնագիրը ձևակերպել հետևյալ կերպ՝ «Հանցագործության մասնակիցների բազմաթվություն», որտեղ առանձին հոդվածներ կնախատեսվեն հանցակցության, հանցանքի միջնորդավորված կատարման, ինչպես նաև հանցագործության մասնակիցների բազմաթվության այլ ձևերի վերաբերյալ:

Անդրադառնանք հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում հնարավոր հաջորդ վիճահարույց իրավիճակին: Խոսքը հանցանքի միջնորդավորված կատարման ժամանակ փաստական սխալին առնչվող դեպքերի

մասին է: Պ.Ս. Դագելը, անդրադառնալով սխալի քրեաիրավական նշանակությանը, այն բաժանում էր երկու տեսակի՝ էական և ոչ էական սխալներ: Այսպիսի բաժանումը կարևոր գործնական նշանակություն ունի, քանի որ կարող է ազդել արարքի որակման վրա: Այսպես, եթե անձը սխալվում է այնպիսի փաստական հանգամանքների հարցում, որոնց հետ օրենսդիրը կապում է քրեական պատասխանատվության հիմքն ու սահմանները, ապա այդպիսի սխալը համարվում է էական¹: Կարծում ենք, որ հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալը դասվում է էական սխալների շարքին, քանի որ ազդում է արարքի որակման վրա:

Հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալի պարագայում անձը կարծում է, թե հանցանքը կատարում է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործել է անզգուշությամբ, սակայն իրականում վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության: Ուսումնասիրելով քրեաիրավական սխալին վերաբերող գրականությունը, վերլուծելով սխալի դասակարգման տեսակները՝ կարող ենք եզրակացնել, որ քննարկվող իրավիճակում առկա է փաստական սխալ պատճառական կապի զարգացման մեջ: Այսպես՝ անձը կարծում է, թե քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը կպատճառվի իր արարքից (միջնորդավորված ձևով), այնինչ իրականում այդ վնասն անմիջականորեն պատճառվում է քրեական պատասխանատվության ենթակա մեկ այլ անձի արարքից: Ինչպես գիտենք, սխալի քրեաիրավական նշանակությունն օրենքով սահմանված չէ, հետևաբար, պետք է առաջնորդվել գիտության մեջ ընդունված մոտեցմամբ, որի համաձայն՝ պատճառական կապի մեջ փաստական սխալի տվյալ տեսակի դեպքում արարքը ենթակա է որակման որպես հանցափորձ²:

Հատկանշական է, որ այս մոտեցումն արտացոլվել է նաև ՀՀ նոր քրեա-

¹St'e Дaгeль П.С. Обстоятельства, исключющие виновность субъекта и влияющие на форму вины. - Советская юстиция, 1973, №3, էջ 14-16:

²St'e, օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: ԵՊՀ հրատարակչություն: Երևան, 2012, էջ 223, Волова Ю.Д. Ошибка в развитии причинной связи и ее влияние на квалификацию и форму вины / Ю.Д. Волова // Труды молодых специалистов Полоцкого государственного университета, 2007, № 19, էջ 57:

կան օրենսգրքի Նախագծում, որի հոդված 29-ի (Միալը արարքի փաստական հանգամանքների մեջ) 3-րդ մասը սահմանում է՝ «Եթե անձի դիտավորության մեջ ընդգրկված վտանգավոր հետևանքներն առաջանում են ոչ թե անձի արարքից, այլ ուրիշ պատճառներով, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար»:

Այսպիսով, կարելի է ձևակերպել հանցանքի միջնորդավորված կատարման դեպքում փաստական սխալի որակման հետևյալ կանոնը: Եթե անձը կարծել է, թե հանցանքը կատարում է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել է անզգուշությամբ, սակայն իրականում վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել է դիտավորությամբ, ապա արարքը որակվում է որպես հանցափորձ: Օրինակ՝ Ա.-ն ցանկանում է գողություն կատարել Ս.-ի բնակարանից և իր նպատակն իրականացնելու համար Ա.-ն դիմում է Տ.-ի օգնությանը՝ կարծելով, թե վերջինս 12 տարեկան է: Տ.-ն գողությունը կատարելուց հետո ձերբակալվում է, և պարզ է դառնում, որ նրա 14 տարին լրացած է եղել հանցանքի կատարման պահին, ինչի մասին Ա.-ն տեղյակ չէր: Այս պարագայում Ա.-ի արարքը կորակվի որպես գողության փորձ:

Որակման առումով իրենից հետաքրքրություն է ներկայացնում նաև հակառակ իրավիճակը: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ անձը կարծել է, թե հանցագործության է դրդում քրեական պատասխանատվության ենթակա անձի, սակայն իրականում վերջինս օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության: Կարծում ենք, որ այս դեպքում հանցանքի միջնորդավորված կատարում չի կարող լինել, քանի որ միջնորդավորված կատարման հիմնական նշանակությունը կայանում է այն հանգամանքի գիտակցման մեջ, որ հանցավոր մտադրությունն իրականացվում է այլ, այնպիսի անձի օգտագործելով, ով չի գիտակցում իր արարքի հանրային վտանգավորությունը կամ չի ղեկավարում այն: Սակայն ներկայացվող իրավիճակում անձի մոտ նման դիտավորությունը բացակայում է: Հանցանքի մղած անձը գիտակցում է, որ ինքը հանդես է գալիս որպես հանցագործության դրդիչ, այնինչ պարզվում է, որ կատարողը քրեական պատասխանատվության տարիքի չի հասել, ուստի չկա հանցակցություն: Կարծում ենք, առաջնորդվելով փաստական սխալի կանոններով՝ անձի արարքը պետք է որակվի որպես հանցափորձ:

Այսպես, քննարկենք վերևում բերված օրինակը՝ փոխելով պայմանները: Ա.-ն ցանկանում է գողություն կատարել Ս.-ի բնակարանից և իր նպատակն իրականացնելու համար Ա.-ն դիմում է Տ.-ի օգնությանը՝ կարծելով, թե վերջինս 13 տարեկան է: Տ.-ն գողությունը կատարելուց հետո ձերբակալվում է, և պարզ է դառնում, որ նա իրականում 14 տարեկան է, ինչի մասին Ա.-ն տեղյակ չէր: Այս պարագայում Ա.-ի արարքը կորակվի որպես միջնորդավորված ձևով կատարվող գողության փորձ:

Քննարկենք հանցանքի միջնորդավորված կատարմանը վերաբերող մեկ այլ հիմնախնդիր՝ չավարտված միջնորդավորված կատարումը: Դա այն իրավիճակն է, երբ որպես «գործիք» օգտագործվող անձը, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, չի պատճառում միջնորդավորված կատարողի դիտավորությամբ ընդգրկված վնասը: Մեր պատկերացմամբ՝ հնարավոր է չավարտված միջնորդավորված կատարման երեք իրավիճակ:

Առաջին իրավիճակում որպես գործիք հանդես եկող անձը չի համաձայնվում կատարել միջնորդավորված կատարողի դիտավորության մեջ ընդգրկված արարքը, այլ կերպ ասած՝ հենց սկզբնական փուլում միջնորդավորված կատարումը ձախողվում է: Կարծում ենք, որ տվյալ իրավիճակում միջնորդավորված կատարողի արարքը պետք է որակել որպես մտադրված հանցագործության նախապատրաստություն, եթե, իհարկե, դա ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է: Այսպես, քր.օր.-ի հոդված 35-ի համաձայն՝ նախապատրաստություն է համարվում նաև հանցանք կատարելու համար դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ հանցանք կատարելու համար այլ պայմաններ ստեղծելն ընդգրկում է այնպիսի գործողություններ (անգործություններ), որոնք անհրաժեշտ են հանցանքը կատարելու համար³:

Երկրորդ իրավիճակում միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը ձեռնամուխ է լինում վնասի պատճառմանը, սակայն կամովին հրաժարվում է իր արարքն ավարտին հասցնելուց: Ընդ որում, որպես գործիք օգտագործվող անձը կարող է կամովին հրաժարվել նախապատրաստության կամ փորձի փուլերում: Կարծում ենք, որ այս իրավիճակում միջնորդավոր-

³ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Ս.Առաքելյան, Ա.Գաբուզյան, Հ.Խաչիկյան և ուրիշներ: -Եր.: Երևանի համալս. հրատ., 2012, էջ 242:

ված կատարողի արարքը պետք է որակել որպես իր մտադրված հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ՝ կախված նրանից, թե որ փուլում է որպես գործիք օգտագործվող անձը կամովին հրաժարվել վնաս պատճառելուց:

Երրորդ իրավիճակում միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը ձեռնամուխ է լինում վնասի պատճառմանը, սակայն դա ավարտին չի հասցնում իրենից անկախ հանգամանքներով: Կարծում ենք, որ այս իրավիճակում էլ միջնորդավորված կատարողի արարքը պետք է որակել որպես իր մտադրված հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ՝ կախված նրանից, թե որ փուլում է դադարեցվել որպես գործիք օգտագործվող անձի արարքը: Այս պնդումը հիմնավորվում է նրանով, որ այս դեպքում նույնպես որպես գործիք օգտագործվող անձի արարքը պետք է իրավաբանորեն վերագրել միջնորդավորված կատարողին, իսկ արարքն ավարտին չհասցնելու պատճառն էական չէ: Այդ պատճառն էական է դառնում չավարտված հանցակցության դեպքում, քանի որ դրանից է կախված կատարողին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու հարցը: Իսկ միջնորդավորված կատարման դեպքում որպես գործիք օգտագործվող անձի կողմից իր արարքն ավարտին չհասցնելու պատճառն էական չէ, քանի որ երկու դեպքում էլ որպես գործիք օգտագործվող անձը քրեական պատասխանատվության չի ենթարկվում:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք ձևակերպել չավարտված միջնորդավորված կատարման որակման հետևյալ կանոնները՝

1) Եթե միջնորդավորված կատարողը ցանկացել է հանցանքը կատարել այլ անձի օգտագործելու միջոցով, սակայն այդ անձը չի համաձայնվել կատարելու միջնորդավորված կատարողի դիտավորության մեջ ընդգրկված արարքը, ապա միջնորդավորված կատարողը պատասխանատվություն է կրում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար:

2) Եթե միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձն ավարտին չի հասցրել միջնորդավորված կատարողի դիտավորության մեջ ընդգրկված արարքը, ապա միջնորդավորված կատարողը պատասխանատվություն է կրում համապատասխան հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև հանցանքի միջնորդավորված

կատարման ժամանակ սահմանազանցման հարցը: Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ օգտագործվող անձն այսպես ասած շեղվի իրեն տրված հանձնարարությունից և պատճառի այլ վնաս կամ հանձնարարվածից ավելին կատարի, այսինքն՝ թույլ տա որակական կամ քանակական սահմանազանցում:

Այսպիսի դեպքերում իրավակիրառի համար խնդիր կառաջանա՝ ինչպիսի գնահատական տալ միջնորդավորված կատարողի արարքին: Արդյո՞ք պետք է հաշվի առնել միջնորդավորված կատարողի վերաբերմունքն օգտագործված անձի առաջացրած լրացուցիչ հետևանքների նկատմամբ, թե՞ ցանկացած հետևանք մեղսագրել միջնորդավորված կատարողին: Հարցին միանշանակ պատասխան տալը դժվար է, բայց մի բան պարզ է, որ պատասխանը ձևակերպելիս չպետք է խախտվեն անձնական և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքները:

Վերոնշյալ խնդրին առնչվող որոշ հարցերի անդրադարձել է Գ.Վ. Նազարենկոն: Հեղինակի կարծիքով սահմանազանցման դեպքում միջնորդավորված կատարողը պետք է պատասխանատվության ենթարկվի միայն այն հանցագործության համար, որը ցանկանում էր կատարել այլ անձին օգտագործելու միջոցով⁴: Ըստ էության Գ.Վ. Նազարենկոն հավասարության նշան է դրել հանցակցի սահմանազանցման և միջնորդավորված կատարողի սահմանազանցման դեպքերի միջև, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է: Ի տարբերություն հանցակցության, երբ գործ ունենք քրեական պատասխանատվության սուբյեկտ հանդիսացող անձանց հետ, միջնորդավորված կատարման պարագայում հանգամանքները մի փոքր այլ են: Քրեական պատասխանատվության տարիքի չհասած, անմեղսունակության վիճակում գտնվող, առանց մեղքի կամ անզգուշությամբ գործող անձանց հանցանքի կատարմանը ներքաշողը պետք է քրեական պատասխանատվություն կրի նաև այդ անձանց այնպիսի արարքների համար, որոնք գուցեև դուրս էին իր նպատակից, բայց այնուհանդերձ դրանց առաջացումը կանխատեսելի էր հենց այն հիմնավորմամբ, որ հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացնողները չունեն բավարար կամք և կարողություն սեփական վարքագծի վտանգավորությունը տվյալ իրավիճակում գիտակցելու կամ ղեկավարելու համար:

⁴Տե՛ս Назаренко Г.В. Квалификация особых случаев соучастия: соучастие и невменяемость // Известия ВУЗ. Правоведение, 1995, № 3, էջ 96:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հանցանքի միջնորդավորված կատարման սահմանազանցման որակման հետևյալ կանոնները՝

1. Եթե միջնորդավորված կատարողը նախատեսել է իր կողմից օգտագործվող անձի սահմանազանցման հնարավորությունը, չի ցանկացել դա, բայց գիտակցաբար թույլ է տվել, ապա միջնորդավորված կատարողը պետք է պատասխանատվություն կրի հանցանքն անուղղակի դիտավորությամբ կատարելու համար:

2. Եթե որպես «գործիք» օգտագործվող անձը թույլ է տվել սահմանազանցում և դրա հետ մեկտեղ չի պատճառել միջնորդավորված կատարողի դիտավորության մեջ ընդգրկված վնասը, ապա միջնորդավորված կատարողի արարքը որակելիս պետք է կիրառել ինչպես միջնորդավորված կատարման սահմանազանցման, այնպես էլ՝ չավարտված միջնորդավորված կատարման որակման կանոնները, այսինքն՝ արարքը որակել հանցանքների համակցությամբ:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ կարևորվում է հանցագործության միջնորդավորված կատարմանն առնչվող իրավական նորմերի կատարելագործումը, այդ թվում՝ օրենսդրական որոշ բացերի լրացումը, քանզի իրավակարգավորման բացը կամ անորոշությունը իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել միջնորդավորված կատարմանը տրվող գնահատականի անճշտության: Միննույն ժամանակ հարցի վերաբերյալ օրենսդրական հստակ կարգավորումը կնպաստի այս ինստիտուտին առնչվող քրեաիրավական նորմերի միատեսակ մեկնաբանմանն ու կիրառմանը:

ПОСРЕДСТВЕННОЕ СОВЕРШЕНИЕ ПРЕСТУПЛЕНИЯ: СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ И ПЕРСПЕКТИВЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ

Григорян Лала Аршавировна

*Преподаватель кафедры теории государства и права
и конституционного права юридического факультета
Академии Образовательного комплекса полиции
Республики Армения, майор полиции*

Статья посвящена нынешнему состоянию и перспективам законодательного регулирования посредственного совершения преступления. Ав-

тор выявляет законодательные неясности и пробелы, касающиеся посредственного совершения преступления и предлагает собственные решения этих вопросов, которые направлены на обеспечение единообразного толкования и применения уголовно-правовых норм, касающихся посредственного совершения преступления.

Ключевые слова: Уголовный кодекс, соучастие в преступлении, посредственное совершение преступления, квалификация преступления, фактическая ошибка, эксцесс посредственного совершения преступления, неоконченное посредственное совершение преступления.

THE MEDIATED COMMISSION OF CRIME: CURRENT STATE AND PROSPECTS FOR LEGISLATIVE REGULATION

Grigoryan Lala

*Lecturer the Chair of Theory of State and Law and
Constitutional Law at the Faculty of Law of the Academy
of the Educational Complex of RA Police,
Police Major,
Postgraduate student of RA Police Educational Complex*

The article is related to the mediated commission of crime, its current state and legislative regulation perspectives. The author has indicated present legislative uncertainties and gaps related to mediated commission of crime and introduced solutions, which tend to provide similar interpretation and application of appropriate criminal standards.

Keywords: Criminal code, complicity, mediated commission of crime, qualification of crime, factual mistake, excess of mediated commission of crime, unfinished mediated commission of crime.

Հոդվածը գրախոսվել է՝ 16.01.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 29.01.2019թ.

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Խաչատրյան Հռիփսիմե

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի
և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,
ոստիկանության մայոր
Երևանի պետական համալսարանի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

Անչափահասների հանցավորությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունները կարևորվում են միշտ: Ինչպես հաստատում են արտասահմանյան երկրների մեր գործընկերները, անչափահասների հանցավորությունն այսօր՝ վաղվա չափահասների հանցավորությունն է¹, հետևաբար մենք չենք կարող այսօրվա խնդիրը թողնել վաղը լուծելու համար: Ուստի, անչափահասների հանցավորության հետ կապված ցանկացած հետազոտություն՝ միշտ արդիական է: Այդ առումով հատկապես կարևորվում է անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման առանձնահատկություններին՝ վերաբերող ուսումնասիրությունը:

Շատ գիտնականներ և պրակտիկ աշխատողներ գտնում են, որ այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է նոր մոտեցում², քանի որ գործող պրոֆիլակտիկ աշխատանքների ձևերն իրենց գործնականում սպառել են և ավելի շատ կրում են ձևական բնույթ:

Միննույն ժամանակ ըստ Ա.Դուշկինի, անչափահասների հանցավորության կանխարգելումն իրենից ներկայացնում է պետական բարդ համալիր առաջադրանք, որը հնարավոր է լուծել միայն օրենսդիր և գործադիր իշխանությո-

¹ Տե՛ս Wolfgang Heinz. Jugendkriminalität in Deutschland Kriminalstatistische und kriminologische Befunde Aktualisierungsstand: 9/2002 // www.uni-konstanz.de/FuF/Jura/heinz/ // Universität Konstanz. 2002, վերջին այցելություն 11.01.2019թ.:

² Տե՛ս Лелеков В.А., Кошелева Е.В. Проблемы социальной профилактики преступности несовершеннолетних // Российская юстиция. 2009. N 11. էջեր 66 – 67:

յան, իրավապահ մարմինների, այլ պետական մարմինների և հասարակության՝ ամբողջությամբ վերցրած համատեղ ջանքերով³:

Սույն հոդվածի շրջանակում կանդրադառնանք անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման որոշ հարցերի:

Ինչպես գիտենք, կանխարգելիչ գործունեությունը բաղկացած է այնպիսի տարրերից, ինչպիսիք են՝ սուբյեկտը, որն իրականացնում է կանխարգելիչ գործունեությունը, ներգործության օբյեկտը և կանխարգելիչ միջոցները⁴: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անչափահասների հանցավորությանը (այդ թվում՝ խմբային) նպաստող գործոնների թվին է դասվում կանխարգելման հատուկ սուբյեկտների, հատկապես՝ ոստիկանության, քրեակատարողական հիմնարկի, պրոբացիոն ծառայության աշխատանքներում առկա թերություններն ու խնդիրները: Մեր կողմից փորձ է արվել այդ ոլորտում վերհանել այն գործոնները, որոնք դժվարեցնում են հանցավորության այս տեսակի կանխարգելման իրականացմանը, դրանով իսկ նվազեցնելով պատասխանատու կառույցների գործունեության արդյունավետությունը:

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման գործում մեծ է ոստիկանության դերը, քանի որ, որպես կանոն, հենց ոստիկանությունն է առաջինը ստանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործության, ինչպես նաև այն անչափահասների մասին տեղեկատվությունը, որոնք հայտնվել են դաստիարակության անբարենպաստ պայմաններում և կարող են բռնել հանցավոր ուղի: Չթերագնահատելով ոստիկանության այլ ստորաբաժանումների դերն ու նշանակությունը՝ հարկ է նշել, որ անչափահասների հանցավորության կանխարգելման հիմնական աշխատանքն իրականացնում է ՀՀ ոստիկանության անչափահասների հանցավորության կանխարգելման մասնագիտացված հատուկ սուբյեկտը՝ Քրեական հետախուզության գլխավոր

³ Տե՛ս Душкин Антон Сергеевич. Психолого-педагогические средства и меры предупреждения преступности несовершеннолетних// Проблемы выбора средств предупреждения преступности несовершеннолетних в условиях реформирования уголовноисполнительной системы России: Сборник материалов международной научно-практической конференции (Вологда, 27 апреля 2012 г.) / Отв. ред. В.Ф. Лапшин. – Вологда: ВИПЭ ФСИН России, 2012. էջ 92:

⁴ Տե՛ս Терехова О.Н. Групповая преступность несовершеннолетних и ее предупреждение подразделениями по делам несовершеннолетних органов внутренних дел; дис.....канд. юрид.наук: 12.00.08.- Красноярск, 2005, էջ 136:

վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչությունը: Այն, որպես անչափահասների հանցավորության կանխարգելման հատուկ մասնագիտացված սուբյեկտ ունի, հատուկ նպատակ՝ ներգործել անչափահասների հանցավորության, նրա պատճառների և պայմանների, ինչպես նաև անչափահասների անձի վրա: Մասնագիտացված ստորաբաժանումն իր գործունեությունն իրականացնում է՝ պրոֆիլակտիկայի ընձեռած ողջ հնարավորություններն օգտագործելով: Այստեղ առկա խնդրի էությունը կայանում է նրանում, որ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասը հաշվառվում է և ենթարկվում անհատական պրոֆիլակտիկայի:

Մենք կարծում ենք, որ անչափահասների *խմբերն* ունեն պրոֆիլակտիկ հատուկ ներգործության կարիք, քանի որ անչափահասը հանցավոր վարքագիծ դրսևորում է հենց խմբի կազմում, և այդ անչափահասը վտանգավոր է կամ կրիմինոգեն ռիսկ է պարունակում խմբի կազմում: Գտնում ենք, որ խմբի պարագայում նախապատվությունը պետք է տալ խմբային պրոֆիլակտիկային՝ միաժամանակ օգտագործելով նաև անհատական պրոֆիլակտիկային հնարավորությունները: Այսինքն, կանխարգելիչ ներգործությունը պետք է ուղղված լինի ոչ միայն խմբի անչափահաս անդամներին առանձին-առանձին, այլ նաև խմբին ամբողջությամբ վերցրած: Հետևաբար, առաջարկում ենք որդեգրել խմբային պրոֆիլակտիկայի ինստիտուտը: Վերջիվերջո խումբը միանգամից որպես հանցավոր չի ստեղծվում, այլ այդպիսին դառնում է ժամանակի ընթացքում: Իսկ այդ ժամանակահատվածում պատշաճ հսկողությունը և կանխարգելիչ ներգործությունը հնարավոր է կանխի հանցավորի վերաճելու գործընթացը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը⁵ ցույց է տալիս, որ անչափահասների հանցավոր խմբերը ձևավորվում են հիմնականում կա'մ բնակավայրում, կա'մ ուսման վայրում, հազվադեպ՝ ժամանցի վայրում: Հետևաբար կարծում ենք, որ խմբերի հաշվառումը հնարավոր է, քանի որ անչափահասների գործերով տեսուչներն իրենց գործունեությունն իրականացնում

⁵ Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 24.06.2016 թվականին ստացված ՀՀ դատական դեպարտամենտի Ե-4102 գրությամբ տրամադրված 2010- 2017 թվականների քրեական գործերի ցանկի հիման վրա www.datalex.am կայքից վերցրած ավելի քան 400 փորձառական նյութերի տվյալների ուսումնասիրության արդյունքում:

են տարածք սպասարկելու սկզբունքով, ինչպես նաև ՀՀ-ում ներդրվել և գործում է դպրոցական տեսուչի ինստիտուտը: Այսինքն, և՛ տեսականորեն, և՛ գործնականում հնարավոր է թե՛ անչափահասների հանցավոր խմբերի հաշվառումը՝ որպես պրոֆիլակտիկայի ինքնուրույն տեսակի, թե՛ դրանց վրա պրոֆիլակտիկ ներգործությամբ խմբի դրական վերակողմնորոշման իրականացումը:

Գիտնականներն առհասարակ խմբային պրոֆիլակտիկայի հասկացության մեջ տարբեր բովանդակություն են դնում: Մի խումբ հեղինակներ խմբային պրոֆիլակտիկան տեսնում են արհեստականորեն ստեղծված խմբերի հետ աշխատանքում⁶: Մյուսները հասկանում են այնպիսի աշխատանք, որն ուղղված է անձին անմիջականորեն շրջապատող մարդկանց խմբին, այսինքն՝ նրա միկրոմիջավայրին⁷: Երրորդներն իրավախախտ անչափահասների խմբային պրոֆիլակտիկայի տակ հասկանում են պրոֆիլակտիկ միջոցներ, որոնք ուղղված են անձանց խմբին, որի անդամները կամ խումբն ամբողջությամբ վերցրած կատարում են հակահասարակական արարքներ կամ իրավախախտումներ⁸: Մենք համամիտ ենք այն գիտնականների հետ, ովքեր անչափահասների հանցավորության խմբային պրոֆիլակտիկայի տակ հասկանում են անչափահասներից բաղկացած հակահասարակական ուղղվածությամբ խմբերի հետ տարվող աշխատանքը⁹:

Խմբային պրոֆիլակտիկան ամենից առաջ խմբային գիտակցության վրա

⁶ Ст'ю Старков О.В. Групповая профилактика преступлений и перспективы исправительных учреждений // Реализация гуманистических начал решений XXVII съезда КПСС и XIX Всесоюзной партийной конференции по совершенствованию правовой системы в сфере исполнения уголовно-правовых мер воздействия и исправления осужденных. - Рязань, 1989. - էջեր 270-273:

⁷ Ст'ю Шестаков Д.А. Семейная криминология. - СПб., 1996. - էջ 162:

⁸ Ст'ю Пишикина Н.И. Правовые и методические вопросы профилактики правонарушений несовершеннолетних : дис.... канд. юрид. наук : 12.00.08. - СПб., 1998. - էջ 31:

⁹ Ст'ю Долгова, А.И. Социально-психологические аспекты преступности несовершеннолетних / А.И. Долгова. — М.: Юридическая литература, 1981, էջեր 64-65, Булатов Р.М., Шеслер А.В. Криминологическая характеристика и профилактика групповой преступности. - Казань, 1999, էջեր 86-90:

ներգործությունն է՝ խմբի հակահասարակական բացասական նորմերի և արժեքների փոփոխման նպատակով: Հակասոցիալական խմբավորումներին բնորոշ արդարության, ընկերության, փոխօգնության մասին խեղաթյուրված պատկերացումների թուլացման, քննադատության և փոփոխության արդյունքում հնարավոր է ամբողջ խմբի վարքագծի հետագա շտկումը և դրա յուրաքանչյուր անդամի հետ անհատական կանխարգելիչ աշխատանքը¹⁰: Փաստորեն ստացվում է, որ այստեղ գործ կունենանք կանխարգելման առավել բարդ օբյեկտի՝ խմբի հետ:

Խմբային պրոֆիլակտիկան պետք է ուղղված լինի անչափահասների խմբերի կողմից հանցանքների կատարման կանխարգելմանը: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել պրոֆիլակտիկ ներգործության հատուկ մեթոդներ և միջոցներ, որոնք կապահովեն գործունեության արդյունավետ կազմակերպվածությունը: Անչափահասների գործերով տեսուչները պրոֆիլակտիկայի նպատակով՝ կուսումնասիրեն անչափահասների խմբերը, խմբի ակտիվ անդամներին, լիդերին, վերջինիս ազդեցությունը անչափահասների վրա կանխելու համար:

Անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող գործոններն առկա են նաև պատժի կատարման ոլորտում: Մասնավորապես, ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի գործունեության մեջ, որտեղ ազատազրկման ձևով իրենց պատիժն են կրում անչափահաս դատապարտյալները:

Այս ոլորտը ևս շատ կարևոր է: Ինչպես նշում է Ել. Կաշտանովան, պետությունը և հասարակությունը անչափահասների հանցավորությանը պետք է արձագանքեն այնպես, որպեսզի պատիժը կրելուց հետո նրանց վերադարձնեն նորմալ կյանք որպես լիարժեք անհատների¹¹:

¹⁰ Ст'у Талан М.В. Понятие групповой профилактики преступлений несовершеннолетних // Проблемы борьбы с рецидивной преступностью : Сборник статей / Под ред. В.Д. Филимонова.-Томск, 1992.-С.131

¹¹ Ст'у Каштанова Е.А. Проблемы, возникающие в работе сотрудников уголовно-исполнительных инспекций по исправлению несовершеннолетних осужденных без лишения свободы // Проблемы выбора средств предупреждения преступности несовершеннолетних в условиях реформирования уголовноисполнительной системы России: Сборник материалов международной научно-практической конференции

Ցանկանալով ծանոթանալ անչափահաս դատապարտյալների հետ տարվող աշխատանքներին՝ այցելել ենք «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ¹²: Չնայած, որ 2018թ.-ի ապրիլի 3-ի դրությամբ չկար անչափահաս դատապարտյալ (մինչև 25.12.2018թ.-ի դրությամբ ևս դեռևս չկա), կար մեկ կալանավորված: Փորձեցինք ծանոթանալ անչափահասների նկատմամբ տեղում իրականացվող քրեակատարողական քաղաքականությանը: Սակայն, այստեղ տեսանելի էին էական բացթողումներ: Մասնավորապես, չկար դատապարտյալների հաշվառում, բացակայում էին անչափահասների ուղղման, հասարակության վերաինտեգրման ծրագրեր: Հատկապես, ուշագրավ էր այն փաստը, որ արդեն մի քանի տարի է, ավելի ստույգ՝ 2014 թ.-ից, դադարեցվել են կրթական ծրագրերը: Խնդիրը կայանում է նաև նրանում, որ հիմնական կրթությունը համարվում է պարտադիր, և, բացի այդ, այն կարող է նպաստել դատապարտյալի դրական կենսագործունեությանը և ուղղման քաղաքականությանը:

Առկա էր նաև համապատասխան մասնագետների պատրաստվածության խնդիրը: Այստեղ ևս անհրաժեշտ է խմբային պրոֆիլակտիկ ներգործության ենթարկելու մարտավարության մշակում, քանի որ անչափահասների ուղղիչ հիմնարկը մեկն է և խմբի անդամները պատիժը կրելու են նույն վայրում:

Հաջորդ ոլորտը, որը ոչ պակաս պատասխանատու է անչափահասների հանցավորության (այդ թվում՝ խմբային) կանխարգելման գործընթացում՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության գործունեությունն է:

Առհասարակ, պրոբացիայի ծառայությունը պատմականորեն ստեղծվել է այն օրինախախտ անձանց հետ աշխատանքի կազմակերպման համար, ովքեր դատապարտվել են ազատագրվման հետ չկապված պատժի կամ ազատվել են պատժի կրումից: Զարգացմանը զուգահեռ տարբեր երկրներում պրոբացիայի ծառայությունը սկսեց իր վրա վերցնել նաև սոցիալ-վերականգնողական գործունեության գործառույթներ, առավել լայն շրջանակի անձանց

(Вологда, 27 апреля 2012 г.) / Отв. ред. В.Ф. Лапшин. – Вологда: ВИПЭ ФСИН России, 2012, էջ 106:

¹² ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ այցելել ենք Ե40/12-1531, 28.032018թ.-ի ՀՀ ԱՆ ՔՎ պետի գրության հիման վրա:

նկատմամբ, ովքեր խախտել են օրենքը և այդպիսի ներգործության կարիք ունեն¹³:

ՀՀ-ում պրոբացիայի պետական ծառայությունը ստեղծվել է 2016թ.-ի մայիսին: Այս ոլորտը ևս շատ կարևոր է, որովհետև պատասխանատու է ոչ միայն պայմանական դատապարտվածների, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվածների, պատժի կրումից ազատվածների ուղղման, այլ նաև նրանց վերադաստիարակման և, առհասարակ, հանցավորության ռեցիդիվի կանխարգելման համար:

Այստեղ ևս այցելել և տեղում ծանոթացել ենք ոլորտի մեզ հետաքրքրող խնդիրներին: Ուսումնասիրելով դատական պրակտիկան և անչափահասների նկատմամբ պատժողական քաղաքականությունը՝ տեսնում ենք, որ անչափահասն ազատագրվման ձևով պատիժը կրում է ծայրահեղ դեպքում: Որպես կանոն, այն դեպքերում, երբ դատարանը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ ազատագրվման ձևով պատիժ է նշանակում հանգելով հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու՝ հիմնվում է ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի վրա և պատիժը պայմանաւորեն չի կիրառում: Պատիժը պայմանակորեն չկիրառելով՝ դատարանն անչափահասի նկատմամբ նշանակում է 1-5 տարի ժամկետով փորձաշրջան, որը կազմակերպում և որի համար պատասխանատու է պրոբացիոն ծառայությունը: Այստեղ ևս պրակտիկայում առկա են կադրային քաղաքականության խնդիրներ՝ կապված ծառայողների քանակի հետ: Մեր ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ կադրերի պակասի արդյունքում յուրաքանչյուր ծառայողի վարսություն առկա էին հարյուրից ավել գործեր: Ընդ որում, անհրաժեշտ է ոչ միայն կադրերի համալրում, այլ նաև մասնագիտացում, այսինքն՝ պրոբացիայի ծառայողները պետք է մասնագիտանան պրոբացիայի կոնկրետ շահառուների հետ տարվող աշխատանքներում: Հատկապես «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 49 հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ պրոբացիայի անչափահաս շահառուների սոցիալական, իրավական, հոգեբանական և մտավոր առանձնահատկություններից ելնելով՝ պրոբացիայի ծառայության կազմում գործում են անչափահասների գործերով հատուկ վերապատրաստում

¹³ Ст'ю Давыденко В.М. Перспективы создания в Российской Федерации службы пробации // Уголовно-исполнительная система: право, экономика, управление. 2011. № 4. էջեր 2-5:

անցած մասնագետներ: Մակայն, փաստացի այդ մասնագիտացված մոտեցումը բացակայում է, և պրոբացիայի ծառայողներն իրենց վարույթում տարբեր կատեգորիայի պրոբացիայի շահառուներ՝ կին, տղամարդ, անչափահաս, ռեցիդիվ թույլ տված անձ: Միչդեռ նրանցից յուրաքանչյուրի հետ աշխատանքներն ունեն իրենց առանձնահատկություններն ու դժվարությունները: Հետևաբար ցանկալի է, որպեսզի յուրաքանչյուր ծառայող մասնագիտանա կոնկրետ խմբի հետ աշխատանքում:

Պրոբացիայի հատկապես անչափահաս շահառուների հետ աշխատանքը պահանջում է հատուկ ուշադրություն և նրբանկատություն, աշխատանքի ճիշտ մեթոդիկայի ընտրություն և մշտապես կատարելագործում: Իսկ խմբի կազմում հանցանք կատարած շահառուի նկատմամբ, բացի անհատական պրոֆիլակտիկայից, կարծում ենք, պետք է իրականացնել խմբային պրոֆիլակտիկա: Պրոբացիայի շահառուի վարքի նկատմամբ հսկողությունն իրականացնում են ինչպես բնակավայրում, այնպես էլ ուսման կամ աշխատանքի վայրերում, իսկ, ինչպես վերևում արդեն նշել ենք՝ անչափահասների մասնակցությամբ խմբերը ձևավորվում են հիմնականում բնակավայրերում և ուսումնական հաստատություններում, հազվադեպ ժամանցի վայրում: Հետևաբար գտնում ենք, որ պրոբացիոն ծառայության տարածքային մարմինների միջև համագործակցության շնորհիվ կարելի է հասնել նաև անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման արդյունավետության բարձրացմանը:

Տարբեր կառույցների՝ լինի պետական և ոչ պետական, մասնագիտացված և ոչ մասնագիտացված, միջև համագործակցությունը կարևոր պայման է առհասարակ հանցավորության, այդ թվում՝ և անչափահասների խմբային, կանխարգելման խնդիրները լուծելու համար: Ուստի անհրաժեշտ է հասարակության և պետության բոլոր ուժերը կենտրոնացնել անչափահասների հանցավորության հակազդման արդյունավետ համակարգ ստեղծելու համար: Եվ կարծում ենք, որ պետական քաղաքականությունն այս խնդրի շուրջ պետք է ուղղված լինի ոչ միայն օրենսդրության կատարելագործմանը, այլև խնդրի սոցիալական ասպեկտին, պայքարի կազմակերպմանը, պատասխանատու մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը, որոնք կնպաստեն մշակելու առավել արդյունավետ կանխարգելման ռազմավարություն և մարտավարություն:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Хачатрян Рипсима Мгеровна

Старший преподаватель кафедры

Уголовного права и криминологии

факультета правоведения Академии

Образовательного комплекса полиции РА,

майор полиции, соискатель кафедры Уголовного права ЕГУ

Статья посвящена исследованию некоторых вопросов предупреждения групповой преступности несовершеннолетних.

В статье представлена необходимость внедрения и осуществления групповой профилактики в процессе предупреждения групповой преступности несовершеннолетних. В частности, групповая профилактика должна стать функцией таких специальных субъектов как: специализированное подразделение полиции РА, уголовно-исполнительное учреждение «Абовян» и Служба пробации МЮ РА:

Ключевые слова: предупреждение групповой преступности несовершеннолетних; несовершеннолетний совершивший преступление в группе; индивидуальная профилактика, групповая профилактика, субъект пробации.

SOME ISSUES OF THE JUVENILE GROUP CRIMINALITY PREVENTION

Khachatryan Hripsime

Senior lecturer at Police Academy of Police

Educational Complex of RA, Department of

Law, Chair of Criminal Law and Criminology, Police Major.

Post-graduate student of the YSU department Of Criminal Law

The article is devoted to the study of some issues related to the juvenile group criminality prevention.

The necessity of establishment and implementation of group prophylaxis in the process of juvenile group criminality prevention has been introduced in the article. In particular, the fulfilment of group prophylaxis should be the function for such specialized bodies, as specialized department of Police, "Abovyan" Penitentiary Institution and Probation Service of RA of Ministry of Justice of RA.

Keywords: juvenile group criminality prevention, juvenile who committed a crime in a group, individual prophylaxis, group prophylaxis, probation beneficiary.

Հոդվածը գրախոսվել է՝ 11.02.2019թ.
Ներկայացվել է սուպերդոկտան՝ 15.02.2019թ.

ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԻ և ԴԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ղազարյան Արտակ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի¹ 217-րդ հոդ.-ը, կախված դիտարկվող օբյեկտներից, առանձնացնում է գննության հետևյալ տեսակները՝ 1. տեղանքի, 2. շինությունների, 3. առարկաների, 4. փաստաթղթերի, 5. կենդանիների, 6. մարդու կամ կենդանու դիակի գննում:

Թեև վերոհիշյալ հոդվածով դեպքի վայրի գննությունը որպես գննության առանձին տեսակ նախատեսված չէ, այնուամենայնիվ այն առանձնացվել և օրենսդրական ամրագրում է ստացել քր. դատ. օր.-ի 55-րդ հոդ.-ի 4-րդ, 57-րդ հոդ.-ի 2-րդ, 180-րդ հոդ.-ի 2-րդ մասերով՝ դիտարկվելով իբրև գննության ինքնուրույն տարատեսակ:

Պետք է շեշտել, որ շատ կարևոր է ճիշտ տարբերակել գննության տարատեսակները՝ մեկը մյուսից, քանի որ օրենսդիրը որոշ դեպքերում գննության տարբեր տեսակների համար նախատեսում է դրանց կատարման տարբերակված դատավարական կարգ:

Օրինակ՝ շինություն գննելիս, որը բնակարան է, կամ պետք է ստանալ բնակարանը զբաղեցնող անձանց թույլտվությունը, կամ, եթե այդպիսի գննությունը իրականացվում է այն զբաղեցնող անձանց կամքին հակառակ, պետք է նախօրոք կայացվի որոշում:

Ինչ վերաբերվում է դեպքի վայրի գննությանը՝ որպես գննության տարատեսակ այն ունի մի շարք յուրահատկություններ:

Իրավաբանական գրականության մեջ գերիշխող տեսակետի համաձայն դեպքի վայրի գննությունը գննության այլ տեսակներից տարբերվում է առաջին հերթին հետազոտվող օբյեկտով²:

¹ Այսուհետ նաև՝ քր.դատ.օր:

² St' u Уголовно-процессуальное право Российской Федерации, Учебник / отв. ред. П. А. Лупинская. 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2009, էջ 518: Курс уголовного процесса, 2-е издание, исправленное /под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. – М.: Статут, 2017, էջ 685:

Այս առումով անչափ կարևոր է «դեպքի վայր» եզրույթի բովանդակության ճիշտ բացահայտումը: Գրականության մեջ մի դեպքում «դեպքի վայր» ասելով հասկացվում է «շենք, շինություն, այլ օբյեկտ կամ տեղանքի հատված, որտեղ կատարվել է քննվող իրադարձությունը կամ այլ տեղ, որը գործի քննության սկզբում ընդունվում է որպես հանցագործության կատարման վայր»³(ընդգծումն իմն է՝ Ա.Ղ.):

Սակայն նման մոտեցումը, որը փաստորեն «դեպքի վայր» է դիտարկում միայն հանցանքի իրական կամ հավանական վայրը, խիստ նեղացնում է դեպքի վայրի բովանդակությունը՝ որպես հետևանք, իջեցնելով զննության այս տարատեսակի արդյունավետությունը:

Առավել ընդունելի ենք համարում այն մոտեցումն, ըստ որի «դեպքի վայր» հասկացության մեջ պետք է ներառել, ինչպես ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, այնպես էլ՝ այն վայրը, որտեղ թողնվել են հանցագործության հետքերը կամ տեղի է ունեցել գործի համար նշանակություն ունեցող դեպք⁴ (օրինակ՝ հանցագործության գործիքը կամ գողոնը թաքցնելու վայրը, հանցագործության նախապատրաստության վայրը և այլն):

Ինչպես նկատում ենք, «դեպքի վայր» հասկացության այսպիսի լայն սահմանման դեպքում, որպես դեպքի վայր կարող է հանդիսանալ ցանկացած տեղանք, շենք, շինություն կամ ցանկացած այլ վայր, որը ենթադրյալ հանցանքի կատարման վայրն է, կամ որտեղ տեղի է ունեցել գործի համար նշանակություն ունեցող դեպք, կամ որտեղ պահպանվել են հանցանքի հետքերը:

Այս իրավիճակում մրցակցություն է առաջանում զննության այլ տեսակների (օրինակ՝ տեղանքի զննության, շենքի զննության) և դեպքի վայրի զննության միջև:

³Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս. 3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով, ԵՊՀ հրատ., 2010թ., էջ 138:

⁴ Уголовный процесс: учебник /А.В. Смирнов, К.Б. Калиновский; под общ. ред. проф. А.В. Смирнова. 4-е изд., перераб. и доп. – М.: КНОРУС, 2008, էջ 393: Սրան մոտ տեսակետ են արտահայտել նաև այլ գիտնականներ. տե՛ս, օրինակ, Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. П. А. Лупинская. 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2009, էջ 518: **Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, Գիտ.խմբագիր՝ Ա.Ղամբարյան, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2017 թ., էջ 197:**

Գիտության մեջ մեծ տարածում ունի այն տեսակետը, որ նման դեպքերում պետք է իրականացվի դեպքի վայրի զննություն, և ոչ թե զննության այլ տեսակ:

Այսպես, օրինակ՝ դատավարագետ Ա. Մարտիրոսյանը նշում է. «որպես զննության ինքնուրույն տեսակ՝ տեղանքի զննությունը կատարվում է, **եթե այն չի հանդիսանում դեպքի վայր** (...): Շինության զննությունը, որպես զննության տեսակ իրականացվում է, **եթե շինությունը չի հանդիսանում դեպքի վայր**»⁵ (ընդգծումներն իմն են՝ Ա.Ղ.):

Բայց արդյո՞ք այդպիսի մոտեցումը ճիշտ է և արդյո՞ք այն ունի օրենսդրական հիմնավորում:

Սկզբից նեթ նկատենք, որ վերոնշված մրցակցության լուծման այդ մոտեցումը չունի օրենսդրական հիմք:

Առաջացող մրցակցությունը լուծելու, ինչպես նաև դեպքի վայրի զննության էությունը ճիշտ ընկալելու համար գիտության մեջ փորձ է արվել շեղվել ընդհանուր մոտեցումից, և դեպքի վայրի զննությունը զննության այլ տեսակներից տարբերակելու գործում **առաջնահերթությունը** տալ ոչ թե հետազոտվող օբյեկտին, **այլ՝ դեպքի վայրի զննության այլ հատկանիշին՝ դրա անհետաձգելիությանը (և հետո միայն հետազոտվող օբյեկտին):**

Այլ կերպ ասած, նման մոտեցման պարագայում առաջարկվում է խնդրի հետևյալ լուծումը. բոլոր այն դեպքերում, երբ առկա են, օրինակ, և՛ տեղանքի, և՛ դեպքի վայրի զննության իրականացման հիմքեր, ապա կատարվում է դեպքի վայրի զննությունը, երբ դրա հապաղումը կարող է հանգեցնել ապացուցողական նշանակություն ունեցող ինֆորմացիայի կորստի, մյուս դեպքում՝ երբ այդպիսի վայրը թեև հանդիսացել է հանցագործության կատարման վայր, սակայն այդ վայրի զննությունը չի հանդիսանում անհետաձգելի (չի կարող հանգեցնել ապացուցողական նշանակություն ունեցող ինֆորմացիայի կորստի) պետք է իրականացվի տեղանքի զննություն:

Այս առիթով դատավարագետներ Ա. Սմիրնովը և Կ. Կալինովսկին նշում են. «Դատաքննության ընթացքում նույնպես կարող է իրականացվել շինության և տեղանքի զննում (ՌԴ քր. դատ. օր.-ի 287-րդ հոդ.), որոնք լիովին կարող

⁵ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, Գիտ.խմբագիր՝ Ա.Ղամբարյան, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2017թ., էջ 200:

են հանդիսանալ հանցանքի կատարման վայր, հանցագործության հետքերի հայտնաբերման վայր, և որոնք նախնական քննության ընթացքում գուցե և դիտարկվել են իբրև դեպքի վայր: Այսինքն՝ միևնույն օբյեկտը (օրինակ՝ սպանվածի բնակարանը) նախնական քննության ընթացքում հանդիսանում է **դեպքի վայր**, իսկ դատաքննության ընթացքում դիտարկվում է գուտ իբրև շինություն: **Դատաքննության ընթացքում երբևէ չի կարող իրականացվել դեպքի վայրի գնություն, քանի որ միշտ բացակայում է անհետաձգելի իրավիճակը**»⁶(ընդգծումն իմն է՝ Ա.Ղ.):

Սակայն հարցի այսպիսի լուծումը չպետք է համարել բավարար. բանն այն է, որ ոչ մի կերպ չի բացառվում այն հանգամանքը, որ կախված իրադրությունից անհետաձգելի դիտարկվեն և՛ տեղանքի գնությունը, և՛ շենքի գնությունը, և՛ գնության այլ տեսակները: Այս պարագայում դեպքի վայրի գնության և գնության այլ տեսակների մրցակցության հարցը շարունակում է մնալ առկախված և դրա լուծումը կախման մեջ է հայտնվում իրավակիրառողի կամքից:

Ինչպե՞ս լուծել հարցը:

Բարձրացված խնդրի ճիշտ լուծումը գտնելու համար պետք է դիմենք պատմական մեթոդի օգնությանը, ինչը թույլ կտա ճիշտ ընկալել ներկայիս օրենսդրական կարգավորումների էությունը և ճիշտ որոշել դեպքի վայրի գնության տեղը և դերը քննչական գործողությունների համակարգում՝ լուծելով գնության այլ տեսակների հետ վերջինիս մրցակցության հարցերը:

Նկատենք, որ ՀԽՍՀ 1923 թ.-ի քր. դատ. օր.-ի կարգավորումներով կարելի էր առանձնացնել գնության հետևյալ տեսակները.

1. խուզարկության և առգրավման ընթացքում վերցված փաստաթղթերի և այլ իրերի գնությունը,
2. դիակի գնությունը,
3. փոստ-հեռագրական թղթակցության գնությունը (189-րդ և 190-րդ հոդ.-ներ):

Ինչպես նկատում ենք, ՀԽՍՀ 1923 թ.-ի քր. դատ. օր.-ի կարգավորումներով նախատեսված չէր դեպքի վայրի գնությունը՝ որպես գնության ինքնուրույն տարատեսակ:

⁶ Уголовный процесс: учебник / А.В. Смирнов, К.Б. Калиновский; под общ. ред. проф. А.В. Смирнова. 4-е изд., перераб. и доп. – М.: КНОРУС, 2008, С. 394.

Արդեն ՀԽՍՀ 1961 թ.-ի քր. դատ. օր.-ում կարգավորումներն այլ էին. այստեղ տեղ գտան գննության հետևյալ տեսակները՝

1. դեպքի տեղի, (ընդգծումն իմն է՝ Ա.Ղ.)
2. վայրի,
3. շենքերի,
4. առարկաների,
5. փաստաթղթերի գնում (169-րդ հոդ.),
6. դիագնոստիկա (171-րդ հոդ.):

Ինչպես տեսնում ենք, դեպքի վայրի (դեպքի տեղի) գննությունն օրենսդրորեն առանձնացվեց իբրև գննության տարատեսակ միայն ՀԽՍՀ 1961 թ.-ի քր. դատ. օր.-ով: Ընդ որում՝ 1964 թ.-ին կատարվեց օրենսդրական փոփոխություն, որով ՀԽՍՀ քր. դատ. օր.-ի 169-րդ հոդ.-ը լրացվեց հետևյալ դրույթով. «Անհետաձգելի դեպքերում դեպքի տեղանքի գնումը **կարող է կատարվել միջև քրեական գործ հարուցելը:** Այդպիսի դեպքերում, եթե դրա համար հիմքեր կան, քրեական գործը հարուցվում է դեպքի վայրը գննելուց անմիջապես հետո»:

Դեպքի վայրի գննությունն այդպիսով դարձավ այն միակ քննչական գործողությունը, որը հնարավոր էր կատարել քրեական գործի հարուցման փուլում: Այդպիսի օրենսդրական փոփոխությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ շատ դեպքերում՝ առանց դեպքի վայրի գննության անհրճանար էր լինում լուծել քրեական գործի հարուցման հարցը, պարզել քրեական գործ հարուցելու հիմքի բավարարությունը, և մինչ քրեական գործ հարուցելը դեպքի վայրի գննություն կատարելը դարձավ ստեղծված իրավիճակի միակ արդյունավետ լուծումը:

Սակայն ՀԽՍՀ 1961 թ.-ի քր. դատ. օր.-ով դեպքի վայրի (դեպքի տեղի) գննությունը նախատեսելով և հետագայում (1964 թ.) դեպքի վայրի գննության տեսակի կիրառման հնարավորություն նախատեսելով նաև մինչ գործի հարուցում՝ օրենսդիրը այդպիսով լուծեց քրեական գործի հարուցման հիմքի բավարարությունը ստուգելիս պրակտիկայում ծագող խնդիրները (ընդլայնվեց գործիքակազմը, որով հնարավոր էր ստուգել քրեական գործ հարուցելու հիմքի բավարարությունը), բայց հենց նույն այդ փոփոխություններով արդեն՝ 1961 թ.-ից ծնվեց մեր կողմից քննարկվող խնդիրը՝ դեպքի վայրի գննության և գննության այլ տեսակների մրցակցության խնդիրը, որն ի դեպ, մինչև 1998 թ.-

ի ՀՀ քր. դատ. օր.-ի ընդունումը լուծման իրավական հիմքեր չուներ⁷:

Իրավիճակը փոխվեց ՀՀ 1998 թ.-ի քր. դատ. օր.-ի ընդունմամբ, որի 217-րդ հոդ.-ում, ինչպես արդեն նշվեց, տեղ չգտավ դեպքի վայրի զննությունը որպես զննության ինքնուրույն տեսակ:

Այսպիսով՝ 1998 թ.-ի քր. դատ. օր.-ը խնդրո առարկայի մասով տարբերվեց իր նախորդից. դրանում զննության ընդհանուր տեսակների մեջ դեպքի վայրի զննությունն այլևս առանձնացված չէր, իսկ ահա 1964 թ.-ի փոփոխության անհրաժեշտությունը (քրեական գործ հարուցելու հիմքի բավարարությունը որոշելու համար մինչ քրեական գործ հարուցելը դեպքի վայրի զննության անցկացման թույլատրումը) իր ամրագրումը ստացավ ոչ թե զննության ընդհանուր տեսակները սահմանող հոդվածում (քր. դատ. օր.-ի 217-րդ հոդ.), այլ՝ **քրեական գործի հարուցման փուլը** կանոնակարգող 25-րդ գլխում ու արտացոլվեց 180-րդ հոդ.-ում՝ դրանով ընդգծելով *միայն մինչև քրեական գործ հարուցելը դեպքի վայրը զննելու հնարավորությունը և դրա առանձնացման նշանակությունը՝ քրեական գործ հարուցելու բավարար հիմքի որոշման տեխնիկական խնդրի լուծումը*:

Շենց այդ է պատճառը, որ քննիչի և հետաքննության մարմնի լիազորությունները սահմանող դատավարական նորմերում (քր. դատ. օր.-ի 55-րդ և 57-րդ հոդ.-ներ) օրենսդիրը ևս մեկ անգամ ընդգծեց նրանց՝ **մինչև քրեական գործ հարուցելը** դեպքի վայրը զննելու լիազորությունը:

Կատարված փոփոխություններով օրենսդիրը լուծեց դեռևս 1964 թ.-ից սկիզբ առած՝ դեպքի վայրի զննության և զննության այլ տարատեսակների հնարավոր մրցակցության խնդիրը: Նշված խնդիրը լուծվեց հետևյալ կանոնների ներմուծմամբ՝

1. դեպքի վայրի զննությունը հնարավոր է միայն չհարուցված քրեական գործով,
2. չհարուցված քրեական գործով զննության այլ տեսակների կատարման հնարավորությունը բացառվում է,
3. քրեական գործ հարուցելուց հետո բացառվում է դեպքի վայրի զննությունը:

⁷ Թերևս դրանով կարող ենք պայմանավորել «անհետաձգելիության» հատկանիշով առաջարկվող արհեստական լուծումները:

Հարուցված քրեական գործով, երբ առկա են «դեպքի վայրի» հատկանիշները, պետք է իրականացվեն համապատասխան գննություններ՝ ելնելով գննվող օբյեկտի հատկանիշից (եթե դեպքի վայրը տեղանք է՝ տեղանքի գննություն, շինություն է՝ շինության գննություն և այլն):

Ցավոք, սակայն, օրենսդրի այս լուծումն աննկատ մնաց ինչպես պրակտիկ աշխատակիցների, այնպես էլ տեսաբանների կողմից, ինչն էլ իր հերթին հանգեցրեց մեր կարծիքով արդեն իսկ լուծված խնդրի «արհեստական» և օրենսդրորեն չհիմնավորված լուծումների (սրանցից մի քանիսի մասին խոսվեց վերևում):

Խնդրո առարկայի «արհեստական» լուծումներն իրենց հերթին առաջ են բերում պրակտիկ մի շարք խնդիրներ: Այսպես, օրինակ, Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի 2015 թ.-ի հոկտեմբերի 19-ի թիվ ՇՂ/0052/01/15 գործով կայացրած արդարացման դատավճռից երևում է, որ.

1. Մինչ քրեական գործ հարուցելը հետաքննության մարմինը կատարել է բնակարանի գննություն (քանի որ բնակարանը հանդիսացել է հանցանքի կատարման վայր). հետաքննության մարմինը այս դեպքում գննության տեսակների մրցակցությունը կամայականորեն «լուծել է» ի օգուտ բնակարանի (շինության) գննության:

2. Նույն գործով Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանը դատավճռում նշել է. «Այսպիսով հետաքննական մարմնի աշխատակիցը մինչև քրեական գործ հարուցելը կատարել է **բնակարանի գնում**, ինչի իրավունքը չի ունեցել ... հետաքննական մարմինը, **մինչև քրեական գործ հարուցելը իրավասու է կատարել միայն դեպքի վայրի գնում**, իսկ գնման մյուս տեսակները, այդ թվում և բնակարանի գնումը, հետաքննության մարմինն իրավունք ունի կատարել միայն հարուցված քրեական գործով» (ընդգծումներն իմն են՝ Ա.Դ.):

3. Նույն գործով քննելով մեղադրողի վերաքննիչ բողոքը՝ վերաքննիչ դատարանն իր հերթին նշել է. «Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ թեև ինքնին չի բացառում քրեական գործ հարուցված չլինելու պայմաններում գննություն, այդ թվում՝ բնակարանի գննություն կատարելու հնարավորությունը...»:

Բերված իրարամերժ մեջբերումները մեկ անգամ ևս վկայում են նաև պրակտիկ հարթությունում հարցի լուծման թյուրընկալումների մասին:

Այսպիսով, կատարված վերլուծության հիման վրա գործնականում առաջացող հնարավոր թյուրըմբռումներ թույլ չտալու համար կարծում ենք, որ քննարկված և նմանատիպ այլ իրավիճակներում պետք է առաջնորդվել մեր կողմից առաջարկված մոտեցմամբ: Իսկ ինչ վերաբերվում է բնակարանին, ապա բոլոր այն դեպքերում, երբ այն հանդիսանում է դեպքի վայր, ապա չհարուցված քրեական գործով պետք է իրականացվի դեպքի վայրի զննություն, սակայն պահպանելով բնակարանի անձեռնմխելիության սկզբունքով նախատեսված լրացուցիչ երաշխիքը (որոշում կայացնելու պարտադիր պահանջը կամ բնակվող անձանց համաձայնության ստացումը): Հարուցված քրեական գործի պարագայում՝ դեպքի վայր հանդիսացող բնակարանում պետք է իրականացվի բնակարանի (շինության) զննություն⁸:

О ВОПРОСЕ КОНКРЕТИЗАЦИИ МЕСТА И РОЛИ ОСМОТРА МЕСТА ПРОИСШЕСТВИЯ

Казарян Артак Арменович

Аспирант образовательного комплекса полиции РА

В статье автор пытается конкретизировать место и роль осмотра места происшествия, а также, исходя из действующего законодательства, определить правильный способ разрешения возможной конкуренции между осмотром места происшествия и другими видами осмотра.

Ключевые слова: осмотр места происшествия, следственное действие.

⁸ Գրականության մեջ առաջարկվում է այս երկու լուծումների «հիբրիդը»՝ մինչ քրեական գործ հարուցելը բնակարանում, որը հանդիսանում է դեպքի վայր, կատարել «բնակարան-դեպքի վայրի զննություն» (տե՛ս **Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, Գիտ. խմբագիր՝ Ա. Ղամբարյան, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2017 թ., էջ 52**): Մեր կարծիքով նման մոտեցումը ոչ այնքան ընդունելի է այդպիսի «խառնուրդ» քննչական գործողության տեսակի օրենսդրական բացակայության պատճառով: Բացի այդ, նման մոտեցման հիման վրա ձևավորվելիք պրակտիկան, իր հերթին, կարող է ավելի «խորացնել» արհեստականորեն և անհարկի քննարկվող խնդիրը՝ անտեսելով դրա լուծման օրենսդրական հստակ ամրագրումները:

ON THE PROBLEM OF THE CLARIFICATION OF THE PLACE AND ROLE OF CRIME SCENE EXAMINATION

Ghazaryan Artak

PhD Student of the Police Educational Complex of RA

In this article the author tries to clarify the place and the role of crime scene examination, as well as to decide the appropriate solution in case of crime scene examination or possible competition of other types of examination based on the present legal regulations.

Keywords: crime scene, examination, investigative process, stage of bringing a criminal action.

Հոդվածը գրախոսվել է՝ 09.02.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 18.02.2019թ.

**ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ
ՉԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Մուրադյան Մանուկ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
պետի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության գնդապետ*

Ընդհանուր դրույթներ: Հիմնախնդրի վերաբերյալ կատարված ընդհանրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցն առավելապես հետազոտվել է քաղաքացիական իրավունքի գիտության ներկայացուցիչների կողմից¹: Սակայն անհրաժեշտ է նաև արձանագրել, որ մինչև օրս խնդրի բովանդակության վերաբերյալ իրավագիտության մեջ հստակությունը բացակայում է: Գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումները պայմանականորեն կարելի է բաժանել առանձին խմբերի: Այսպես՝ որոշ հեղինակներ չեն տարանջատում «սուբյեկ-

¹ St' u` Доманжо В.П. Ответственность за вред, причиненный путем злоупотребления правом / В.П. Доманжо // Ученые записки Имперского Казанского университета. Книга пятая. - Казань, 1913; Покровский И.А. Основные проблемы гражданского права. Изд. 3-е. испр. / И.А. Покровский. - М.: Изд-во «Статут», 2001. - 354 с., Агарков М.М. Проблема злоупотребления правом в советском гражданском праве / М.М. Агарков // Известия Академии наук СССР. Отделение экономики и права. - 1946. - № 6. - С. 424-436., Бару М.И. О ст. 1 Гражданского кодекса / М.И. Бару // Советское государство и право. - 1958. - № 12. - С. 117-120., Рясенцев В.А. Условия и юридические последствия отказа в защите гражданских прав / В.А. Рясенцев // Советская юстиция. - 1962. - № 9. - С. 7-10. 6 Самойлова М.В. Право личной собственности граждан СССР (понятие, осуществление, основные средства защиты): Дис. ... канд. юрид. наук. / М. В. Самойлова. - Ленинград, 1965. - 195 с., Грибанов В.П. Осуществление и защита гражданских прав. Изд. 2-е. испр. / В.П. Грибанов. - М.: Изд-во «Статут», 2003. - 411 с., Малиновский А.А. Злоупотребление субъективным правом как юридический феномен: Автореф. дис. ... д-ра юрид. наук: 12.00.01 / А.А. Малиновский. - М., 2008. - 52 с., Волков А. В. Злоупотребление гражданскими правами: проблемы теории и практики: Автореф. дис. ... д-ра юрид. наук: 12.00.03 / А.В. Волков. - М., 2010. - 53 с.

տիվ իրավունքի չարաշահում» և «իրավունքի (մասնավորապես՝ լիազորության) չարաշահում» հասկացությունները² առաջացնելով անորոշություն իրավական վարքագծի նշված տեսակների տարբերակման հարցում: Որոշներն էլ՝ ընդգծում են, որ այն արարքները, որոնք անվանվում են «իրավունքի չարաշահում», կատարվում են իրավունքի սահմաններից դուրս³, ինչն ինքնին իրավախախտում է և այդ տրամաբանությամբ իրավունքի չարաշահման ձևով ինքնուրույն ինստիտուտի անհրաժեշտությունը բացակայում է: Ս. Ի. Բրատուսի դիտարկմամբ՝ եթե չարաշահում ենք անվանում այն դեպքերը, երբ խեղվում է իրավունքի սոցիալական նշանակությունը, սա պետք է համարել օրենքից նահանջ՝ իր բոլոր հետևանքներով⁴:

Հետազոտման համար սկզբունքային համարվող հասկացությունների (սուբյեկտիվ իրավունքի չարաշահում, հանրային իրավական լիազորության չարաշահում) տարանջատման հարցը կներկայացվի այլ աշխատանքի շրջանակներում՝ պայմանավորված սույն գիտական հետազոտության առավել նեղ առարկայով: Սակայն ընդհանուր մոտեցումն այնպիսին է, որ առաջինը վերաբերում է անձերի կողմից իրենց սուբյեկտիվ իրավունքների այնպիսի իրացմանը, որը հակասում է վերջիններիս էությանը, մյուսը՝ իրավասու սուբյեկտների կողմից հանրային իրավական լիազորությունների չարաշահման ձևով իրավախախտումների կատարմանը:

Նկատենք, որ քրեական դատավարական իրավունքի շրջանակներում ևս առկա է սուբյեկտիվ դատավարական իրավունքների չարաշահման հնարավորությունը⁵: Ոլորտի ներկայացուցիչների հետազոտությունները⁶ հիմ-

² Տե՛ս՝ Самойлова М. В. Право личной собственности граждан СССР: авт. дис. ...канд. юр. наук. Л., 1965. С. 11. Трубникова Т.В. Злоупотребление правом в уголовном процессе: критерии и пределы вмешательства со стороны государства / Вестник Томского государственного университета. Право. 2015. №3 (17) С. 69.

³ Տե՛ս՝ Агарков М. М. Проблема злоупотребления правом в советском гражданском праве // Известия АН СССР: отделение экономики и права. 1946. № 6. С. 427.

⁴ Տե՛ս՝ Братусь С. И. О пределах осуществления гражданских прав // Правоведение. 1967. N4. С. 31.

⁵ Տե՛ս՝ Бержель Ж.Л. Общая теория права / Под. общ. ред. В.И. Даниленко / Пер. с фр. — М.: Издательский дом NOTABENE 2000. С. 445.

⁶ Տե՛ս՝ Баев О. Я. Злоупотребление правом как уголовно-процессуальная категория // Вестник ВГУ. Серия «право». 2013 N 2 (16). С. 336-349; **Даровских О. И. Злоупотребление правом в уголовном судопроизводстве России : авт. дисс. ... канд. юрид. наук.** Челябинск,

նականում իրականացվել են մասնավոր իրավունքի գիտության ձեռքբերումների հիման վրա⁷: Ընդհանուր մոտեցումն այնպիսին է, որ սուբյեկտիվ (դատավարական) իրավունքների չարաշահման և (կամ) վերջինիս արգելքի ինստիտուտների վերաբերյալ հետազոտությունների անհրաժեշտությունը պայմանավորված է դատավարության մասնավոր սուբյեկտների (մեղադրյալ, կասկածյալ, պաշտպան և այլն) դատավարական իրավունքների աճով⁸: Անշուշտ, իրավունքների աճն իրավական պետության ձեռքբերումներից է, սակայն զուգահեռ տեղին է ընդգծել *իրավահարաբերության մասնակիցների սոցիալական ակտիվության հանգամանքը*՝ կապված դատավարական սուբյեկտիվ իրավունքների իրականացման և պաշտպանության հետ⁹, որոնց ուղիղ համեմատական աճելու են նաև սուբյեկտիվ իրավունքների չարաշահման դեպքերը: Այդ իսկ պատճառով քրեական դատավարության գիտությունը, օրենսդրությունը և դատական պրակտիկան սկսեցին մշակել քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ դոկտրինալ մոտեցումներ և սահմանել պոզիտիվ կարգավորումներ:

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինստիտուտի պոզիտիվ ճանաչման վերաբերյալ այլ պետությունների փորձը: Առանձին պետությունների համապատասխան օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի ինստիտուտը, առանձին

2013. -26 с; Андреева О. И. Некоторые аспекты вопроса о пределах свободы поведения личности в российском уголовном процессе // Вестник Том. Гос. университета. 2006 N 292-1. С. 54-56.

⁷ Տե՛ս՝ Трубникова Т. В. Злоупотребление правом в уголовном процессе: критерии и пределы вмешательства со стороны государства // Вестник Том. гос. университета. Право 2015 N3 (17). С. 65-78.

⁸ Տե՛ս՝ Даровских О. И. Злоупотребление правом в уголовном судопроизводстве: понятие и признаки/Вестник Южно-Уральского государственного университета. Серия: Право 2012 № 43, С. 23.

⁹ Տե՛ս՝ http://www.court.am/files/news/2151_am.pdf, http://www.court.am/files/news/2457_am.pdf, http://www.court.am/files/news/2864_am.pdf, http://www.court.am/files/news/3388_am.pdf, http://www.court.am/files/news/3788_am.pdf, http://www.court.am/files/news/4205_am.pdf. Մանրամասն տե՛ս՝ մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտերի կատարման հետ կապված ընդհանուր իրավասության առաջին ատյանին ուղղված միջնորդությունների թվաքանակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

դեպքերում նույնիսկ ինքնուրույն սկզբունքի տեսքով, ամրագրում է ստացել ոչ միայն քրեական դատավարության ոլորտը կարգավորող ակտերում, այլև՝ սահմանադրություններում: Այսպես, Շվեյցարիայի Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «պետական մարմինները և մասնավոր անձինք պետք է գործեն բարեխղճորեն»¹⁰: Սահմանադրական նման պահանջը պարտավորեցնում է սուբյեկտիվ իրավունքի կրողին (այս դեպքում ի նկատի ունենք հոդվածում նշված սուբյեկտներից մասնավոր անձանց) պետության հետ հարաբերություններում (հանրային իրավական հարաբերություններ) և միմյանց միջև հարաբերություններում գործել բարեխղճորեն: Նման սահմանադրական լուծումները չեն կարող ինքնանպատակ լինել: Մասնավորապես՝ Շվեյցարիայի քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հարգանքը մարդու արժանապատվության նկատմամբ և արդարության պահանջները» վերստառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետը սահմանում են համապատասխանաբար բարեխղճության (the principle of good faith) և իրավունքների չարաշահման արգելքի սկզբունքը (prohibition abuse of rights)¹¹: Հատկանշական է, որ Շվեյցարիայի քր. դատ. օր.-ում այդպիսի նորմի սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել դատավարական իրավունքների չարաշահման դեպքերի վերաբերյալ դատական երկարամյա պրակտիկայի վերլուծությամբ¹²: Իսկ, օրինակ, ԳՖՀ քր. դատ. օր.-ում, պաշտպանության իրավունքի չարաշահման նախականիման անհրաժեշտությունից ելնելով, ամրագրված է մեկ մեղադրյալի իրավունքների պաշտպանությանը մասնակցող փաստաբանների առավելագույն թվաքանակը սահմանափակող նորմ¹³: Առանձին պետություններում, որոնցում բացակայում են չա-

¹⁰ 2015 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունքում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի վերաբերյալ իրավակարգավորում սահմանվեց նաև ՀՀ Սահմանադրությամբ: Չնայած հոդվածի ծավալային անորոշությանը, որի մասին կիսովի այլ աշխատանքի շրջանակներում, դրա ամրագրումը լրջագույն քայլ էր հիմնախնդիրը սահմանադրական կարգավորման դաշտ բերելու իմաստով:

¹¹ St' u` Criminal Procedure Code of October 5, 2007 (status as of July 1, 2014) http://www.wipo.int/wipolex/ru/text.jsp?file_id=343019 (16.01.2018)

¹² St' u` Piquerez G., Macaluso A. Suisse. Zurich; , 2011. P. 146 - 147.

¹³ St' u` Баев О. Я., Баев М. О. Злоупотребление правом в досудебном производстве по уголовным делам. - М.: Изд. Проспект, 2014. С. 47-48.

րաշահման արգելքի վերաբերյալ կոնկրետ կարգավորումներ, պոզիտիվ մակարդակում կառուցակարգի գոյությունը հիմնականում հնարավոր է կապել այսպես կոչված *պաշտպանության իրավունքի չարաշահման արգելքի* և *վերջինիս համար իրավական հետևանքների հետ*: Այսպես՝ Բելառուսի Հանրապետության քր. դատ. օր.-ի 137-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն (միջնորդությունների քննարկման և լուծման ժամկետները)՝ «միջնորդությունը բավարարվում է, եթե այն նպաստում է քրեական գործի հանգամանքների բացմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը, քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովմանը»¹⁴: Նորմի բովանդակային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ եթե միջնորդություն ներկայացնողը, օրինակ, կչարաշահի իր այդ իրավունքը, այսինքն այդ իրավունքի իրացումը որևէ կերպ չի նպաստել միջնորդության համար վերը նշված նորմով սահմանված նպատակների իրագործմանը, ապա դատարանը նման միջնորդությունները և նրանում առկա պահանջները չի բավարարի, *ինչը և միջնորդության իրավունքի չարաշահման դեպքում նախատեսված իրավական հետևանքն է*:

Առանձին դեպքերում, պետությունները, դատական պրակտիկայի ամփոփման շրջանակներում, փորձ են կատարել որոշակիացնել սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցի շուրջ առկա դիտարկումները: Մասնավորապես, ՌԴ Գերագույն Դատարանի Պլենումի՝ «Դատարանների կողմից քրեական դատավարության ընթացքում պաշտպանության իրավունքի ապահովման վերաբերյալ օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին» որոշման մեջ ընդգծել է, որ. «չպետք է համարել դատական պաշտպանության իրավունքի խախտում, երբ մեղադրյալի կամ նրա պաշտպանի միջնորդության իրավունքի մերժումը կամ այլ իրավունքների սահմանափակումը պայմանավորված են վերջիններիս կողմից իրենց իրավունքներից ակնհայտ անբարեխիղճ օգտվելու հետ՝ ի վնաս վարույթի այլ մասնակիցների շահերի»¹⁵:

¹⁴ St' u՝ <http://kodeksy.by/ugolovno-processualnyy-kodeks/skachat> (05.11.2018).

¹⁵ St' u՝ Постановление пленума верховного суда российской федерации № 29 от 30 июня 2015 г . О практике применения судами законодательства, обеспечивающего право на защиту в уголовном судопроизводстве. <https://www.genproc.gov.ru/upload/iblock/fe9/21970125-115416211-115420134.pdf> (16.01.2018)

Ինչպես տեսնում ենք, վերը նշված ձևակերպման մեջ բացակայում է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման վերաբերյալ ուղղակի նշում: Նկատենք, որ Պլենումի իրավական դիրքորոշման մեջ տրված չէ այն հարցի պատասխանը, թե ի՞նչ է սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը: Սակայն փաստաթղթի համապատասխան դրույթի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Գերագույն Դատարանը կարծես թե ակնարկում է վարքի նման դրսևորումները որպես քրեադատավարական խախտում որակելու օգտին, և ինչպես արդարացիորեն ընդգծում է Լ. Վ. Գոլովկոն՝ քրեադատավարական հարաբերություններում պաշտպանության իրավունքի չարաշահման արգելքի ճանաչմանը¹⁶:

Ցավոք, «սուբյեկտիվ իրավունքի չարաշահման», «վերջինիս արգելքի» և, վերջապես, այս համատեքստում «քրեադատավարական բարեխղճության» վերաբերյալ պոզիտիվ կարգավորումները և դոկտրինալ մոտեցումները բավականին քիչ են¹⁷:

Եթե փորձենք համակարգել հիմնախնդրի վերաբերությամբ այլ պետությունների նորմատիվ դաշտը, կարելի է արձանագրել, որ դրանք բաժանվում են երկու խմբի՝ պետություններ, որոնցում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքն ուղղակի ամրագրում ունի սկզբունքի տեսքով (օրինակ՝ Շվեյցարիա) և պետություններ, որոնցում գոյություն ունեն հիմնահարցի հետ այս կամ այն կերպ աղերս ունեցող առանձին նորմեր (Գերմանիա, ՌԴ, Ճապոնիա, Բելառուս և այլն):

Հիմնախնդիրը հայկական քրեական դատավարության իրավունքում: Հատկանշական է, որ ՀՀ-ն դասվում է 2-րդ խմբի պետությունների շարքին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քր. դատ. օր.-ում դատավարական իրավունքների չարաշահման արգելքի վերաբերյալ հատուկ նորմերը բացակայում են՝ նպատակահարմար է հիմնահարցին անդրադառնալ դատական

¹⁶ St' u` Курс уголовного процесса, 2-е издание, исправленное/ Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. - М.: Статут, 2017. С. 373.

¹⁷ St' u` Каримова С. С. Категория «процессуальная добросовестность» в уголовном судопроизводстве // Научно-методический электронный журнал «Концепт». – 2016. – Т. 15. – С. 656–660. – URL: <http://e-koncept.ru/2016/96039.htm>. (05.11.2018).

սանկցիաների ինստիտուտի և դրանց կիրառման առանձնահատկությունների լույսի ներքո¹⁸: Մասնավորաբար, ՀՀ քր. դատ. օր.-ի «**Դատական սանկցիաները և դրանց կիրառման ընդհանուր կարգը**» վերտառությամբ 314.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված հիմքերով դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու սանկցիաներ» (դատական սանկցիա¹⁹): Նկատենք, որ քր. դատ. օր.-ի դատական սանկցիաները, դրանց կիրառման ընդհանուր կարգը (հոդված՝ 314.1), սանկցիաների՝ օրենքով նախատեսված առանձին տեսակների կիրառման առանձնահատկություններն (հոդվածներ՝ 314.2;314.3) ամրագրված են ՀՀ քր. դատ. օր.-ի «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ 9-րդ բաժնում: Այդ տրամաբանությամբ

¹⁸ Իրավաբանական գրականության մեջ դատավարական սուբյեկտիվ իրավունքների չարաշահման դեպքերում վարույթն իրականացնող մարմինների կողմից սանկցիաների կիրառման դեմ հանդես եկող գիտնականներն անհասկանալիորեն բերում են այն փաստարկը, որ եթե այս կամ այն դատավարական իրավունքը տրամադրվել է օրենսդրի կողմից, ապա դատարանն իրավասու չէ սահմանափակել այն (նման կարծիք է հայտնել ի.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ ՄԴ խորհրդատու Ա. Սմիրնովը ՌԴ Գերագույն Դատարանի Պլենումի՝ 30.06.2015 թվականի հիմնախնդրի հետ կապված հայտնի № 29 որոշման կապակցությամբ: Տե՛ս՝ [/http://xn---7sbbaj7auwnffhk.xn--p1ai/article/15307](http://xn---7sbbaj7auwnffhk.xn--p1ai/article/15307) (17.01.2018): Անշուշտ, դատարանը չի կարող կամայական, առանց օրենսդրական համապատասխան կարգավորումների կիրառել դատավարական իրավունքների սահմանափակման ձևով սանկցիաներ: Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման համար համապատասխան իրավական հետևանքներ առաջացնող սանկցիաների նախատեսման և դրանց կիրառման իրավական հնարավորության օրենքով սահմանելու դեպքում է հնարավոր խոսել կոնկրետ դեպքում սանկցիաների՝ օրինակ, դատարանի կողմից (և ոչ միայն) կիրառման մասին: Առանց օրենսդրական նման լուծումների՝ նման «գործընթացները» կլինեն կամայական և հակասահմանադրական:

¹⁹Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 3, Հեղ. Խումբ: Հ 247 գիտ. Խմբագիր Ա. Ղամբարյան, Եր.: «Լուսաբաց հրատարակչություն» 2017: *Պետք է տարբերակել «դատական սանկցիա» և «դատավարական սանկցիա» հասկացությունները: Դատական սանկցիան կիրառում է դատարանը՝ դատական վարույթի ընթացքում, իսկ «դատավարական սանկցիա» հասկացությունն ավելի լայն է, այն ընդգրկում է նաև մինչդատական վարույթի ընթացքում քրեական հետապնդման մարմինների կիրառած համապատասխան ներգործության միջոցները:*

դրանք վերաբերում են առաջին ատյանի դատարանի կողմից կիրառվող դատական սանկցիաներին, դրանց կիրառման ընդհանուր կարգին և առանձնահատկություններին: Նշված հանգամանքը բացառում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից քր. դատ. օր.-ի համապատասխան հոդվածների հիման վրա դատական սանկցիաների կիրառության հնարավորությունը²⁰: Դատական նշված ատյանները դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելու, ինչպես նաև դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով սանկցիաներ կարող են կիրառել՝ հիմք ընդունելով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ գլխի իրավակարգավորումները: Հատկանշական է, որ նշված գլխի 47-50-րդ հոդվածները՝ որպես ընդհանուր նորմեր, վերաբերում են ոչ միայն ՀՀ վերաքննիչ և ՀՀ վճռաբեկ դատարաններին, այլ նաև՝ առաջին ատյանի դատարանին, եթե վերջինիս կողմից դատական սանկցիաներ կիրառելու առանձնահատկությունները սահմանված չեն ՀՀ քր. դատ. օր.-ով՝ որպես դատական այդ ատյանի կողմից դատական սանկցիաների և դրանց կիրառման հետ կապված հատուկ նորմեր:

Նկատենք, որ դատարանի կողմից սանկցիայի կիրառման նպատակը և հիմքերը սահմանված են «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, որի 47-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն դատական սանկցիա կիրառելու նպատակը դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելն է, ինչպես նաև դատական նիստի բնականոն ընթացքն ապահովելը: Հոդվածի 2-րդ մասի համաձայն դատական սանկցիա կիրառելու հիմքերն են՝ *դատավարական իրավունքների չարաշահումը*, դատավարական պարտականությունների չարամտորեն չկատարելը, դատարանի կարգադրություններին չենթարկվելը կամ որևէ այլ կերպ դատական նիստի կարգը խախտելը, դատական նիստի դահլիճում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը²¹:

²⁰ Իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետներից մեկի համաձայն 41-րդ գլխում նախատեսված դատական սանկցիաների վերաբերյալ իրավակարգավորումներն ունեն ընդհանուր բնույթ և կարող են կիրառվել նաև Վճռաբեկ դատարանի կողմից: Տե՛ս՝ Սուջյան Տ. Հ. Վճռաբեկությունը որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում/ Իրավաբանական գիտությունների թեկնածուի ատենախոսություն, Երևան 2016, էջ՝ 139.

²¹ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի նշված կարգավորումները վերաբերվում են ինչպես առաջին ատյանի ընդհանուր իրավասության, այնպես էլ վերաքննիչ դատարանների և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սանկցիաների

Հատկանշական է, որ օրենսդիրը օրենքով նախատեսված սանկցիաների կիրառման ձևով իրավական հետևանքը հնարավոր է համարում, եթե դատավարական իրավունքների չարաշահման արդյունքում վնասվելու են կամ կարող են վնասվել դատական իշխանության հեղինակությունը, նաև դատական նիստի բնականոն ընթացքը: Ինչ վերաբերում է դատական տարբեր ատյանների կողմից դատավարական իրավունքների չարաշահման դեպքում կիրառվող սանկցիաների տեսակներին, ապա **օրենսդիրը սահմանել է տարբերակված մոտեցումներ**: Մասնավորաբար՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրավասու են դատավարական իրավունքների չարաշահման համար կիրառել **նկատողության, դատական նիստերի դահլիճից հեռացնելու, դատական տուգանքի** ձևով սանկցիաներ (քր. դատ. օր.՝ 314.1-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ վերաքննիչ դատարանները և Վճռաբեկ դատարանը՝ **միայն նկատողության և դատական նիստի դահլիճից հեռացնելու** («ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք՝ հոդված 48): Ինչպես տեսնում ենք՝ գործող օրենսդրությամբ վերաքննիչ դատարանների և Վճռաբեկ դատարանի կողմից կիրառվող դատական սանկցիաների շրջանակից բացակայում է **դատական տուգանքի** ինստիտուտը: Ավելին, ՀՀ քր. դատ. օր.-ը, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարաններին, դատական օրենսգրքի կարգավորումներով, տրված չէ դատական տուգանքի ձևով **սանկցիա կիրառելու լիազորություն**, 314.3 հոդվածի 3-րդ մասում անհասկանալի տրամաբանությամբ սահմանել է «... նաև վերաքննիչ դատարանի կողմից դատական տուգանք կիրառելու մասին որոշման բողոքարկման ժամկետները»: Դատական սանկցիաների շրջանակի հետ կապված օրենսդրի վերը նշված տարբերակված մոտեցումը չի կարող ամբողջությամբ երաշխավորել առնվազն վերաքննիչ դատարանների և Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը և դատական իշխանության հեղինակությունը, այսինքն այն նպատակները, որոնց ապահովման համար նախատեսված են դատական սանկցիաները: Ավելի, եթե հաշվի առնենք, որ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ «**Դատական նիստերի դահլիճից հեռացում չի կիրառվում** վարույթին մասնակցող դատախազի, **որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի**, ինչպես նաև տվյալ

կիրառման նպատակին, հիմքերին, պայմաններին և առանձին սանկցիաների կիրառման առանձնահատկություններին:

պահին ցուցմունք տվող վկայի և օրենքով նախատեսված այլ անձանց նկատմամբ», ապա ստացվում է, որ վերաքննիչ դատարանների և Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությանն ըստ էության խոչընդոտող դատավարական իրավունքների չարաշահման դեպքերում միակ գործուն մեխանիզմը (օրինակ՝ *որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ*) մնում է նկատողության ձևով դատական սանկցիայի կիրառման հնարավորությունը, որն ունի կանխարգելիչ գործառույթ: Այս իմաստով, կարծում ենք, որ վերաքննիչ դատարանների և Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման և, առհասարակ, դատական բոլոր առյանների կողմից դատական սանկցիաների միատեսակ շրջանակի սահմանման նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածում, որպես ինքնուրույն դատական սանկցիա, նախատեսել *դատական տուգանքը*:

Հատկանշական է, որ քր. դատ. օր.-ը (314.1 հոդվածի 3-րդ մաս) սահմանում է նաև դատական սանկցիայի ենթարկված անձի իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիք, որը դրսևորվում է դատական սանկցիա կիրառելիս անհրաժեշտության դեպքում վերջինիս արտահայտվելու իրավունքի տրամադրումով: Այս պարագայում օրենսդիրը սահմանել է արտահայտվելու իրավունքը (կիրառվող սանկցիայի վերաբերյալ արտահայտվելու իրավունք) չարաշահելու արգելքի գործիքակազմ: Մասնավորապես՝ քր. դատ. օր.-ի 314.1 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «եթե դատական սանկցիայի ենթակա անձը չարաշահում է սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավունքը և արտահայտվելու իրավունքն օգտագործում է դատական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարքը շարունակելու կամ նոր արարք կատարելու համար, ապա դատավորն իրավասու է այդ անձի նկատմամբ կիրառելու առավել խիստ դատական սանկցիա»: Հատկանշական է, որ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 49-րդ հոդվածի համաձայն դատական նիստերի դահլիճում ներկա անձի նկատմամբ դատական սանկցիա կիրառելիս դատարանը, որպես կանոն, ապահովում է նրա *լսված լինելու իրավունքը*: Այն, որ ՀՀ քր. դատ. օր.-ում օգտագործվող «արտահայտվելու իրավունքը» և «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում օգտագործվող «լսված լինելու իրավունքը» հասկացությունները պետք է մեկնաբանել որպես նույնական՝ կասկած չի հարուցում, սակայն անպատասխան

է մնում այն հարցի պատասխանը, թե ի՞նչպես պետք է վարվի, օրինակ, Վերաքննիչ դատարանը, երբ անձը չարաշահում է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «լսված լինելու իր իրավունքը»: Հիմնավոր համարելով «արտահայտվելու իրավունքի» (կիրառվող սանկցիայի վերաբերյալ արտահայտվելու իրավունք) չարաշահման դեպքում քր. դատ. օր.-ով նախատեսված դատարանի՝ առավել խիստ սանկցիա կիրառելու լիազորությունը, կարևորելով դատական բոլոր ատյաններում դատական սանկցիաների կիրառման միատեսակ չափանիշների ապահովման տրամաբանությունը և 49-րդ հոդվածի իմաստով «լսված լինելու իրավունքի» չարաշահման համար դատարանին՝ դատավարության մասնակցի վերաբերությամբ առավել խիստ սանկցիա կիրառելու իրավաբանական հնարավորության տրամադրումը՝ անհրաժեշտ է նախ՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածում որպես ինքնուրույն դատական սանկցիայի տեսակ նախատեսել տուգանքը (ինչի մասին այլ հիմնավորմամբ և այլ ենթատեքստում արդեն խոսվել է) և 49-րդ հոդվածում Դատարանի համար սահմանել սանկցիայի ենթարկված անձի կողմից լսված լինելու իր իրավունքի չարաշահման դեպքում առավել խիստ սանկցիա կիրառելու լիազորություն²²:

²² Դատավարական իրավունքների չարաշահման հարցը պետք չէ կապել միայն դատարանում դրա հնարավորության հետ: Նշված նորմերի համակարգային ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ խոսքը գնում է ոչ թե դատավարական, այլ դատական սանկցիաների մասին է, որպիսի հանգամանքը կապված է նշված հոդվածներում սանկցիաներ կիրառելու լիազորությունը օրենքով դատարանին վերապահելու հետ: Արդարացված ենք համարում իրավաբանական գրականության մեջ արտահայտած այն տեսակետը, որ մինչդատական վարույթի ընթացքում ևս դատավարության մասնավոր մասնակիցների կողմից կարող են չարաշահվել իրենց դատավարական իրավունքները: Ա. Ղամբարյանի դիտարկմամբ նշված սուբյեկտների շարքում հատկապես «ակտիվ են» պաշտպանները: *(Այս մասին մանրամասն տե՛ս նաև՝ Ղամբարյան Ա.Ս. Մինչդատական վարույթի բարեփոխումները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, 2010, էջեր 68-71. Гамбарян А. С. Израелян III Ю. Ограничение осуществления права как мера уголовно-процессуальной ответственности // Судебная власть и уголовный процесс. 2016, № 2. С. 137-142.)* Վերջիններս, օգտագործելով իրենց դատավարական սուբյեկտիվ իրավունքները, վնաս են հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին: ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ սկզբունքորեն այլ մոտեցում է առկա ՀՀ քր. դատ. նոր օր.-ի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ): Նկատենք, որ «Իրավունքի չարաշահման արգելքն» առաջին անգամ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով սահմանվել է որպես քրեական վարույթի սկզբունք: Նախագծի՝ «Քրեական վարույթի սկզբունքները» վերտառությամբ 3-րդ գլխի 29-րդ հոդվածի («Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը») 2-րդ մասի համաձայն՝ *«Արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին»*: *Իրավունքների չարաշահումը թույլ տված* կամ պարտականությունները չարամտորեն չկատարած անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել նրա վարքագծին համաչափ դատավարական սանկցիա, *եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը (29-րդ հոդվածի 3-րդ մաս)*:

Ստացվում է, որ իրավունքը չարաշահելու դեպքում դատավարական սանկցիա կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտը, տվյալ վարքագիծը (միջնորդություն հարուցելը, բացարկ հայտնելը, պաշտպանից հրաժարվելը և այլն) կարող է որակել որպես իրավունքի չարաշահում, երբ այն վնաս է հասցնում *այլ անձանց կամ արդարադատության շահերին, սակայն չկիրառել*

Սահմանադրությանը և օրենքներին»: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում թվարկված են փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու հիմնական ձևերը (փաստաբանին օրենսդրությամբ տրված իրավունքների ձևով)՝ նույն հոդվածում արձանագրելով, որ փաստաբանը փաստաբանական գործունեություն իրականացնելիս ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները: Ակնհայտ է, որ իրավական նման լուծումները նպատակ ունեն ապահովելու պաշտպանյալին իրավական օգնություն ցույց տալու լրիվությունը: Իրավական պետության իրավական կարգավորման՝ թույլատրող եղանակի միջոցով սահմանված իրավանորմը չպետք է ստեղծի այնպիսի տպավորություն, որ դատավարության համապատասխան սուբյեկտներն իրենց դատավարական իրավունքներն իրացնելիս ունեն անսահմանափակ ազատություն, ինչը և սահմանափակված է սահմանադրական իմաստով այլոց իրավունքներով, սահմանադրությամբ և օրենքներով սահմանված նպատակներով: Այս իմաստով, թերևս, ի նկատի պետք է ունենալ այլ անձանց կամ արդարադատության շահերի պաշտպանությունը:

սանկցիա, քանզի, ինչպես երևում է հոդվածի 3-րդ մասի ձևակերպումից, իրավունքի չարաշահում թույլ տված անձի նկատմամբ կարող է կիրառվել նրա վարքագծին համաչափ դատավարական սանկցիա, եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը: Այսինքն, Նախագծով սանկցիայի կիրառումն ամեն դեպքում կապվում է վարույթի բնականոն ընթացքը վտանգված լինելու հանգամանքի հետ: Դրա մասին է վկայում Նախագծի 141-րդ հոդվածի իրավակարգավորումը, համաձայն որի՝ «Դատավարական սանկցիայի կիրառումը պետք է նպատակ հետապնդի ապահովել վարույթի բնականոն ընթացքը»: Հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք այնպիսի իրավիճակ, երբ վարքագիծը կգնահատվի որպես իրավունքի չարաշահում, որովհետև այն վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին, սակայն չվտանգի վարույթի բնականոն ընթացքը: Հատկանշական է, որ Նախագծի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «նախատեսված դատավարական սանկցիան (իրավունքի իրականացման սահմանափակման ձևով) կարող է կիրառվել միայն հետևյալ իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում»: Իսկ այդպիսի իրավունքներ (ձևեր) են՝ միջնորդություն հարուցելը, բացարկ հայտնելը, վարույթի նյութերին կցելու և հետագոտելու համար ապացույցներ ներկայացնելը, վարույթի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելը, բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը, պաշտպանից հրաժարվելը: Նման իրավիճակներ կարող են առաջանալ, օրինակ, վարույթ իրականացնող մարմիններին պարբերաբար նույնաբովանդակ միջնորդություններ ներկայացնելու դեպքում: Հնարավոր է նաև տարբեր բովանդակությամբ, սակայն գործին չառնչվող հարցերի վերաբերյալ պարբերաբար միջնորդություններ ներկայացնելը: Կարծում ենք, որ եթե սանկցիա կիրառող սուբյեկտը, նման ձևերով իրավունքն իրացնելու դեպքում, վարքագիծը կգնահատի որպես իրավունքի չարաշահում (հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի պարագայում քննարկման ենթակա առարկայի շրջանակներում իրավական նշանակություն ունի դատավարական իրավունքների պարբերաբար նպատակին հակառակ իրացնելը), ապա չի կարող լինել այնպիսի իրավիճակ, երբ արդեն այլ անձանց կամ արդարադատության շահերին վնաս հասցրած վարքագիծը (չարաշահում գնահատված վարքագիծը) չվտանգի վարույթի բնականոն ընթացքը: Ստացվում է, որ Նախագծի 29-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումը՝ «եթե այն չկիրառելը կարող է վտանգել

վարույթի բնականոն ընթացքը», կոնկրետ իմաստային բեռ չի կրում: Չարաշահման այս ձևերը ընդամենը միջոց են, որոնցով կարելի է վնասել այլ անձանց կամ արդարադատության շահը: Կարծում ենք, որ այլ անձանց կամ արդարադատության շահերին վնասելով պետք է վնասված համարվի նաև վարույթի բնականոն ընթացքը: Հակառակ պարագայում կստացվի, որ կարելի է իրավունքը պարբերաբար չարաշահել, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի բնականոն ընթացքը վնասված լինելը վարույթն իրականացնող մարմնի գնահատման հարց է, և չենթարկվել համապատասխան սանկցիաների:

Ինչպես նշվեց, իրավունքի իրականացման սահմանափակման ձևով սանկցիա կիրառելու համար հիմք է նաև *պաշտպանից հրաժարվելու իրավունքը պարբերաբար չարաշահելը (143-րդ հոդված, մաս 2, կետ 6)*: Նախագծի մեկ այլ՝ **«պաշտպանից հրաժարվելը»** վերտառությամբ 47-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **«Նոր պաշտպանից հրաժարվելու՝ մեղադրյալի կամ արտահայտությունը պարտադիր չէ վարույթն իրականացնող մարմնի համար, եթե մեղադրյալը *ակնհայտ չարաշահում է փաստացի նոր* պաշտպանից հրաժարվելու իր իրավունքը**: Այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինն իր որոշմամբ չի ընդունում պաշտպանից հրաժարվելը: Փաստացի ստացվում է, որ վարույթն իրականացնող մարմնի վրա դրված է իրավունքի իրացման սահմանափակման ձևով սանկցիա կիրառելու պարտականություն, եթե արձանագրվում է *ակնհայտ չարաշահման փաստը*: Համակարգային վերլուծության արդյունքում ստացվում է, որ կիրառվում է այն նույն սանկցիան, որը կարելի էր կիրառել *պաշտպանից հրաժարվելու իրավունքը պարբերաբար չարաշահելու* դեպքում (143-րդ հոդված, մաս 2, կետ 6): Սակայն անհրաժեշտ է նկատել, որ այստեղ (47-րդ հոդվածի իմաստով) խոսքը ոչ թե նշված *իրավունքը պարբերաբար չարաշահելու*, այլ՝ *ակնհայտ չարաշահելու* մասին է: Փաստացի 47-րդ հոդվածի իմաստով առաջին հայացքից պարբերականության խնդիր չի կարող դրվել այն տրամաբանությամբ, որ խոսքը նոր պաշտպանից թեկուզ մեկ անգամ հրաժարվելու մասին է, ինչն ուղղակի չի կարող համարվել պարբերաբար հրաժարում, այլ Նախագիծը նման հրաժարումը չընդունելու հիմք է համարում չարաշահման ակնհայտությունը: Այսինքն, ստացվում է, որ 47-րդ հոդվածի իմաստով (ակնհայտ չարաշահումը) իրավունքի նման սահմանափակումը և 143-րդ հոդվածի իմաստով (պարբերաբար չարաշահումը) կիրառվող դատավարական սանկցիան այլ անձանց

կամ արդարադատության շահերի ապահովման համար նախատեսված տարբեր գործիքակազմեր են: Կարծում ենք, որ Նախագծի 143-րդ հոդվածով սահմանված իրավական հետևանքի առաջացման համար օրենքով նախատեսված դատավարական սուբյեկտիվ իրավունքների չարաշահման փաստակազմի **պարբերաբար լինելու հատկանիշը** միայն կարող է կոնկրետ դատավարական իրավունքի չարաշահման փաստն **ակնհայտ** դարձնել: Նախագծի ոչ 47-րդ և ոչ էլ 143-րդ հոդվածների պարագայում խոսքը չի կարող լինել կոնկրետ պաշտպանից (այսինքն կոնկրետ անձից) հրաժարվելու մասին: Չնայած 47-րդ հոդվածի իմաստով «ակնհայտ» տերմինի օգտագործումը կարող է տալ նման ենթադրություն անելու հնարավորություն, սակայն կարծում ենք, որ պրակտիկայում կոնկրետ պաշտպանից (կոնկրետ անձից) հրաժարվելու դեպքը չարաշահում որակելը բարդագույն խնդիր է վարույթն իրականացնող մարմնի համար: Բացի դրանից նախագծային կարգավորումների իմաստով, երբ խոսքը գնում է նոր պաշտպանից հրաժարվելու խնդրի մասին, ակնհայտ է, որ այդ նոր պաշտպանից առաջ արդեն եղել է պաշտպան: Այսինքն՝ այս դեպքում ևս մենք գործ ունենք պարբերականության խնդրի հետ: Համադրելով վերը նշված բովանդակային իմաստով երկու՝ դատավարական նույն իրավունքների չարաշահման համար կիրառվող իրավական հետևանքները և տերմինաբանական միասնականությունն ապահովելու նպատակներից ելնելով՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է 47-րդ հոդվածը ձևակերպելիս խուսափել «ակնհայտ» եզրույթի օգտագործումից՝ առավել որոշակի համարելով 143-րդ հոդվածում որպես ինքնուրույն հատկանիշ նախատեսված «պարբերաբար» եզրույթը:

Սկզբունքորեն կողմ լինելով իրավունքի պարբերաբար չարաշահման դեպքերում սահմանափակումների նախատեսման և կիրառման պրակտիկային՝ կարծում ենք, որ առանձին իրավիճակներում պարբերականությունը որպես գնահատման չափանիշ դիտարկելը կարող է չապահովել այն նպատակները, որի համար կիրառվում են օրենքով նախատեսված սանկցիան: Հատկանշական է, որ Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասը **արգելում է իրավունքի չարաշահումը** (դրա մասին է վկայում նաև Նախագծի 141-րդ հոդվածի 1-ին մասը), իսկ 143-րդ հոդվածի 2-րդ մասը հստակեցնում է, որ ոչ թե **մեկանգամյա չարաշահումն է** առաջացնում դատավարական իրավունքների իրականացման՝ ժամանակային կամ քանակական պայմանների սահմանափակման ձևով դատավարական սանկցիա, այլ՝ **պարբերաբար**: Ստացվում է,

որ եթե քրեական դատավարության համապատասխան սուբյեկտը մեկ անգամ չարաշահում է իր դատավարական իրավունքը, նա չի ենթարկվի պատասխանատվության՝ նշված սանկցիայով:

Սակայն առանձին դատավարական իրավունքների չարաշահման հնարավորության մասով անհրաժեշտ է նշել, որ վարույթի ընթացքում կարող են լինել դեպքեր, երբ, օրինակ, վարույթի մասնավոր մասնակիցները, ակնհայտորեն տիրապետում են դատավարության լեզվին, սակայն չարաշահելով թարգմանչի օգնությամբ իր իրավունքներն իրականացնելու իրավաբանական հնարավորությունը, պահանջում է թարգմանիչ կամ փոխել նշանակված թարգմանչին: Ակնհայտ է, որ առանձին դեպքերում այստեղ պարբերականության խնդիր չի կարող դրվել, քանզի հնարավոր չէ ասել, թե այսօր տիրապետում եմ դատավարության լեզվին, վաղը չեմ տիրապետելու, կամ ասել՝ կարծում էի, որ իտալերենը հասկանալի կլինի, բայց արդարադատության շահերից ելնելով լավ կլինի, եթե տրամադրեք ֆրանսերեն լեզվի իմացությամբ թարգմանիչ և այլն: Կամ, օրինակ, 100 էջից բաղկացած վերաքննիչ բողոք է բերում²³: Նման իրավիճակում ստացվում է, որ, ըստ Նախագծի (սանկցիայի կիրառման իմաստով), անձը չի չարաշահում իր այդ իրավական հնարավորությունը, քանզի պետք է լինի չարաշահման պարբերականություն: Սակայն կարծում ենք, որ բերված օրինակում (երբ ակնհայտորեն տիրապետում է դատավարության լեզվին, սակայն պահանջում է թարգմանիչ, օրինակ՝ հայերենին փայլուն տիրապետող եզդու կողմից թարգմանիչ պահանջելու հանգամանքը) առկա են չարաշահման տարրեր:

Բերված օրինակում նպատակ չունենք հիմնավորելու նման իրավիճակներում ևս իրավունքի սահմանափակման ձևով սանկցիայի կիրառման հնարավորության հարցը: Սակայն, կարծում ենք, որ այս դեպքում ևս անհրաժեշտ է պետության իրավական արձագանքը: Նպատակահարմար է նման իրավիճակներում իրավունքի (ոչ պարբերաբար) չարաշահման դեպքում կիրառել Նախագծի 141-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված **նախազգու-**

²³ St' u` Архив Кустанайского городского суда. Уголовное дело № 4-181-2012.

չացման ձևով դատավարական սանկցիան, սակայն Նախագծային կարգավորումները չեն տալու նման իրավական հնարավորություն²⁴: Մասնավորապես, 141-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Իրավունքները չարաշահելու դեպքում կարող է կիրառվել միայն սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դատավարական սանկցիան (իրավունքի իրականացման սահմանափակումը): Իրավական նման կարգավորումը հնարավոր չի համարում վարույթ իրականացնող մարմնի կողմից, բացի նշված սանկցիայից, կիրառել 141-րդ հոդվածով նախատեսված որևէ այլ սանկցիա: Հաշվի առնելով այս և ոչ պարբերաբար, սակայն դատավարական իրավունքների մեկնագամյա չարաշահման հնարավորության հարցը (ակնհայտ տիրապետում է դատավարության լեզվին, սակայն պահանջում է թարգմանիչ), կարծում ենք նպատակահարմար է օրենսդրական համապատասխան կարգավորումների միջոցով հնարավոր դարձնել նման դեպքերում ոչ թե իրավունքի սահմանափակման, այլ՝ նախագուշացման՝ որպես դատավարական հատուկ սանկցիայի կիրառման ձևով իրավական հետևանքի առաջացումը: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ իրավահարաբերության սուբյեկտների վարքագծում դատավարական սուբյեկտիվ իրավունքների պարբերաբար չարաշահում արձանագրելու համար, առնվազն անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրն ամեն անգամ արձանագրել, ինչը հնարավորություն կտա դատարանին հետագայում հիմնավորել իր՝ կոնկրետ դատավարական իրավունքի սահմանափակման ձևով սանկցիայի կիրառման իրավաչափությունը՝ կոնկրետ սուբյեկտի կողմից վիճարկելու դեպքերում: Նման մեխանիզմների սահմանումն անհրաժեշտ է նաև դատավարական սուբյեկտիվ իրավունքի կրողի համար՝ իր իրավունքը վարույթն իրականացնող մարմնի ապօրինի միջամտություններից պաշտպանելու դեպքում (օրինակ, երբ մեղադրյալի կամ նրա պաշտպանի կարծիքով իրավունքի սահմանափակման ձևով դատավարական սանկցիայի կիրառելը ոչ իրավաչափ է): Հակառակն, անշուշտ, իրավական պետության գաղափարախոսությունից հետնահանջ

²⁴ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ իրավունքի չարաշահման դեպքում կիրառվել է դատական նիստի դահլիճից հեռացնելու ձևով դատավարական սանկցիա՝ չարաշահման բովանդակության մասին չարաշահողին այդ մասին մանրակրկիտ ներկայացնելուց հետո: Տե՛ս՝ Постановление ЕСПЧ по делу "Идалов против России" от 22.05.2012, жалоба N 5826/03. <http://base.garant.ru/70286620/> (17.01.18).

պետք է համարել:

Հաշվի առնելով այն, որ գործ ունենք դատավարական հարաբերությունների մասնակիցների իրավունքների հետ և այն հանգամանքը, որ դատավարական իրավունքների սահմանափակման ձևով սանկցիայի նախատեսումը կարող է առաջացնել վախ վերջիններիս կողմից իրենց դատավարական իրավունքների իրացման առումով, ինչը կհանգեցնի նրան, որ սուբյեկտները կսկսեն չօգտվել իրենց դատավարական իրավունքներից, կարծում ենք, որ արդարացված է ոչ թե առհասարակ չարաշահման, այլ, ինչպես Նախագծով է նախատեսված, հատկապես պարբերաբար չարաշահելու համար իրավունքի սահմանափակման ձևով սանկցիայի կիրառմամբ իրավական հետևանքի առաջացման հնարավորության սահմանումը:

Ի սկզբանե կարևորելով սուբյեկտիվ իրավունքի չարաշահման արգելքի վերաբերյալ օրենսդրական լուծումների անհրաժեշտությունը՝ հարկ ենք համարում նաև ընդգծել, որ այստեղ էական պատասխանատվություն է դրված նաև վարույթն իրականացնող մարմինների վրա: Խոսքը վերաբերում է դատավարական իրավունքների իրացման ձևով այս կամ այն վարքի դրսևորումները սուբյեկտիվ իրավունքի չարաշահում որակելուն: Այս իմաստով առնվազն առկա է այն փաստարկը, որ քրեադատավարական հարաբերությունների մրցակցային բնույթը (մասնավորապես դատական վարույթի ընթացքում) այնպիսին է, որ քննարկվող հիմնախնդրի վերաբերությամբ դատավարության մասնավոր սուբյեկտների կողմից իրենց իրավունքների արդյունավետ իրականացումը կարող է ստեղծել այնպիսի տպավորություն, որ խախտվում են այլ անձանց իրավունքները, շահը:

Կատարված վերլուծություններն ընդամենը հնարավորություն են տալիս բացահայտելու դատավարական իրավունքների չարաշահման արգելքի և դրա համար հնարավոր իրավական հետևանքների հիմնահարցը: Սակայն դրանք բավարար չեն սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հասկացության վերաբերյալ հստակ մոտեցում ցուցաբերելու համար: Նման իրավիճակը հատկապես լրջագույն խնդիրներ է ստեղծում դատական պրակտիկայում: Կատարված վերլուծությունները թույլ են տալիս արձանագրել, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահումն անհրաժեշտ է դիտարկել որպես սուբյեկտիվ

իրավունքի այնպիսի իրացում²⁵, որի արդյունքում բարդություններ են առաջանում ինչպես դատավարության այլ մասնավոր մասնակիցների իրավունքների իրացման հարթությունում²⁶, այնպես էլ խեղվում է օբյեկտիվ իրավունքի էությունը և գործառույթը (արդարադատության շահը, վարույթի բնականոն ընթացքը), այլ կերպ՝ սուբյեկտիվ իրավունքով պաշտպանվող շահը «կոնֆլիկտի» մեջ է մտնում դատավարության այլ մասնակիցների շահերի, քրեական արդարադատության գործառույթի հետ:

²⁵ Նախագծի 143-րդ հոդվածի բովանդակությունը ցույց է տալիս, որ ի նկատի պետք է ունենալ գործողության ձևով արարքը (միջնորդություն հարուցելը, բացարկ հայտնելը, ապացույցներ ներկայացնելը, նյութերին ծանոթանալը, տեղեկություն դուրս գրելը, բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը, պաշտպանից հրաժարվելը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ցանկը սպառնիչ է կարելի է նշել, որ Նախագծի կարգավորումների լույսի ներքո անգործությամբ չարաշահել սուբյեկտիվ դատավարական իրավունքը հնարավոր չէ: Սակայն հարկ է նկատել, որ որոշ իրավիճակներում հնարավոր ենք համարում նաև անգործությամբ սուբյեկտիվ դատավարական իրավունքի չարաշահում: Օրինակ, բավարար անհրաժեշտությամբ չի տիրապետում դատավարության լեզվին, սակայն դրա մասին իրազեկում է վարույթն իրականացնող մարմնին վարույթի միջնամասում կամ ավարտական փուլում: Այսինքն, գիտակցաբար (կամ պաշտպանի ցուցումով) չի օգտվում թարգմանչի օգնությամբ իր իրավունքներն իրականացնելու իրավաբանական հնարավորությունից²⁵: Հատկանշական է, որ նման իրավիճակները, հաշվի առնելով իրավաբանական գրականության մեջ առկա՝ սուբյեկտիվ իրավունքները պասիվ ձևով իրականացնելու հնարավորության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները (ինչը այլ գիտական աշխատանքի հետազոտման առարկա է)՝ գործ ենք ունենալու կամ անգործությամբ դատավարական իրավունքի չարաշահման փաստի, կամ սուբյեկտիվ դատավարական իրավունքից հրաժարվելու կառուցակարգերի հետ: Նկատենք, որ բերված օրինակում, վարույթի մասնակիցը, ոչ թե ինքնակամ հայտարարում է լեզվին չտիրապետելու (իրավունքի հրաժարվելու համար ունի էական նշանակություն), այլ լռում է դրա վերաբերյալ՝ նպատակ ունենալով դրա մասին հայտարարելու վարույթի ավելի ուշ փուլում՝ վարույթի ընթացքը խեղելու, ձգձգելու համար: Այս ամենը ենթադրում է, որ սուբյեկտն իր իրավունքն իրացնում է ակնհայտորեն այդ իրավունքի գործառույթին հակառակ:

²⁶ St u՝ Вепрев В. С. Основания уголовно-процессуальной ответственности: автореф. дис. ... канд. юр. наук. Челябинск, 2006. С. 20.

ПРОБЛЕМА ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ ПРОЦЕССУАЛЬНЫМИ ПРАВАМИ В СВЕТЕ РЕФОРМ УГОЛОВНО- ПРОЦЕССУАЛЬНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА.

Мурадян Манук Оганесович

*Заместитель начальника академии
образовательного комплекса полиции РА,
кандидат юридических наук, доцент,
полковник полиции*

Статья посвящена изучению проблемы злоупотребления субъективным правом в уголовно-процессуальном праве. Автор уточнил степень исследования проблемы в науке уголовно-процессуального права. Представлен также опыт других государств по закреплению института запрета на злоупотребления субъективным правом в уголовно-процессуальном законодательстве. Основная часть исследования затрагивает вопросы злоупотребления правом и его запрета в уголовно-процессуальном праве РА. Предметом исследования являются соответствующие нормы действующего уголовно-процессуального кодекса РА, а также положения проекта уголовно-процессуального кодекса.

Ключевые слова: субъективное право, злоупотребление, уголовный процесс, запрет на злоупотребление, добросовестность.

THE PROBLEM OF ABUSE OF PROCEDURAL RIGHTS IN THE LIGHT OF REFORMS OF THE CRIMINAL PROCEDURE LEGISLATION.

Muradyan Manuk

*Deputy head of Academy
of Police Educational Complex
of the Republic of Armenia
PhD in law, associate professor*

This article is aimed at discussing the issues of abuse of right in criminal procedure law. The author has clarified the degree of research of the problem in criminal procedure law science. The other states' experience on the positive regulation of the prohibition of abuse of right in criminal procedure law is presented also. The main part of research touches the issues of abuse of right and its prohibition in Criminal Procedure Law of RA. The author firstly has discussed the issues related to the Criminal Procedure Code, as well as to the Draft Criminal Procedure Code legal solutions.

Keywords: right, abuse of rights, in criminal procedure, prohibition of abuse of rights, conscientiousness.

Հոդվածը գրախոսվել է՝ 30.01.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 20.02.2019թ.

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՅԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝
«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Մեկիքսության Մարթա

*ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության
Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով
և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ,
Հայ-Ռուսական համալսարանի "Երավունքի
և քաղաքականության ինստիտուտի" Քրեական իրավունքի
և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ,
ոստիկանության փոխգնդապետ*

Ընտանիքը հասարակության զարգացման փուլերում սոցիալական կառուցվածքի անհրաժեշտ տարրն է հանդիսացել: Ընտանիքը ցանկացած քաղաքակրթության գոյատևման անհրաժեշտ պայմանն է, պետականության առաջնային հիմքը: Այս կապակցությամբ ընտանիքի պաշտպանությունն իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով պայմանավորված է ոչ միայն մասնավոր անձանց շահերով, այլ նաև պետության ընդհանուր շահերով: Ընդ որում, օրենսդրի խնդիրը միտված է ոչ թե առանձին անձի որևէ շահի ապահովմանը, այլ ընտանիքի՝ որպես կարևորագույն սոցիալական ինստիտուտի ձևավորման, նրա կայուն զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների պաշտպանությունն է:

Ընտանիքում բռնություն է համարվում օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքները, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:¹

¹ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման

Ներկայումս, ոչ օրենսդրական հարթակում, ոչ էլ գիտական ասպարեզում ընտանիքում բռնության հասկացության հիմնարար և միասնական սահմանումը բացակայում է: Ընտանիքում բռնությունը որպես հակասոցիալական երևույթ ուսումնասիրվել է տարբեր ոլորտների՝ սոցիոլոգիայի², մանկավարժության³, հոգեբանության⁴, իրավագիտության⁵ մասնագետների կողմից:

Ս.Ի.Օժեգովը «բռնությունը» սահմանում է որպես ֆիզիկական ուժի գործադրում ինչ-որ անձի նկատմամբ, հարկադրաբար ներագդեցություն, ճնշում և անօրինականություն:⁶ Տվյալ սահմանման առանձնահատկությունն են կազմում ֆիզիկական ուժի գործադրումը, հարկադիր ներգործությունը և անօրինականությունը: Հարկադիր ներգործությունը սահմանվում է որպես մարդու կամքի վրա ազդեցություն, նրա ընտրության ազատության սահմանափակում, իսկ անօրինականության տարրը մատնանշում է այն, որ դա իրագործվում է բարոյականության և օրենքի նորմերի խախտմամբ: «Բռնություն» հասկացությունը Ֆ.Ա.Բրոկաուզը և Ի.Ա.Եֆրոնը սահմանում են որպես ուժի անօրինական գործադրում, ասելով հասկանում են՝ տուժողի կամքին հակառակ ուժի գործադրումը, նրան որոշակի գործողություններ կատարելուն կամ չկատարելուն հարկադրելը և այլն:⁷

մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս

² Смагина М.В. Насилие над детьми в семье как социокультурное явление современной России: диссертация. кандидата социологических наук: 22.00.06. - Ставрополь, 2006 էջ 138

³ Никулина Э.А. Организационно-педагогическая система профилактики насилия над детьми в семье: автореферат дис. кандидата педагогических наук: 13.00.01. - Саратов, 2004. էջ.23.

⁴ Стреленко А.А. Социально-перцептивные образы подростков и взрослых, переживших сексуальное насилие: Дис. канд. психол. наук: 19.00.13. - Санкт-Петербург, 2004. էջ. 154

⁵ Штефан А.В. Насилие в отношении несовершеннолетних в семье: уголовно-правовой и криминологический аспекты: по материалам Уральского Федерального Округа: Дис. канд. юрид. наук.:12.00.08. - Челябинск, 2011. էջ.199

⁶ Ожегов С.И. Толковый словарь русского языка., - М.: «Мир и образование», 2016. էջ 356.

⁷ Брокгауз Ф.А., Ефрон И.А. Энциклопедический словарь. - С-Петербург, 2005. էջ. 420.

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, կարծում եմ, առանցքային էր երեխայի իրավունքների պաշտպանության հարցում: Այն ունի, թե կողմնակիցների, թե ընդդիմախոսների մեծ բանակ, այնուհանդերձ, կարծում եմ նրա գործնականում կիրառումը թույլ կտա հայտնաբերել ընտանիքում երեխային բռնության ենթարկելու դեպքերը:

ՀՀ ոստիկանության լիազորությունների շրջանակն ընտանիքում բռնության ենթարկված անձանց, այդ թվում, բռնության ենթարկված երեխաների պաշտպանության ոլորտում սահմանվում են՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ ԿԱ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 05.04.2018թ.-ի թիվ 1086-Ա հրամանով, «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» 05.04.2018թ.-ի թիվ 1088-Ա հրամանով, «Ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները հաստատելու մասին» 05.04.2018թ.-ի թիվ 1090-Ա հրամանով:

Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանությունը՝

1) ապահովում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում մասնագիտացված ստորաբաժանման գործունեությունը: Մասնագիտացված ստորաբաժանման հատուկ համազգեստը սահմանում է Կառավարությունը, իսկ վերապատրաստման կարգը և գործունեության այլ առանձնահատկությունները՝ ոստիկանության պետը.

2) սահմանում է կանխարգելիչ հաշվառման վերցնելու, ինչպես նաև անչափահաս անձանց նկատմամբ կանխարգելիչ հաշվառման շրջանակում նրանց կողմից ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նպա-

տակով մշտադիտարկում իրականացնելու կարգը և այդ նպատակով ամսական մեկից ոչ պակաս հանդիպում ունենում նրանց հետ.

3) իրենց նկատմամբ ընտանիքում բռնություն կիրառված լինելու մասին հաղորդմամբ՝ ոստիկանություն դիմած անձանց պարզաբանում է նրանց իրավունքները և հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում նրանց ուղղորդում է աջակցության կենտրոններ, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացնում ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապաստարանում տեղավորելու մասին.

4) կազմակերպում է համապատասխան ծառայողների՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության վերաբերյալ պարբերական վերապատրաստումներ, ինչպես նաև ապահովում է այլ մարմինների և կազմակերպությունների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին համապատասխան ծառայողների մասնակցությունը.

5) կայացնում է օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումներ, ինչպես նաև հսկողություն է իրականացնում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ՝ ոստիկանության պետի սահմանած կարգին համապատասխան.

6) մշակում է օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված՝ անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները և կազմակերպում համապատասխան ծառայողների պարտադիր վերապատրաստումները հիշյալ չափորոշիչների կիրառման առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով.

7) լիազոր մարմինն տրամադրում է ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ իր վարած վիճակագրությունը:⁸

Անհրաժեշտ է նշել, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ըն-

⁸ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված

տանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը գործնականում սկսեց կիրառվել սույն թվականի հուլիսի 1-ից: 2018 թվականի հուլիսի 1-ից առ դեկտեմբերի 31-ը ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքում ընտանիքում բռնություն գործադրելու համար կանխարգելիչ հաշվառման վերցված քաղաքացիների թիվը 32-ն է: Պետք է նշել, որ արձանագրված դեպքերից միայն երկու դեպքով են տուժողներ հանդիսանում անչափահաս երեխաները: Մա բացարձակ հուսադրող չէ և վկայում է իրականացվող աշխատանքների և ձեռնարկվող միջացառումների մեխանիզմների բացակայության և դրանց հետագա մշակման անհրաժեշտության մասին:

Վերադառնալով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում երեխայի իրավունքների պաշտպանությանը, արձանագրենք, որ այն իրականացվում է երկու ասպեկտով՝

- *առաջինը, եթե անչափահասն է ընտանիքում բռնության ենթարկված անձը,*
- *երկրորդը, եթե անչափահասն է ընտանիքում բռնություն գործադրում:*

Առաջին դեպքում, կարծես թե հասկանալի է, որ անչափահասի իրավունքների պաշտպանության միջոցներն են բռնություն գործադրած անձին նկատմամբ նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշումների կայացումը և բռնություն գործադրած անձի հետագա կանխարգելիչ հաշվառման իրականացումը: Ի լրումն արդեն իսկ իրականացվող աշխատանքների, ոստիկանության ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի ծառայողները տարաբնույթ իրավական թեմաներով դասախոսություններ են անցկացնում հանրակրթական դպրոցներում, այդ թվում՝ ընտանիքում բռնության հասկացության, ընտանիքում իրենց իրավունքների և մեծապես պարտականությունների մասին:

Ուսումնասիրելով ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության իրավակարգավորումները և այն համադրելով գործնա-

կանում դրա կիրառման հետ, արձանագրել ենք մի շարք բացթողումներ, որոնցից միայն մի քանիսին կանդիդատնանք, մասնավորապես՝

- անհրաժեշտ է ուսումնասիրել այն դեպքերը, երբ ոստիկանությունը ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն կիրառելու դեպքում, և բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին հիմնավոր ենթադրության առկայության դեպքում, ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում, և անմիջականորեն սպառնացող վտանգի տակ գտնվողն անչափահաս կամ անգործունակ անձ է, ապա պետք է այդ որոշման պատճենը և համապատասխան արձանագրությունն անհապաղ ուղարկի խնամակալության և հոգաբարձության մարմնին, որը գնահատելով իրավիճակը, պետք է ձեռնարկի օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված գործողություններ: Ավելին, եթե անհետաձգելի միջամտության որոշումը կիրառվում է անչափահաս կամ անգործունակ անձի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, ապա երեխաների և անգործունակ անձանց ժամանակավոր խնամքը կազմակերպում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ որոշման պատճենն ստանալուց հետո՝ հնարավորին չափ սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 24 ժամում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առաջնորդվելով նրանց շահերով:

Գործնականում այս առումով կարող են առաջանալ մի շարք ընթացակարգային բարդություններ: Օրինակ, խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատանքային ժամի ավարտին պես կամ ոչ աշխատանքային օրերին ոստիկանության կողմից նմանատիպ դեպք հայտնաբերելու և անհապաղ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու դեպքում, ըստ էության ոստիկանությունը, բացառությամբ խնամակալության և հոգաբարձության մարմնին դեպքի մասին իրազեկելու, որևէ այլ լիազորությամբ օժտված չէ: Կասկածից վեր է, որ խախտվում է երեխայի լավագույն շահերի առաջնահերթության սկզբունքը, ինչը բնականաբար անթույլատրելի է: Ոստիկանության լիազորությունները չպետք է սահմանափակված լինեն ըստ էության միայն նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու, վերջինիս, ինչպես նաև պաշտպանական որոշման նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կանխարգելիչ հաշվառում իրականացնելու հնարավորությամբ:

Գործնականում բացառություն չեն կազմի այն դեպքերը, երբ ընտանիքում երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կարող է թելադրել ոստիկանության ծառայողին անհապաղ երեխային ընտանիքից հեռացնել մինչև խնամակալության և հոգաբարձության մարմնին այդ մասին իրազեկելը:

Ուստի նման իրավիճակում մասնագիտացված ստորաբաժանման ծառայողի համար անհրաժեշտ է այնպիսի պարտականություն, ինչպիսին է «ձեռնարկել անչափահասների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցներ»:

Երկրորդ դեպքում նույնպես առաջ են գալիս մի շարք բարդություններ, մասնավորապես՝ հանցագործություն կատարած, և առհասարակ հակահասարակական և հակաիրավական վարքագիծ դրսևորող անչափահասների նկատմամբ ԱԳ և ԸԲԿ բաժանմունքում իրականացվում է պրոֆիլակտիկ հաշվառում համաձայն 08.08.1996 թվականի թիվ 633 հրամանի: Նման պայմաններում ոստիկանության ծառայողները երկխոսորդի առաջ են կանգնում՝ հաշվառումն իրականացնել 08.08.1996 թվականի թիվ 633 հրամանով նախատեսված կարգով, թե «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով և «ՀՀ ԿԱ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 05.04.2018թ.-ի թիվ 1086-Ա հրամանով նախատեսված կարգով:

Նման պայմաններում ոստիկանության ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի ծառայողները ստիպված են իրականացնել երկակի աշխատանք միևնույն փաստով, ինչը միանշանակ ապահովում է միայն փաստաթղթային անտեղի ծավալի ապահովումը: Եթե «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի նպատակներն են՝

- ապահովել ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական բջջի, հատուկ պաշտպանությունը,

- ձևավորել ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկվածների անվտանգության և պաշտպանության, նրանց

իրավունքների և օրինական շահերի ապահովման համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր,

- ապահովել ընտանիքի անդամների անվտանգությունը և նպաստել ընտանիքում համերաշխության վերականգնմանը,

- կանոնակարգել ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ուղղությամբ պատասխանատու մարմինների գործունեությունը,

- ապահովել ընտանիքում բռնության ենթարկվածներին հոգեբանական, նյութական և սոցիալական աջակցության տրամադրման և նրանց սոցիալական վերականգնման համար պատասխանատու մարմինների գործունեության համար իրավական հիմքեր, ապա 08.08.1996 թվականի թիվ 633 հրամանի շրջանակներում իրականացվող աշխատանքների նպատակն է նախականել անչափահասների կողմից կատարվող հանցագործություններն ու այլ իրավախախտումները, նրանց նկատմամբ հսկողություն սահմանել, կատարելով անհրաժեշտ դաստիարակչական ներգործության աշխատանքներ:⁹

Հետևաբար, անհրաժեշտ է համապատասխան փոփոխությունների ենթարկել ոստիկանության ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի ծառայողների հակահասարակական և հակաիրավական վարքագիծ դրսևորած անչափահասների հետ իրականացվող աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերը, ենթաօրենսդրական ակտերը, օրինակ՝ 1996թ-ից առ այսօր գործող ՀՀ ՆԳՆ նախարարի հրամանը, այլ մշակել նոր, ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր իրավական ակտ, որն էլ կհանդիսանա հիշյալ ծառայության գործունեությունը կարգավորող հիմնաքարը:

Հաջորդը, ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձը, էթե նրա արարքում բացակայում են հանցակազմի հատկանիշներ, ապա ոստիկանության կողմից ուղղորդվում է վերականգնողական ծրագրերի իրականացման համապատասխան համայնքային և պետական կենտրոններ՝ անչա-

⁹ ՀՀ ՆԳՆ նախարարի 08.08.1996թ. թիվ 633 հրամանի 1.1 կետ

փահասների հանցավորության կանխարգելման բնագավառում Կառավարության սահմանած կարգի համաձայն:¹⁰ Որո՞նք են այդ վերականգնողական կենտրոնները և ինչպիսի գործառույթներ են իրականացնում դեռ պարզ չէ: Ավելին, իսկ եթե ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձի արարքում առկա են հանցակազմի հատկանիշները, սակայն վերջինս չի հասել քրեական պատասխանատվության տարիքի կամ արարքում հանցակազմը բացակայում է, կամ բացակայում է դիմողի բողոքը, ապա ստացվում է, որ ոստիկանության կողմից վերականգնողական ծրագրերի իրականացման համապատասխան համայնքային և պետական կենտրոններ ուղղորդում չի իրականացվելու:

Կարծում ենք, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը անհրաժեշտ է շարադրել հետևյալ կերպ . «Ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձը, եթե նրա արարքում բացակայում են հանցակազմի հատկանիշները կամ առկա են քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, ապա ոստիկանության կողմից ուղղորդվում է վերականգնողական ծրագրերի իրականացման համապատասխան համայնքային և պետական կենտրոններ՝ անչափահասների հանցավորության կանխարգելման բնագավառում Կառավարության սահմանած կարգի համաձայն:»

Այսպիսով, անհրաժեշտ է համապատասխան միջոցներ նախատեսել, որոնք ուղղված կլինեն երեխային՝ ընտանիքի անդամների կողմից բռնության ենթարկվելու դեպքերում հատուկ պաշտպանության տակ առնելու ուղղությամբ, ինչպես նաև ստեղծել միջգերատեսչական արագ արձագանքման խումբ, որն անհետաձգելի դեպքերում իր գործունեությունը կծավալի շուրջօրյա ռեժիմով:

¹⁰ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս

ПОЛНОМОЧИЯ ПОЛИЦИИ В СФЕРЕ ЗАЩИТЫ ПРАВ
РЕБЕНКА В РАМКАХ ЗАКОНА РА
"О ПРЕДУПРЕЖДЕНИИ СЕМЕЙНОГО НАСИЛИЯ,
ЗАЩИТЕ ЛИЦ, ПОДВЕРГШИХСЯ СЕМЕЙНОМУ
НАСИЛИЮ, И ВОССТАНОВЛЕНИИ СОГЛАСИЯ В СЕМЬЕ"

Меликсетян Марта Эдуардовна

Начальник отделения по делам несовершеннолетних

и по предупреждению насилия в семье

Малатийского отдела Управления г.Еревана

Полиции РА Соискатель кафедры уголовного права

и уголовно-процессуального права

Института праваи политики Российско-Армянского

университета, подполковник полиции

В статье проведен анализ полномочий полиции в сфере защиты прав ребенка в рамках Закона РА "О предупреждении семейного насилия, защите лиц, подвергшихся семейному насилию, и восстановлении согласия в семье", изучены действующие приказы начальника Полиции РА, регламентирующие порядок ведения профилактического учета лиц, совершивших насилие в семье. На основании проведенного анализа, представлены соответствующие предложения по совершенствованию механизма защиты прав детей, пострадавших от семейного насилия.

Ключевые слова: ребенок, семья, насилие.

THE POWERS OF THE POLICE IN THE FIELD OF THE
PROTECTION OF THE RIGHTS OF THE CHILD WITHIN THE
FRAMEWORK OF THE LAW IN RA: “THE PREVENTION OF
THE FAMILY VIOLENCE, THE PROTECTION OF PERSONS
EXPOSED TO THE FAMILY VIOLENCE AND THE
RESTORATION OF THE FAMILY CONSENT”

Meliksetyan Marta

Russian-Armenian University the institutions of politics and law

Head of departament of juvenile cases and violence prevention

of Malatia police station under the control

of Yerevan city administration of police of the Republic of Armenia,

Police Lieutenant colonel

The article analyzes the powers of the police in the field of the protection of the rights of the child within the framework of the law in RA on the prevention of the family violence, the protection of persons exposed to the family violence and the restoration of the family consent, there had been studied the current orders of the head of the RA Police, regulating the procedure for conducting preventive registration of perpetrators of the family violence. Based on the analysis, relevant proposals were submitted to improve the mechanism for protecting the rights of the children suffered from family violence.

Keywords: Child, family, violence.

Հոդվածը գրախոսվել է՝ 18.02.2019թ.

Ներկայացվել է տպագրության՝ 25.02.2019թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ
ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Պետրոսյան Հակոբ

ՀՀ ոստիկանության շտաբի տեսչական վարչության պետի տեղակալ, ինքը և հետաքննության բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ

Ներսիսյան Հայկ

ՀՀ ոստիկանության շտաբի տեսչական վարչության հետաքննության բաժնի ավագ տեսուչ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի սովորող, ոստիկանության կապիտան

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութերի նախապատրաստման որակն ու հիմնավորվածությունն ըստ էության իր արտացոլումն է գտնում քրեական դատավարության առաջին՝ քրեական գործի հարուցման կամ քրեական գործ հարուցելու հարցի լուծման փուլի¹ վերջում կայացվող դատավարական երեք որոշումներից երկուսում², մասնավորապես՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման մեջ:

Հարկ է նշել, որ գործնականում, հետաքննության մարմնի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման կայացման պարագայում, ըստ էության ավելի մեծ ծավալի աշխատանք է կատարվում և ռեսուրս «ծախսվում», քան մյուս երկու որոշումների կայացման դեպքում: Իհարկե,

¹ Քրեադատավարական նշված փուլի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ Ա. Ղամբարյան, Եր.: Տիգրան Մեծ, 2016, 27-29 էջեր:

² Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք: «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ: «...**Հոդված 181. Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման արդյունքում ընդունվող որոշումները** Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:»:

հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման արդյունքում որոշումների կայացումը բացառապես պայմանավորված է ստացված հաղորդման բովանդակությունից և քննարկվող դեպքի առանձնահատկություններից:

Որպես հետաքննության մարմնի գործունեության հիմնական գնահատման չափորոշիչներից մեկը՝ իրավասու մարմնի կողմից նյութերի նախապատրաստման արդյունքում կայացված քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման պրակտիկայի վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել մի շարք առանցքային հարցերի վերաբերյալ, ինչպես նաև տալ որոշակի գնահատականներ ոլորտի մասին: Դրանցից են օրինակ՝

- հետաքննության մարմնի ընդհանուր, ինչպես նաև առանձին ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը,

- ոստիկանության, որպես հետաքննության ունիվերսալ մարմնի, դատավարական գործառույթների իրականացման արդյունքում կայացված որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը,

- առանձին դեպքերում, անհատ ծառայողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը,

- նյութերի նախապատրաստման ընթացքում դատավարական հսկողություն իրականացնող դատախազների հետ տարվող փոխհամագործակցված աշխատանքի որակը,

- հետաքննական աշխատանքներում արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը և նախանշվող անելիքները:

Հարցերն առավել պատկերավոր դիտարկելու նպատակով, ինչ խոսք կարևոր է նաև արձանագրված վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը: 2018թ. 12 ամիսների ընթացքում ոստիկանության հետաքննական գործառույթ իրականացնող ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքում³ շուրջ **1/3-ով** ավելացել է հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներով նախապատրաստված նյութերի քանակը՝ **32.321-ից** հաս-

³ Ներկայացված վիճակագրական տվյալները ստացվել են ՀՀ ոստիկանության պետի 26.12.2017թ. թիվ 3600-Ա հրամանի հավելված 5-ով նախատեսված տեղեկությունների ամփոփման արդյունքում:

նելով **41.466-ի**: Դրանցից՝ **29.288-ը** նախապատրաստվել են միայն հետաքննության գծով տեսուչների, իսկ՝ **12.178-ը** այլ ծառայությունների կողմից: Զգալիորեն աճել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութերի նախապատրաստման արդյունքում կայացվող որոշումների թիվը: 2018թ.-ին **քրեական գործ հարուցելու մասին** կայացված որոշումների թիվն աճել է **3.326-ով** և կազմել՝ **10.481**, իսկ **քրեական գործ հարուցելը մերժելու մասին** որոշումների թիվը՝ **5.536-ով**, կազմել՝ **26.559**: Առավել պատկերավոր լինելու համար ընդգծենք, որ 2008 թվականի համեմատությամբ, ոստիկանության կողմից հարուցված քրեական գործերի թիվն ավելացել է **շուրջ 13 անգամ (2008թ.՝ 785)**, իսկ քրեական գործ հարուցելը մերժելու մասին կայացված որոշումների թիվն աճել է **շուրջ 7.5 անգամ (2008թ.՝ 3.546)**:

Այս ամենով հանդերձ, հետաքննության գծով ծառայողների հաստիքային ծանրաբեռնվածությունն ամսվա կտրվածքով կազմել է **24 նյութ**, նախորդ տարվա **21.7-ի** փոխարեն: Արձանագրված վիճակագրությունն ինչ խոսք վկայում է ոլորտում աշխատանքների գերծանրաբեռնված ռեժիմով իրականացման մասին:

Կատարված վերլուծության արդյունքներով պարզվել է նաև, որ վերացված որոշումների հիման վրա հարուցված քրեական գործերից **58-ով** որոշում է կայացվել նույն հիմքով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, **147** քրեական գործեր գտնվում են նախաքննության փուլում, **26** քրեական գործի վարույթ կասեցվել է, իսկ **14** քրեական գործեր՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:⁴

Ուսումնասիրելով և վերլուծելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների վերացման պատճառները, պարզ է դառնում, որ հետաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների, ինչպես նաև մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատարանների կողմից⁵ վերացման վերաբերյալ կայացված որոշումներում որպես վերացման հիմքեր հիմնականում

⁴ Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների վերացման արդյունքում հարուցված քրեական գործերի ընթացքի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են 2019թ. հունվարի դրությամբ:

⁵ 2018թ. ընթացքում ոստիկանության կողմից կայացված քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներից դատախազների կողմից վերացվել է 236, իսկ

վկայակոչվում են հետևյալ պատճառները՝

1) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները հետաքննության մարմնի կողմից չպահպանելը, այն է՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չհետազոտման արդյունքում որոշում կայացնելը,

2) ձեռք բերված փաստական տվյալների առկայության պարագայում կատարված ենթադրյալ հանցավոր արարքին սխալ քրեախրավական գնահատական տալը,

3) նյութերի նախապատրաստման համար սահմանված ժամկետում նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը չստանալու, պատճառված մարմնական վնասվածքի ծանրության աստիճանն ու առաջացման մեխանիզմը պարզված չլինելու պայմաններում քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում կայացնելը,

4) ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների պահանջներով չառաջնորդվելը,

5) քրեախրավական ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ կատարված փոփոխություններին տեղեկացված չլինելը և դրանց պահանջներով չառաջնորդվելը:

Պետք է փաստել, որ վերացման պատճառների մաս են կազմում նաև հետաքննական աշխատանքներ իրականացնող ծառայողների կողմից իրենց գործառության պարտականությունների կատարման մեջ թերանալու և բավարար մասնագիտական գիտելիքների չտիրապետելու հետ կապված հանգամանքները:

Ոլորտում արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ ինչ խոսք կարևոր է համակարգային և թիրախավորված մոտեցումը: Այդ նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի կողմից կանխանշվել են ձեռնարկվելիք միջոցառումների հիմնական ուղղությունները, որոնք դասակարգվել են հետևյալ կերպ՝

1) իրավակազմակերպչական բնույթի միջոցառումներ՝ ուղղված հետաքննության ոլորտում իրականացվող աշխատանքների նկատմամբ ներգերատեսչական հսկողության արդյունավետության բարձրացմանը, հետաքննական աշխատանքների որակի բարելավմանն ու կատարելագործմանը,

դատարանների կողմից՝ 16 որոշումներ: 2017թ. համեմատությամբ վերացված որոշումների ընդհանուր թիվն աճել է 105-ով:

2) կադրային ոլորտի միջոցառումներ՝ ուղղված հաստիքների համալրման նպատակով թեկնածուների ընտրությանն ու կադրերի արդյունավետ տեղաբաշխմանը,

3) կրթական ոլորտի միջոցառումներ՝ ուղղված հետաքննություն իրականացնող ծառայողների ուսուցմանը և վերապատրաստմանը,

4) միջոցառումներ՝ ուղղված հետաքննություն իրականացնող ծառայողների նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացմանը:

Նշված ուղղություններով ձեռնարկվելիք առանձին միջոցառումները կրելու են ծրագրային և շարունակական բնույթ, իրենց ամբողջական արտացոլումն են գտնելու ներկայումս մշակվող *«ՀՀ ոստիկանության համակարգում իրականացվող հետաքննական աշխատանքների բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների» 2019 թվականի Օրագրում:*

НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРИЧИН ОТМЕНЫ РЕШЕНИЙ ПОЛИЦИИ РА ОБ ОТКАЗЕ В ВОЗБУЖДЕНИИ УГОЛОВНОГО ДЕЛА

Петросян Акоп Рафикович

Заместитель начальника управления инспекции, он же начальник отдела дознания Штаба полиции РА, кандидат юридических наук, доцент, подполковник полиции

Нерсисян Айк Нерсесович

старший инспектор отдела дознания управления инспекции Штаба полиции РА, слушатель магистратуры Академии Образовательного комплекса полиции РА, капитан полиции

В статье рассматривается практика отмены компетентным органом решений полиции РА об отказе в возбуждении уголовного дела, анализ и классификация ее причин. Как основной критерий оценки работы, проводимой органом дознания в рамках уголовно-процессуальной деятельности, он дает представление о некоторых ключевых вопросах в этой области.

В заключительной части статьи излагаются основные направления, которые следует предусмотреть в рамках *Программы «О мерах, направленных на повышение эффективности и результативности дознания,*

проводимой в системе полиции РА» на 2019 год.

Ключевые слова: Полиция Республики Армения, дознание, решение об отказе в возбуждении уголовного дела, отмена решения.

SCIENTIFIC ANALYSIS OF THE POLICE OF THE RA ON REASONS FOR DEFINING DECISION ON DETERMINING CRIMINAL PROCEEDINGS

Petrosyan Hakob

*Head of the Investigation Division,
of the Inspection Department of the
Headquarters of Police of the RA
Candidate of Legal Sciences, Associate
Professor, Lieutenant Colonel of police*

Nersisyan Hayk

*Senior inspector of the Investigation
Division, of the Inspection Department
of the Headquarters of Police of the RA,
Master of Science of the Police
Educational Complex of the RA, Captain
of police*

The article refers to the practice of eliminating the decisions of the competent authority to reject a criminal case initiated by the Police of the RA, its analysis and classification. As a main criterion for evaluating the works carried out by the investigative body within the framework of criminal-procedural activities, it gives an idea of some of the key issues in the sphere.

The final part of the article outlines the guidelines that should be envisaged to be developed within the framework of 2019 Action Plan *“For the works carried out to improve investigative work and efficiency Improvement in the Police System of the Republic of Armenia”*.

Keywords: The Police of the Republic of Armenia, the investigation, the decision to refuse to initiate a criminal case, the elimination of the decision.

Հոդվածը գրախոսվել է՝ 05.02.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 13.02.2019թ.

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մահակյան Ալեքսանդր

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի

իրավագիտության ֆակուլտետի

ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,

ոստիկանության գնդապետ

Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը մեծածավալ և ընդգրկուն խնդիր է, սակայն մեր հողվածում մենք կանդրադառնանք միայն մի քանի հարցերի: Անչափահասների իրավախախտումներն ավանդաբար հասարակության և պետության կողմից մեծ ուշադրության են արժանացել: Մա լիովին արդարացված է, քանի որ անչափահասների իրավախախտումների դեմ պայքարի խնդիրները միշտ էլ առանձնացել են հրատապությամբ: Իրավախախտումների կանխարգելումն այսօր համարվում է պետական գերատեսչությունների և հասարակական ինստիտուտների գործունեության առաջնահերթություններից:

Այսօրվա պայմաններում կանխարգելիչ միջոցառումների արդյունավետ իրականացման համար գործնական ջանքերի անհրաժեշտությունը, նախառաջ, ենթադրում է նախորդ տարիների ընթացքում մշակվածի պահպանություն ու զարգացում, և երկրորդ՝ պետության ու հասարակության մեջ անցյալում եղած և այսօր տեղի ունեցող փոփոխությունների դիտարկում և վերլուծում:

Տարբեր հետազոտությունները ցույց են տալիս, որ տասը իրավախախտումներից յոթը կարող են կանխվել կանխարգելիչ արդյունավետ աշխատանքների արդյունքում: Ուսումնասիրությունը թույլ է տալիս մեզ բացահայտելու անչափահասների իրավախախտումներին նպաստող գործոնները՝

- հոգևոր արժեքների ցածր մակարդակ,
- հասարակության մեջ բարոյաէթիկական արժեքների նախկին համակարգի ոչնչացում,
- անչափահասների շրջանում ձևավորված ենթամշակույթ,

- անչափահասների շրջանում, ոչ բավարար դաստիարակչական աշխատանք,

- մշակութային ժամանցի համար սահմանափակ հնարավորություններ (այցելություն սպորտային ակումբներ, հոբբի խմբեր, թատրոններ, կինոթատրոններ և այլն),

- կասկածելի գաղափարներ դավանող տարբեր աղանդների և հասարակական կազմակերպությունների գործունեություն,

- համացանցի միջոցով բացասական տեղեկատվության տարածում (օրինակ, պատրաստի թմրանյութերի օգտագործման, դրանց արտադրության և ձեռքբերման վայրերի մասին),

- տարածաշրջանային մակարդակում անչափահաս իրավախախտումների դեմ պայքարին ուղղված ծրագրերի անբավարար ֆինանսավորում,

- քրեական աշխարհի հեղինակությունների կողմից անչափահասների ներգրավում քրեաիրավական գործունեության մեջ (փորձառու հանցագործները լավ գիտեն, թե ինչպես պետք է ազդել անչափահասի վրա, որպեսզի նա դառնա հնազանդ գործիք իրենց ձեռքում և պատրաստ լինի կատարելու ցանկացած հանցագործություն ու իրավախտում՝ ըստ իրենց ցուցումների),

- ռիսկային խմբին պատկանող անչափահասների և անապահով ընտանիքների երեխաների հետ աշխատանքների նվազեցում,

- անչափահասների միջխմբային և միջանձնային շփումների բարձր հաճախություն,

- հոգեբանական մեծ ծանրաբեռնվածություն, որն առաջացնում է անչափահասների մեծաքանակ սթրեսային իրավիճակներ,

- անբարենպաստ իրավիճակ ընտանիքում և դպրոցում:

Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնելու, որ անչափահասների կողմից կատարված իրավախախտումների խնդիրը շարունակում է հրատապ մնալ:

Անչափահասների իրավախախտումների դեմ պայքարի առաջին պլանում են անչափահասների գործերով զբաղվող ոստիկանության ստորաբաժանումները, որոնք կոչված են իրականացնելու լայնածավալ աշխատանքներ: ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության (այսուհետ՝ ԱԳ և ԸԲԿ) տարածքային ստորաբաժանումների կողմից անչափահասների հետ տարվող կանխարգելիչ աշխատանքներն իրականացնելիս, որպես գործունեության հիմնական ուղղություններ, պետք

է հաշվի առնել.

1. անչափահասի շրջակա միջավայրի հետ կանխարգելիչ աշխատանքների կազմակերպումը, որը կարող է դրական ազդեցություն ունենալ նրա վրա:

2. կանխարգելիչ աշխատանքների կազմակերպում և անցկացում այն անչափահասների հետ, ովքեր կասկածվում են իրավախախտում կատարելու մեջ կամ գտնվում են հետաքննության մեջ և վերջիններիս նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց չի ընտրվել:

3. անչափահասների իրավախախտումների կրկնության կանխարգելում:

4. անչափահասների մարզինալացված խմբերի հետ կանխարգելիչ աշխատանքների կազմակերպում և անցկացում:

Խոսելով անչափահասների մարզինալ խմբերի մասին, մենք նկատի ունենք և տարբեր «անչափահասների ենթամշակույթների» և «ոչ ֆորմալ անչափահասների միությունների» ներկայացուցիչներին:¹

Գիտական տեսանկյունից վերոնշյալ գործողություններից ամենաթույլ զարգացածն անչափահասների մարզինալ խմբերի հետ տարվող կանխարգելիչ աշխատանքն է, ինչը պայմանավորված է նրանով, որ

- նրանք հիմնականում արևմտյան սուբկուլտուրայի (ենթամշակույթի) ազդեցության արդյունք են,

- այս խմբերը մշտապես ենթարկվում են փոփոխության,

- նրանք լավ ուսումնասիրված չեն:

Մասնագիտական գրականություն մեջ հանդիպում են ոչ ֆորմալ անչափահասների միավորումների մի քանի դասակարգումներ, սակայն անչափահասների հակահասարակական վարքագծի կանխարգելման նպատակով առավել ճշգրիտ դասակարգումը հիմնված է այդ միությունների սոցիալական վտանգի ուսումնասիրման արդյունքների վրա: Հասարակական վտանգ չներկայացնող միություններում ընդգրկված են այն մարդիկ, ովքեր բնութագրվում են որպես հասարակության մեջ տիրող արժեքները չընդունողներ. դրանք են «Հիպիները», «Ռեպերները», «Մետալիկները» և այլն: Նրանց բողոքն արտահայտվում է փիլիսոփայության, հասարակական գործունեության և կյանքի որոշակի ձևով: Խմբային հիերարխիայում անչափահասների կարգավիճակը կախված է հենց այդ գործոններից:

¹ Տես Казаникова А.А., Чукарина Н.Л. Неформальные молодежные движения в СССР в период перестройки // Юный ученый. – 2016. – № 2. – էջեր 44-47:

Աշխարհի տարբեր երկրներում համեմատաբար վտանգավոր են այն ասոցիացիաները, որոնք քաղաքացիների համար ֆիզիկական վտանգ են ներկայացնում: Դրանք են «Մափրագլուխները» («Սքինհեդները»), «Գոթերը», «Էմոները», «Սատանիստները» և այլն, որոնք արդի իրականության նկատմամբ իրենց վերաբերմունքը, բողոքն արտահայտում են ֆիզիկական ուժի միջոցով: Ի վերջո բողոքը անչափահասներին դրդում է տնից փախուստների կամ թափառաշրջիկության: Որոշակի դժվար իրավիճակներում նրանց մոտ կարող է դրսևորվել և սուիցիդալ վարք, ինքնասպանության փորձեր, որոնք եզակի դեպքերում են լինում գիտակցական ընտրություն և որը հաճախ լուծում չգտնելու արդյունքում հուսահատ քայլ է եղած խնդիրների համար: Ա.Ե.Լիչկոյի տվյալներով՝ «դեռահասների միայն 10%-ն է իսկապես ցանկանում մահանալ, մնացածների՝ 90%-ի մոտ սուիցիդալ վարքը միայն օգնության ճիշ է»:²

Հետազոտելով անչափահասների կողմից իրավախախտումների կատարմանը նպատող գործոնները, մենք ևս մեկ անգամ համոզվեցինք, որ անչափահասների իրավախախտ վարքի առավել քրեածին գործոնը ընտանիքում անբարենպաստ իրավիճակն է: Հայտնի է, որ տարիների ընթացքում շատ ընտանիքներ տարբեր պատճառներով չեն կատարել իրենց դաստիարակչական գործառույթները, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով նպաստում են երեխաների ոչ բարոյական և երբեմն անօրինական կողմնորոշումների ձևավորմանը: Այսպես, օրինակ, «Երևանի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի շահառուները հիմնականում ընտանիքներում անտեսված (75%) և ֆիզիկական բռնության ենթարկված (53%) երեխաներն են, 8%-ը կազմում է սեռական բռնության դեպքերը»:³

Ներկայումս անչափահաս իրավախախտների ընտանիքներում գերակշռում են անձնական և մանկավարժական՝ հասարակայնորեն բացասական դիրք ունեցող ծնողների ընտանիքները: Նմանօրինակ անչափահասների համար շարունակում է բնորոշ մնալ այն ընտանիքը, որն ի ցույց է դնում իր հակահասարակական սովորույթները, վերաբերմունքը, կարիքները, չի վերահսկում, զգայականորեն աջակցում և պաշտպանում արտաքին բացասական ազդեցություններից և, հետևաբար, անչափահասին ստիպում հասկացված և ընդունված լինել տնից դուրս:

² Տե՛ս Личко А.Е. Подростковая психиатрия. Руководство для врачей. Л. 1985, էջ 416.

³ Տե՛ս Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ, ՀՀ կառավարության 04.12.2014թ. նիստի №51 որոշում:

Առավել վատ է դրությունն այն ընտանիքներում, որտեղ անչափահասը մեծանում է ծնողներից մեկի մոտ: Եթե աշխատող ծնողը կարող է ապահովել նյութականը, ապա ավելի դժվար է ապահովել բարոյական և հոգեբանական կողմը, որը ծագում է երկրորդ ծնողի բացակայության դեպքում: Անշուշտ, ընտանիքի անբարենպաստ իրավիճակը սոցիալական միջավայրի այլ բացասական գործոնների հետ հանգեցնում է անչափահասների իրավախախտ վարքագծին, և, առաջին հերթին, մեծերի բացասական ազդեցությանը, որոնք ներքաշում են անչափահասին հակահասարակական գործունեության մեջ:

Ընտանիքի հետ միասին անչափահասի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում դպրոցը, քանի որ այս տարիքում նա փնտրում է, որոշում և հաստատում է իր տեղը հասարակական հարաբերություններում: Ներկայումս դպրոցը չի կարողանում փոխհատուցել և ուղղել ընտանեկան դաստիարակության թերացումները, դրա պատճառով էլ շատ դեպքերում անչափահասը «պաշտպանվում է» տարբեր բացասական ազդեցություններից՝ նրանց դեմ ակտիվորեն պայքարելու փոխարեն: Կրթության բնագավառում վերջին տարիներին ձևավորվել է վերոգրյալի նկատմամբ քննադատական վերաբերմունք: Ժամանակակից հասարակության մեջ անչափահասներն այլևս չեն վստահում կրթությանը, քանի որ այն չի տալիս աշխատանք ստանալու երաշխիքներ: Երիտասարդները կրթական հաստատությունն ընկալում են որպես դիպլոմներ հանձնող հաստատություն, դասընթացը՝ որպես միջանկյալ փուլ, քննությունների նախապատրաստում, իսկ այն ամենը, ինչը տեղի է ունենում դասերից դուրս՝ որպես ավելորդ և ոչ պարտադիր: Ներկայիս իրավիճակը սրվում է նրանով, որ ուսումնական հաստատություններում անչափահասները սկսում են համարվել «մանկավարժական օբյեկտ», և ոչ թե դաստիարակության սուբյեկտ:

Կրթությունը չի մտահոգվում անչափահասների վարքի, խոսքի, արտաքին տեսքի, բնորոշ փոխհարաբերությունների մասին, ուստի անջրպետը դպրոցի և ընտանիքի ու ազատ ժամանակի միջև դառնում է առավել մեծ:

Դպրոցի ուսուցիչների կանխարգելիչ աշխատանքներում որպես կանոն ներգրավված են միայն այն աշակերտները, ովքեր արդեն կատարել են իրավախախտումներ, իսկ վերջերս դպրոցի տնօրենները փորձում են այս գործառույթը տեղափոխել ԱԳ և ԸԲԿ ստորաբաժանումներ, պնդելով, որ նրանց հետ արդեն անիմաստ է աշխատել:

«Այն անչափահասները, ովքեր կյանքի որոշակի հանգամանքների բերումով մնացյալից առավել շատ են կրում հասարակության և նրա քրեական

տարրերի կողմից արտաքին բացասական ազդեցությունները»⁴ և հակվում դեպի իրավախախտումները, հետզհետե դառնում են «ոխսկի խմբի» անչափահասներ: Ի վերջո, այսպես կոչված «ոխսկի խմբի» երեխաները օտարվում են դասարանից և դպրոցական կոլեկտիվից, զբաղեցնում են ամենացածր մակարդակը՝ դառնալով «խուլիգաններ», «ավազակներ» և այլն: Դրանով իսկ նրանք մոտենում են անչափահասների ճգնաժամի (անցումային տարիք) համար նոր դրդապատճառների ընտրության, գործունեության օբյեկտների, կարիքների և շրջապատող աշխարհի նոր ընկալման:

Այս ժամանակահատվածի հիմնական պահանջներ են դառնում հասակակիցների հետ հաղորդակցվելը, հասարակական նշանակալից գործունեությունը, որպես անձի՝ ինքնաճանաչում, ինքնարտահայտում ու ինքնակազմակերպում:

Անչափահասը, դժգոհ լինելով ընտանիքում, դպրոցում, աշխատանքային կոլեկտիվում իր կարգավիճակից, հասկացվածություն է փնտրում տարբեր ոչ ֆորմալ խմբերում, որոնցում բացի հասակակիցներից կան նաև հակասոցիալական կողմնորոշմամբ, բարձր հեղինակություն ունեցող ավելի մեծ տարիքի մարդիկ: Վերջիններս սովորաբար գրավում են բարձր դիրք՝ որոշելով իրենց կրտսեր ընկերների վարքը, դրանով իսկ հոգեբանորեն ամբողջությամբ «չեզոքացնելով» նրանց հայրերին: Այս խնդրի առնչությամբ Ն.Դուրյանը, ով բազմիցս է անդրադարձել իր աշխատանքներում անչափահասների վարքագծային հարցերին, գրում է. «Երեխաները հաճույքով են մղվում դեպի մեծերը: Հաճախ նույնիսկ նախընտրում են խաղալ ոչ թե հասակակիցների, այլ մեծերի հետ»⁵: Քանի որ անչափահասի՝ նման խմբի անդամների հետ նույնացման անհրաժեշտությունը մեծ է, նրա նորմերը և չափանիշներն ակտիվորեն ընդունվում են: Այսպես կարող է ավարտվել անհատի բացասական բարոյաևհոգեբանական անհատական հատկությունների ձևավորումը: «Անցումային տարիքի» շրջանում անչափահասներն առավել հասանելի են ոչ սոցիալական շեղումներին: Նրանք արդեն իրենց համարում են մեծահասակներ, փորձում են որոշումներ կայացնել, ապրել իրենց տեսլականով, հեռու մնալ մեծահասակների վերահսկողությունից (խնամակալությունից), չեն ենթարկվում նրանց պահանջներին և ձգտում են ցանկացած միջոցով ինքնառեալիզացվել:

⁴ Տես Мардахаев Л.В. Социальная педагогика: Учебник.- М., 2005, էջեր 132-133:

⁵ Տես Դուրյան Ն., Անչափահասների արդարադատությունը ՀՀ-ում: Երևան, 2014, էջ 46:

Հաշվի առնելով անչափահասների իրավախախտման որոշիչները, պետք է խոսենք սոցիալական բացասական երևույթների հետ հանցավորության կապի մասին: Բազմաթիվ սոցիալական բացասական երևույթներից պետք է առանձնացվի հանցավորության հետ սերտորեն կապված հարաբերությունների մի խումբ: Դրանց թվում են հարբեցողությունը, թմրամոլությունը, թմրադեղերը, մարմնավաճառությունը, մանկական պռոնոգրաֆիան, սեռական այլասերումը և այլն:

Ժամանակակից հասարակության մեջ, որպես բացասական գործընթացների և երևույթների արդյունք, վերջին տարիներին սրվել է հոգևոր կյանքի դեֆորմացումը: Անչափահասի իրավախախտմանը մեծապես նպաստում են և ՋԼՄ-ները: Ոչ միայն արտասահմանյան, այլև հայկական հեռուստաէկրաններին հաճախ կարելի է տեսնել քրեական հեղինակությունների և հանցագործ խմբերի անդամների պատկերների իդեալականացումը («Բրիգադա», «Որոգայթ» և այլն), ինչը բացասաբար է ազդում անչափահասների աշխարհընկալման վրա: Բռնության և դաժանության տեսարանները բացասական հետք են թողնում անչափահասների հոգեբանության վրա և հաճախ մղում նրանց ներկայացնելու տեսածը իրականության մեջ: Ֆիլմի հերոսների կատարած գործողությունների անպատժելիությունը հանգեցնում է նրանց իմիջի չմտածված նմանակմանը: Անհատականության, հոգևորի բացակայության, ծախվածության, իրավական նիհիլիզմի հոգեբանությունը լայն տարածում է ստանում: Այս երևույթի արդյունքը հասարակության ներկայիս բարոյահոգեբանական վիճակն է, որը նվազեցնում է հարգանքը օրենքի և իշխանության ինստիտուտների նկատմամբ: Մեր երկրում ոչ միայն հեռուստատեսությունը, այլև համացանցը դարձել են զանգվածային ոչնչացման էլեկտրոնային զենք: Հատկապես վտանգավոր է համացանցի չհսկվող կայքերի գոյությունը, որտեղ անչափահասը կարող է մտնել, մեղմ ասած, անցանկալի կայքեր՝ իրազեկվելով նաև սեռական բռնության զանազան ձևերի, այլասերված կադրերի և այլնի մասին, ինչը չափազանց ծանր հետևանքներ կարող է ունենալ նրա խելված բարոյահոգեբանական պատկերացումների վրա: Մենք հաճախ նկատում ենք, որ հեռուստատեսության և համացանցի բռնության ու բռնի հանցագործության աճի միջև ուղղակի կապ կա: Հոգեբանների կարծիքով՝ էկրանին բռնության տեսարաններով, դաժանությամբ հագեցած իրականության համակարգված ընկալումը՝ հանգեցնում է այն բանին, որ անչափահասների մտքում զարգանում է աշխարհի այլ ընկալում, այլ պատկեր, և դա իր հերթին հանգեցնում է նրանց հոգեբանության բացասական փոփոխությունների:

Անչափահասների դաստիարակության կարևոր առանձնահատկությունը նրանց իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորումն է: Առաջինը ձևավորվում է տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո՝ դրական և բացասական վերաբերմունքի ու գաղափարների միջև պայքարում: Լայն իմաստով՝ իրավական դաստիարակությունը ենթադրում է այն դեպքերի ոչնչացումը և վերացումը, որոնք բացասաբար են անդրադառնում յուրաքանչյուր մարդու գիտակցության և վարքի վրա: Իր հերթին, իրավախախտումների կանխարգելման հիմնական նպատակը դիսֆունկցիոնալ անձի ձևավորման կանխարգելումն է: Այս գործունեությունում հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսմամբ և աշխատանքով չզբաղվող անչափահասներին, մինևույն ժամանակ պետք է քրեական ուղղվածություն ունեցող անչափահասների խմբերը առանձնացվեն կամ վերագնահատվեն ժամանակին:

Ի վերջո՝ անչափահասների իրավախախտումների հիմնական պատճառներն ու պայմանները հետևյալ գործոնների համակցությունն են. սոցիալ-տնտեսական, կազմակերպչական-իրավական (օրենսդրությունը և հասարակության սոցիալական կյանքի հետ դրա համապատասխանության մակարդակը), սոցիալ-ժողովրդագրական և սուբյեկտիվ (տարիքային հոգեբանական առանձնահատկությունները, վարքագծի շարժառիթը): Մինևույն ժամանակ նկատենք, որ անչափահասների իրավախախտումներին նպաստող պատճառների և պայմանների առկայությունը չի ենթադրում հանցագործությունների կատարման ճակատագրական անխուսափելիություն:

Ոչ ֆորմալ անչափահասների խմբերի կողմից կատարվող իրավախախտումների և հանցագործությունների կանխումն իրականացվում է պետական կառավարման մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների՝ հանցագործություն կատարելուն նպաստող պատճառների ու պայմանների հայտնաբերմանը, ինչպես նաև որոշակի քրեածին գործոնների վրա ազդեցության մշակմանն ուղղված մի շարք միջոցառումներով:

Ինչպես հայտնի է, իրավախախտումների կանխարգելումը համակարգ է, որը ներառում է կանխարգելման օբյեկտները (դրանց հիմնական մակարդակներն ու ձևերը), կանխարգելիչ միջոցառումները և այդ աշխատանքն իրականացնող անձանց:

Քրեաբանության մեջ սովորաբար առանձնացվում է ընդհանուր սոցիալական (կամ ընդհանուր) և հատուկ կանխարգելումը: Ընդհանուր կանխար-

գելման դեպքում խոսքն այն մասին է, որ հասարակության դրական զարգացումը, նրա տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ ինստիտուտների կատարելագործումը, կյանքի ճգնաժամային երևույթների և անհամամասնությունների վերացումը օբյեկտիվորեն նպաստում են դրա կանխարգելմանը (սահմանափակելով գործողության շրջանակը, նվազեցնելով մակարդակը, փոքրացնելով վնասակար ազդեցությունները և այլն):

Ի տարբերություն ընդհանուր սոցիալականի, հատուկ միջոցառումներն ուղղված են իրավախախտումների կանխարգելման նպատակներին, այսինքն, դրանք նախագծված են խնդիրների լուծման համար. քրեածին գործոնների վերացում, չեզոքացում, նվազեցում, սոցիալական միկրոմիջավայրի բարելավում, անձանց վարքագծի հղկում (ուսման վարքը հղի է իրավախախտում կատարելու սպառնալիքով) և այլն:

Ոչ ֆորմալ անչափահասների խմբերի կողմից իրականացվող իրավախախտումների դեմ պայքարի միջոցառումների համակարգը հիմնված է ընդհանուր սոցիալական բնույթի գործունեության վրա, որը նախատեսված է ապահովելու համարժեք կենսամակարդակ, բարեկեցություն, մշակույթ, դաստիարակություն և կրթություն: Լինելով հանցավորության դեմ պայքարի ընդհանուր համակարգի մի մասը՝ այն էական առանձնահատկություններ ունի: Դրանք բնորոշվում են նրանով, որ անչափահասների հանցավորության և իրավախախտումների դեմ ուղղված միջոցառումների համակարգը ստեղծվել և գործում է համապատասխան պետության, ընտանիքի, երիտասարդության և քրեական քաղաքականությանը, որն իրագործվում է ընտանիքներին և երեխաներին հատկացվող սոցիալական, տնտեսական տարածաշրջանային ծրագրերի համալիր միջոցառումներով, անչափահասների իրավախախտումների և նրանց միջավայրում եղած հանցավորության դեմ պայքարով:

Պետք է նշել, որ վաղ տարիքում իրավախախտում կամ այլ անօրինական գործողություններ կատարած անձինք ավելի դժվար են ենթարկվում ուղղման, ինչի հետևանքով ռեզերվ են դառնում չափահասների կողմից կատարվող իրավախախտումների համար:

Որպես կանոն, առաջին անգամ որևէ խմբի կազմում իրավախախտում կատարած անչափահասի վաղ հայտնաբերումն ու ժամանակին կանխարգելիչ միջոցառումների իրականացումը զգալիորեն նվազեցնում է անչափահասների մոտ հետագայում նմանատիպ հանցագործությունների կատարման հավանականությունը:

Վաղ կանխարգելումը հիմնականում ուղղված է դեռահասների անկախուն անհատականության համեմատաբար ցածր հակասոցիալական դրսևորումների ուղղմանը: Հնարավոր է կանխել այդպիսի իրավախախտումները միայն դրան նպաստող պատճառներն ու պայմանները հայտնաբերելու և վերացման միջոցով:

Ինչպես գիտեք, մարդը հանցագործ չի ծնվում: Եվ եթե անչափահասը կանգնում է իրավախախտման և հանցագործություն կատարելու ճանապարհին, ապա դրա պատճառները պետք է փնտրել առաջին հերթին ընտանեկան և դպրոցական դաստիարակության բացթողումներում, անձի ձևավորման անբարենպաստ պայմաններում: Ինչպես գրում է ռուս հայտնի իրավաբան Գ.Մինկովսկին. «...անչափահասների հանցագործությունն առաջին հերթին հանդես է գալիս որպես «դաստիարակության սպառում», որպես մատաղ սերնդի սոցիալական ձևավորման գործում ունեցած թերությունների յուրօրինակ ցուցիչ: Այդ թերություններն իրենց հերթին պայմանավորված են նյութական, գաղափարական, հոգեբանական, ներքին, կազմակերպչական բնույթի մի շարք սոցիալական երևույթներով»⁶:

Անչափահասների իրավախախտումների կանխարգելման գործում կարևոր տեղ պետք է զբաղեցնի ժամանցի կազմակերպումը, որովհետև ազատ ժամանակի տնօրինման բնույթը և ժամանցի ոլորտում արժեհամակարգային ուղղվածությունը մեծապես արտացոլում է չափահասի բարոյական և սոցիալական ուղղվածությունը և նրա վարքագիծն առհասարակ: Ազատ ժամանակն անչափահասի կյանքում մեծ կարևորություն ունի, քանի որ հղի է վտանգով, որ անսահմանափակ ազատ ժամանակը տնօրինելու անկարողությունը, բավարար մանկավարժական ազդեցության բացակայությունը հնարավորություն են տալիս պատանիների շրջանում բացասական ազդեցությունների տարածմանը և նրանց կողմից բարոյական և իրավական նորմերի խախտմանը: Դիտարկելով ՀՀ-ում հանցավորության պատճառների վերլուծության արդյունքները՝ Ա.Գաբուզյանը իրավացիորեն նշում է «Դրանց շարքում առաջին տեղը զբաղեցնում է այնպիսի սոցիալ-տնտեսական երևույթը, ինչպիսին համատարած բնույթ կրող չզբաղվածությունն է»⁷: Ազատ ժամանակի տնօրինման

⁶ Стю Минковский Г.М., Тузов А.П. Профилактика правонарушений среди несовершеннолетних. Киев, 1987, էջ 47:

⁷ Стю Габузян А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 93:

խնդիրը սուր է հատկապես գյուղական վայրերում: Նրանց ժամանցի արդյունավետ կազմակերպման համար լուրջ խոչընդոտ է անհրաժեշտ նյութական հիմքի բացակայությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից երբեմն նկատվում է պատանու ժամանցի նշանակության թերագնահատում: Հանգստի կազմակերպման բացակայությունը թույլ չի տալիս պատշաճ կերպով իրականացնել դեռահասների թափառաշրջիկության, հսկողությունից դուրս գտնվելու կանխարգելիչ աշխատանքներ և նրանց զգալի մասին դատապարտում է քրեական կենսակերպի: Շրջայց կատարելիս անհրաժեշտ է հայտնաբերել կրտսեր տարիքային խմբի անչափահասների, պարզել ուշ ժամին փողոցում կամ զվարճանքի վայրերում գտնվելու պատճառները՝ հետազայում նրանց և նրանց ծնողների (կամ նրանց փոխարինող անձանց) հետ կանխարգելիչ զրույցներ ունենալու համար:

Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելման հարցում էական դեր է խաղում իրավական դաստիարակությունը, որի բացթողումները դրսևորվում են օրենքի, սոցիալական դերի մասին հստակ պատկերացումների ձևավորման, առօրյա վարքագծում օրինականության կարևորության և նպատակահարմարության պահանջների ամբողջության մասին համոզմունքի հանդեպ ոչ բավարար ուշադրության մեջ:

Կանխարգելիչ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ԱԳ և ԸԲԿ ստորաբաժանման ծառայողները հետաքննող անձնակազմի հետ միասին պետք է վերապատրաստման դասընթացներ անցնեն, անհրաժեշտ է հաշվի առնել ԱԳ և ԸԲԿ աշխատակիցների թվաքանակի ավելացման հնարավորությունը, ինչպես նաև իրականացնել անչափահասների հետ որոշակի փորձ ունեցող աշխատակիցների ընտրություն:

Հանցագործությունների կատարմանը մեծապես նպաստում է անչափահասների մոտ ստեղծվող անպատժելիության զգացումը ազատագրկման հետ չկապված պատիժ նշանակելու դեպքում: Երբեմն հանցագործություն կատարող անչափահասների նկատմամբ դատարանի մարդասիրական վերաբերմունքը դժվար է որևէ կերպ բացատրել:

Անբարենպաստ ընտանեկան կենսապայմաններում անչափահասների հայտնաբերումը ենթադրում է վերջիններիս և նրանց ծնողներին ուղղված սոցիալական օգնություն բնակչության պաշտպանության սոցիալական մարմինների, կրթության մարմինների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, երիտասարդության հարցերով զբաղվող մարմինների, առողջա-

պահության մարմինների, զբաղվածության ծառայության մարմինների և այլոց կողմից: Այսօր անչափահաս իրավախախտների կանխարգելմամբ իրականում զբաղվում է միայն ոստիկանությունը, մասնավորապես՝ ԱԳ և ԸԲԿ ստորաբաժանումները: Սակայն դա բավարար չէ, քանի որ «ոստիկանական» մեթոդները՝ գործողության հարկադրանքի միջոցների կիրառումը, աշխատանքի երբեմն ձևական բնույթը, պարբերաբար իրականացվող բարոյախտության դաստիարակչական հնարների հակասությունը չեն կարող դրական արդյունք տալ: Ուսումնական հաստատությունների կամ հիմնարկների այն կողեկտիվը, որտեղ սովորում կամ աշխատում է անչափահաս իրավախախտը, նույնպես պիտի իր լուսման ներդնի նրա ուղղման աշխատանքներում: Սակայն մեր օրերում նշված կազմակերպություններում անչափահասների հանցավորության կանխարգելում գործնականում գրեթե չի իրականացվում:

Հանրակրթական դպրոցների կրթական աշխատանքների թերությունները կարելի է բնութագրել այնպես, որ ներկայումս սովորողները չեն զարգացնում քաղաքացիական պատասխանատվության զգացում, չեն ստանում պատշաճ «կոփում» հակասոցիալական ազդեցությունների և բացասական իրավիճակների դեմ, իրենց վարքագծի կառավարման ճիշտ ինքնազննատումը չի ամրագրվում կամ անչափահասները օտարվում են կրթական թիմից և հետագայում կորցնում հետաքրքրությունը ուսման մեջ:

Պետք է նշել, որ միայն իրավախախտ անչափահասի շրջակա միջավայրի բոլոր բացասական աղբյուրների վրա միաժամանակյա ազդեցությունը կարող է լավագույն արդյունքներ տալ անչափահասների խմբակային հանցավորության դեմ պայքարում:

Որպես անչափահասների իրավախախտ վարքագծի կանխարգելման կատարելագործման արդի հիմնախնդիրներ կարող են առանձնացվել նորմատիվ հիմքի բարելավումը, կանխարգելման սուբյեկտների համակարգում և փոխգործակցությունը, դրանց միջև գործառույթների բաշխումը, կադրերի ապահովումը, կանխարգելիչ գործունեություն իրականացնող անձանց քրեագիտական և հոգեբանամանկավարժական պատրաստվածությունը:

Այսպիսով, անչափահասների իրավախախտումների կանխարգելումը բազմակողմանի համակարգային խնդիր է: Տեղական և արտասահմանյան պրակտիկայի դիտարկումը վկայում է բոլոր երկրներում խնդրի արդիականության մասին: Չապամոռնտաժելով անչափահասների իրավախախտումների կանխարգելման՝ տասնամյակների ընթացքում ձևավորված և ժամա-

նակի քննությունն անցած համակարգը՝ նոր հասարակական հարաբերությունների պայմաններում պահանջվում է առաջացող հակասությունների կանխարգելման մեթոդների արդիականացում:

ПРОФИЛАКТИКА ПРАВОНАРУШЕНИЙ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Саакян Александр Габриелович

*Доцент кафедры ОРД и криминалистики
Академии Образовательного комплекса полиции
Республики Армения, полковник полиции*

В статье рассматриваются правонарушения несовершеннолетних, их причины и мотивирующие факторы. Рассматриваются также особенности поведения несовершеннолетних правонарушителей.

Ключевые слова: Несовершеннолетний правонарушитель, профилактика правонарушений, девиантное поведение, окружающая среда, антисоциальные влияния, неблагоприятные условия.

THE PREVENTION OF THE CRIMES, EXECUTED BY THE MINORS IN THE REPUBLIK OF ARMENIA

Sahakyan Aleksandr

*Associate professor of the Chair of the
Operative Intelligence Activity and Criminalistics,
Police Colonel*

The crimes executed by the minors, its causes, motivating factors are discussed in the article. The peculiarities of the minors' behavior, as well as the issues concerning to the prevention of the crimes, countering the future crimes and precluding the prospective to become the heritages of the adult criminals were also studied.

Keywords: Minor criminal, prevention of crimes, behavioral deviation, surrounding, antisocial influences, uncongenial circumstances.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.01.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 04.02.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Մարդայան Վահագն

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի ՕՀԳ և
կրիմինալիստիկայի ամբիոնի ավագ դասախոս,
ոստիկանության փոխգնդապետ*

Ժամանակակից պատերազմի պայմաններում մեծանում է բնակչության և տնտեսության պաշտպանության անհրաժեշտությունը, քանի որ ժամանակակից ռազմական գործողությունների բնույթն ու օգտագործվող ազդեցության միջոցները պահանջում են քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) խնդիրների լուծման համար նոր մոտեցումների և մեթոդների կիրառում:

Աշխարհում ձևավորված ռազմաքաղաքական գործոնների ազդեցության տակ զարգացած երկրների մեծ մասում ի հայտ են եկել ՔՊ զարգացման որոշակի ընդհանուր միտումներ: Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների միջև տեղի են ունենում ՔՊ ոլորտում ծախսերի, պատասխանատվության, իրավասությունների վերաբաշխման գործընթացներ: Մեծանում է տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը: Կատարվում է պետական և ոչ պետական սեկտորներին հատկացվող ծախսերի վերաբաշխում, քանի որ նույնիսկ շատ հարուստ երկրները սեփական բյուջեից չեն կարող լիովին ծածկել ՔՊ ծախսերը: Պետական անվտանգության ապահովման բնագավառում, որում ներառվում է նաև ՔՊ-ն, բնութագրական է դառնում ինտեգրված կառավարման սկզբունքների կիրառման գործընթացը: Վերջին տարիներին ՔՊ ոլորտում կատարվել են հայեցակարգային բնույթի փոփոխություններ, որոնցից են՝ խնդիրների և գործընթացների ընդլայնումը, ինչպես նաև ուժերի և միջոցների կիրառումը ոչ միայն պատերազմական, այլև լայնամասշտաբ արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) հետևանքների վերացման համար, ներառյալ տեխնոլոգիական ահաբեկչության հետևանքների վերացումը: ՔՊ համակարգերը դարձել են ավելի շարժունակ և ճկուն: ՔՊ արդյունավետությունը մեծանում է նրա միջոցառումների նախապատրաստման և

անցկացման գործընթացում քաղաքացիական հասարակության բոլոր շերտերի և պետական կառույցների մասնակցության շնորհիվ: Օտարերկրյա պետություններում ձգտում են ՔՊ-ն դարձնել հասարակության բնականոն կյանքի բաղկացուցիչ մասը, ուր յուրաքանչյուր քաղաքացի մասնակցում է ՔՊ միջոցառումներին: ՔՊ զարգացման միջազգային փորձի վերլուծությունից երևում է, որ ՔՊ-ն աստիճանաբար դառնում է ավելի ու ավելի օպերատիվ, ունակ գործելու ինչպես ռազմական, այնպես էլ խաղաղ պայմաններում¹:

Սպիտակի երկրաշարժն ամենաաղետալի սեյսմիկ իրադարձությունն էր, որի հետևանքով գոհվեց շուրջ 25000 մարդ, 15000-ը դարձավ հաշմանդամ, իսկ 517000-ը՝ անօթևան: Սպիտակի երկրաշարժը հանգեցրեց 14.2 միլիարդ դոլարի տնտեսական վնասի:

Մեր երկրի տարածքի 1/3-ը գտնվում է սողանքավտանգ գոտում: Ազգաբնակչության 15% բնակվում են այս տարածքներում: Սողանքից պատճառված տարեկան վնասը մոտ է 10 միլիոն դոլարի:

Վերջին տասնամյակում ավելացել են նաև օդերևութաբանական աղետալի երևույթների հաճախականությունը, որը ևս մեծ վնաս է հասցնում ՀՀ-ին:

Տեխնոլոգիական սարքավորումները նույնպես հանդիսանում են ռիսկի պոտենցիալ աղբյուրներ: Հայաստանում գործում է Մեծամորի ատոմակայանը, ինչպես նաև թվով 26 քիմիական գործարաններ, որոնք օգտագործում են ամոնիակ, քլոր, քլորաթթու, ազոտաթթու և այլ ուժեղ ներգործող թունավոր նյութեր: 1500-ից ավելի ձեռնարկություններ հատկանշվում են բարձր պայթյունավտանգությամբ և հրդեհավտանգությամբ:

ՀՀ-ի համար վտանգ են ներկայացնում նաև կլիմայական գլոբալ փոփոխությունները: Համաձայն կանխատեսումների 2100թ-ին օդի ջերմաստիճանը բարձրանալու է 1.7 աստիճանով, մինչդեռ տեղումները նվազելու են 10%-ով²:

Ելնելով վերոգրյալից, արտակարգ իրավիճակներում բնակչության

¹ Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկի նվազեցման ռազմավարություն, ՀՀ կառավարության № 281 որոշում, 7 մարտի, 2012թ.:

² Կիրառական ձեռնարկ՝ տեղական մակարդակներում ռիսկի կառավարում, Երևան 2012

պաշտպանության համակարգի ստեղծումը կարևոր նշանակություն ստացավ ՀՀ-ում, հաշվի առնելով երկրի բնակլիմայական պայմանները, աշխարհագրական դիրքը, ռազմաքաղական իրադրությունը, վտանգավոր օբյեկտների առկայությունը, բնակչության սոցիալական վիճակը և այլն:

Սպիտակի երկրաշարժը բացահայտեց ՀՀ ՔՊ համակարգի շատ հիմնահարցեր, որը դարձավ այդ համակարգի արմատական վերակազմավորման ազդակը: Համակարգի ստեղծման և զարգացման պատմությունը համոզիչ կերպով ապացուցում է, որ ժամանակակից տեխնիկական առաջընթացին զուգընթաց աճում է պետության դերն ու ազդեցությունը բնական և տեխնածին աղետներից բնակչության և տարածքների պաշտպանության ապահովման գործում:

Եվ եթե նախկինում պետության առանձին գործողություններն ուղղված էին տեղի ունեցած աղետների հետևանքների վերացմանը, ապա աղետների աճը ստիպեց նորովի նայել համակարգի դերին և նշանակությանը, ստեղծել համապատասխան իրավական դաշտ, հատուկ ուժեր, բարձրացնել կառույցի կարգավիճակը մինչև ծառայություն (ՀՓԾ) և նախարարություն (ՀՀ ԱԻՆ), ընդլայնելով համակարգի խնդիրները և լիազորությունները մինչև աղետների ռիսկի նվազեցում (ԱՌՆ):

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործունեությունը գրեթե ամբողջովին կազմակերպվում և իրականացվում է միջազգային համագործակցության շրջանակներում հետևյալ կազմակերպությունների՝ ՄԱԿ, ՆԱՏՕ, ՄԱԳԱՏԵ, ԱՊՀ երկրների, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհուրդը և այլն:

1994 թվականից Հայաստանը հանդիսանում է «Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության» լիիրավ անդամ, ինչը հնարավորություն է տալիս ուղղակի գործնական կապեր հաստատել տարբեր երկրների համապատասխան ազգային կառույցների հետ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ոչ հարուստ պատմության մեջ առանձնանում է 1998թ-ը, երբ ընդունվեց համակարգի գործունեությունը կանոնակարգող առաջին՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: Օրենքը հիմք հանդիսացավ ԱԻ-ում բնակչության պաշտպանության պետական կառավարման համակարգի ստեղծման համար, որի հիմնական նպատակն է՝ պետական կառա-

վարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև դրանց ուժերի և միջոցների համախմբումը՝ ԱԻ-ի կանխման և հետևանքների վերացման գործընթացի արդյունավետ իրականացման համար: ԱԻ-ում բնակչության պաշտպանության միասնական համակարգն իր օրենսդրական, նյութական, ֆինանսական, տեխնիկական, կադրային և այլ ապահովմամբ դարձավ ՀՀ-ում աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) բազմաբնույթ և բազմապրոֆիլ գործընթացների հիմքը, իր մեջ ընդգրկելով կառավարման բոլոր մակարդակները՝ ՀՀ կառավարությունից մինչև տեղական ինքնակառավարման մարմիններ³:

2005թ հունվարի 18-22-ը Ճապոնիայի Հյոգո նահանգի Քոբե քաղաքում տեղի ունեցավ աղետների նվազեցման համաշխարհային համաժողով, որին մասնակցում էր նաև ՀՀ-ը: Այստեղ ընդունվեց 2005-2015 թվականների «Ազգերի և համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացման գործողությունների ծրագիրը»:

Հիմք ընդունելով Յոկոհամայի ռազմավարության վերանայված եզրակացությունները, ինչպես նաև ԱՌՆ-ն համաշխարհային հանձնաժողովի քննարկումները և մասնավորապես՝ ռազմավարական նպատակներն ու ակնկալվող արդյունքները, հանձնաժողովն ընդունեց գործողությունների հետևյալ հինգ գերակա ուղղությունները՝

1. երաշխավորել, որ աղետների ռիսկի նվազեցումը պետական և տեղական նշանակության առաջնայնություն է,
2. բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը,
3. օգտագործել գիտելիքը, նորարարությունը և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար,
4. նվազեցնել հիմքային ռիսկերի գործոնները,
5. բարձրացնել աղետներին արձագանքելու պատրաստվածությունը:

2015թ մարտի 18-ին Ճապոնիայի Մենդայ քաղաքում կայացած ՄԱԿ-ի համաշխարհային հանձնաժողովն ընդունեց ԱՌՆ-ի 2015-2030 թվականների

³ Աղետների նվազեցման կրթություն՝ ձեռնարկ կրթական հաստատությունների և դպրոցների մանկավարժների համար:

շրջանակային ծրագիրը: Մենդայի գործողությունների ծրագիրը Հյուգոյի գործողությունների 2005-2015 թվականների ծրագրի իրավահաջորդ գործիքն է:

Մենդայի ծրագիրը ներկայացնում է հետևյալ չորս գերակա ուղղությունները.

1. աղետների ռիսկի գիտակցում,
2. աղետների ռիսկի պետական կառավարման ուժեղացում աղետների հաղթահարման համար,
3. ներդրում ԱՌՆ-ի ոլորտում դիմակայության հզորացման համար,
4. աղետի պատրաստվածության ամրապնդում՝ արձագանքում և ավելի արդյունավետ վերականգնում ու վերակառուցում ապահովելու համար:

Աղետների ռիսկի գիտակցում.

Աղետների ռիսկի նվազեցման կարևոր բաղադրիչ է աղետների ռիսկի գիտակցումը: Գիտակցում ասելով հասկանում ենք ազգային և տեղական մակարդակներում նոր գիտելիքների ներդրում, որոնք կարող են օգտագործվել նախաաղետային ռիսկի գնահատման, կանխարգելման և մեղմացման, ինչպես նաև աղետների արդյունավետ արձագանքման և պատշաճ պատրաստվածության ապահովման համար:

Այս բնագավառում պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործառնություններից է՝

- մշակել, պարբերաբար թարմացնել և պետական կառավարման վարչատարածքային մարմիններին և համայնքներին տրամադրել աղետների ռիսկի մասին տեղայնացված տեղեկատվություն (ռիսկի քարտեզներ),
- կանոնավոր կերպով գնահատել, արձանագրել, տեղեկացնել և վերլուծել դրանց ազդեցությունը տնտեսական, սոցիալական, առողջապահական, կրթական, բնապահպանական և մշակութային ժառանգության ոլորտների վրա, որը պետք է լինի կոնկրետ վտանգների սպառնալիքի և խոցելիության համատեքստում,
- օգտագործել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորարարությունները, չափորոշման գործիքները՝ տվյալների հավաքագրման, վերլուծության ու տարածման գործընթացները զարգացնելու նպատակով,
- հարստացնել բոլոր մակարդակների՝ պետական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակության, համայնքների և կազմավորների, ինչպես

նան մասնավոր ոլորտի ներկայացուցիչների գիտելիքները՝ նրանց հետ կիսելով առկա փորձը, քաղված դասերը, լավագույն գործելակերպի օրինակները:

Աղետների ռիսկի պետական կառավարման ուժեղացում աղետների հաղթահարման համար.

Աղետների ռիսկի պետական կառավարումը կարևոր դեր է կատարում աղետների ռիսկի արդյունավետ կատարման հարցում: Պետական կառավարման ոլորտներում անհրաժեշտ է հստակ պատկերացնել գործընթացը, ունենալ պլաններ, համապատասխան մասնագիտական կարողություններ և իրականացնել ուղղորդող ու համակարգող գործառույթ, ինչը կհանգեցնի աղետների կանարգելմանը, հետևանքների մեղմացմանը, արագ արձագանքմանը, վերականգնմանն ու վերակառուցմանը՝ նպաստելով աղետների ռիսկի նվազեցմանը:

Ներդրում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում դիմակայության հզորացման համար.

Պետական և մասնավոր ներդրումներն աղետների ռիսկի կանխարգելման և նվազեցման ոլորտում կարևոր են մարդկանց, համայնքների և պետության սոցիալ տնտեսական, առողջապահական, մշակութային, ինչպես նաև բնապահպանական դիմակայության բարձրացման համար: Ներդրումները կարևորագույն դեր են կատարում մարդկային կյանքեր փրկելու, աղետների վնասների կանխման ու նվազեցման գործում:

Աղետների պատրաստվածության ամրապնդում արդյունավետ արձագանքման համար.

Համաշխարհային մասշտաբներով աղետների ռիսկի աճը և սպառնալիքի մեծացումը ցույց են տալիս, որ անհրաժեշտ է ավելի ամրապնդել աղետների արձագանքման պատրաստվածությունը և ապահովել համապատասխան կարողություններ բոլոր մակարդակներում արագ և արդյունավետ արձագանքման և վերականգնման գործողություններ իրականացնելու համար: Այս գործընթացը հարկավոր է պլանավորել մինչև աղետը, որը շատ կարևոր է արդյունավետ վերականգնման և վերակառուցման համար: Այս գործըն-

թացների հիմքում ընկած է ինչպես ԱՌՆ-ը, այնպես էլ՝ պետության դիմակայության բարձրացումն ընդդեմ աղետների⁴:

Խոսելով աղետների ռիսկերի նվազեցման մասին, ներկայացնենք ռիսկի և խոցելիության գնահատման կարգը: Ռիսկը դա կործանարար հետևանքների կամ սպասվող կորուստների (գոհեր, վիրավորներ, ունեցվածքի կամ ապրելու միջոցների կորուստ, տնտեսական ցնցումներ և շրջակա միջավայրին հասցված վնաս), հավանականությունն է՝ խոցելիության և բնական ու մարդածին սպառնալիքների փոխազդեցության հետևանքով:

Ավանդաբար ռիսկն արտահայտվում է «Ռիսկ = սպառնալիք X խոցելիություն» բանաձևով:

Արտակարգ իրավիճակների ստեղծման սպառնալիքի պատճառներ կարող են հանդիսանալ հետևյալ գործոնները՝ պատերազմական, տնտեսական, ահաբեկչական, սոցիալական և այլն:

Երբ խոսքը խոցելիության ֆիզիկական առումների մասին է, որոշ դիսցիպլիններ ներառում են նաև ազդեցության հասկացությունը: Ֆիզիկական վնասի հավանականության արտահայտումից բացի կարևոր է հասկանալ, որ ռիսկը կարող է ստեղծվել և գոյություն ունենալ սոցիալական համակարգի ներսում: Անհրաժեշտ է հաշվի առնել ռիսկի սոցիալական ենթատեքստը, ինչպես նաև այն, որ մարդիկ պարտադիր չէ, որ միատեսակ ընկալեն ռիսկը և դրա սկզբնապատճառները:

Ռիսկի գնահատման գործընթացը հիմնվում է սպառնալիքի տեխնիկական բնութագրերի որոշման, ինչպես նաև դրա ֆիզիկական, տնտեսական, սոցիալական ու էկոլոգիական չափումների և ազդեցության վերլուծության վրա:

Արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկի գնահատման եզրափակիչ փուլը կատարվում է ռիսկի քանակական ցուցանիշների հաշվարկով՝ $R = PDC$, որտեղ՝

R- ռիսկի արժեքն է,

P- աղետի հավանականությունը,

D- զոհվածների քանակը,

⁴ Հյոգոյի 2005-2015թթ Գործողությունների ծրագիր «Ազգերի և համայնքների աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում », Աղետների նվազեցման համաշխարհային համաժողով, հունվարի 18-25, 2005թ. Քոբե, Հյոգո, Ճապոնյա:

Շ- նյութական կորուստները:

Արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկի կառավարումը հնարավոր է տեխնաժին և բնական ծագում ունեցող վտանգներից բնակչության՝ պաշտպանական, ինժեներատեխնիկական և կազմակերպչական միջոցառումների, հակավթարային ծրագրերի մշակմամբ, արտակարգ իրավիճակի առաջացման ռիսկի քանակական և որակական գնահատականի հիման վրա, և դրա արդյունքների մասին բնակչությանն ու կառավարման մարմիններին իրազեկելու միջոցով: Այստեղ հատկապես հատուկ ուշադրություն պետք է դարձնել հաղթահարման կարողություններին՝ հաշվի առնելով ռիսկի տարբեր սցենարներ:

ПРОЦЕССЫ, НАПРАВЛЕННЫЕ НА СНИЖЕНИЕ РИСКОВ БЕДСТВИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Տարդարյան Վառգ Բարսեղյան

*Старший преподаватель кафедры ОРД и криминалистики
Академии Образовательного комплекса полиции
Республики Армения, подполковник полиции*

С каждым годом, в связи с происходящими климатическими изменениями на земном шаре и стремительным развитием темпа научно-технического прогресса, возрастает угроза чрезвычайных ситуаций природного и техногенного характера, что может привести к отрицательному воздействию на жизнь и здоровье людей.

Обобщая международные процессы, направленные на снижение риска бедствий, автор указывает участие РА в решение этих глобальных задач, как равноправный член «Международной организации гражданской обороны».

Ключевые слова: система гражданской обороны, ликвидация последствий чрезвычайных происшествий, национальная платформа снижения рисков бедствий, стратегия снижения рисков бедствий, осознание риска, угроза риска, уязвимость бедствий.

THE PROCEDURES TO DECREASE THE DISASTER RISKS IN THE REPUBLIC OF ARMENIA

Sardaryan Vahagn

*Senior Lecturer of the Chair of the
Operative Intelligence Activity and Criminalistics,
Police Lieutenant Colonel*

The challenges regarding to the spontaneous manufactured and ecological disasters are increasing year by year, which are results of the climate rapid changes, taken place on the Earth, which can have its negative influences on the human beings' lives and health.

Summing up the international procedures, intended for the decreasing disaster risks, the authors introduce the participation of the Republic of Armenia into the solution of global problems, as a full member of the international organization "Civil Defense".

Keywords: The system of Civil defense, the elimination of the consequences of the emergency situations, national platform of the decreasing disaster risks, the strategy of the decreasing disaster risks, the consequence of the risks, the challenges of the disasters, disaster vulnerability.

Հոդվածը գրախոսվել է՝ 10.01.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 14.02.2019թ.

ՄԱՐԴՈՒ ՁԵՌՔԻ ՔՐՏՆԱՃԱՐՊԱՅԻՆ ՀԵՏՔԵՐԻ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԶՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդարյան Լուսինե

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի

իրավագիտության ֆակուլտետի ՕՀԳ և

կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս,

ոստիկանության մայոր

Դեպքի վայրում հայտնաբերված՝ հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց քրտնաճարպային հետքերը կրող առարկաների բազմազանությունը թույլ են տալիս իրականացնել կրիմինալիստիկական բազմակողմանի հետազոտություններ: Այս կամ այն առարկայի վրա հայտնաբերված հետքերը կոնկրետ անձի կողմից թողնված լինելու վերաբերյալ հետևությունները քննվող գործի համար կարող են ունենալ կարևոր, իսկ հաճախ նաև վճռորոշ նշանակություն, քանի որ դրանցով է հիմնավորվում անձի՝ հանցագործության վայրում գտնված լինելու և որոշակի առարկաների վրա ներգործելու փաստը:

Դեպքի վայրի զննության ժամանակ հայտնաբերված հետքերի վաղեմության պարզումը հնարավորություն է ընձեռնում պարզել հանցագործության կատարման ժամանակային բնութագիրը: Սակայն պետք է նշել, որ կոնկրետ անձի քրտնաճարպային հետքերի հայտնաբերումը ոչ միշտ է վկայում քննվող դեպքին վերջինիս առնչություն ունենալու մասին, քանի որ հետքերը կարող են թողնված լինել նաև դեպքից առաջ կամ հետո:

Դրանով է թերևս պայմանավորված ձեռքերի քրտնաճարպային հետքերի վաղեմության պարզման խնդրի կարևորությունը:

Քրտնաճարպային հետքերի առաջացումից մինչ վերջիններիս հայտնաբերումը և հետազոտումը կարող է անցնել բավականին երկար ժամանակ՝ մի քանի ժամից մինչև տասնյակ տարիներ: Մասնագիտական գիտագործնական աշխատություններում այդ ժամանակահատվածը հանդիպում է տարբեր ձևակերպումներով, օրինակ՝ հետքերի վաղեմություն, հետքերի առաջացման վաղեմություն: Վ.Մ.Մեշկովի «Ժամանակային կապերի» մասնավոր

կրիմինալիստիկական տեսության մեջ՝ երևույթների տևողության ժամանակային բնութագիրը ներկայացվում է «Ժամանակային միջակայք» ձևակերպմամբ¹:

Տ. Ֆ. Մոխսենան իր մենագրության մեջ անդրադարձել է ձեռքերի քրտնաճարպային հետքերի հետ աշխատելու տարբեր մոտեցումների ուսումնասիրությանը: Հետքերի առաջացումից մինչև հայտնաբերումն ընկած ժամանակահատվածը բնութագրելու համար նա օգտագործում է «ձեռքերի քրտնաճարպային հետքերի վաղեմություն» ձևակերպումը²:

Ս.Ս. Սամիշչենկոյի կողմից օգտագործվում են «թողնված հետքերի վաղեմություն» կամ «հետքերի առաջացման վաղեմություն» ձևակերպումները³:

Քրտնաճարպային հետքերի հետ աշխատելու ընթացքում վերջիններիս առաջացման վաղեմությունը պարզելու անհրաժեշտությունը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքներով՝

1. ձեռքի հետքերի առաջացման և քննվող հանցագործության կատարման ժամանակի փոխհարաբերությամբ,

2. հետքերի առաջացման ժամանակային բնորոշմամբ՝ որպես ձեռքերի հետքեր հայտնաբերելու և վերցնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, նյութերի և արդյունավետ մեթոդների ընտրության հիմք:

Խնդրի լուծման առաջին ուղղությունն ունի անմիջական օպերատիվ-հետախուզական և դատավարական (քննչական) նշանակություն: Հետքերի առաջացման վաղեմության հարցի լուծումը կարևոր է ապացուցման առարկա հանդիսացող հանգամանքները պարզելու համար: Հետևաբար, դրանց լուծման համար պահանջվում է մեթոդների մանրակրկիտ մշակում և հավաստի, գիտական հիմնավորում:

Երկրորդ ուղղությունն անմիջականորեն կապված է փորձագետ-քրեագետի աշխատանքի արդյունավետության հետ: Հետքի առաջացման վաղե-

¹ Տե՛ս Մешков В.М. Основы криминалистической теории временных связей. М., 1994. էջ 63:

² Տե՛ս Моисеева Т. Ф. Комплексное криминалистическое исследование потожировых следов человека. М., 2000. էջ 82:

³ Տե՛ս Самищенко С. С. Современная дактилоскопия: основы и тенденции развития: курс лекций: учеб.-метод. пособие. М., 2004. էջ 123:

մության պարզումը հնարավորություն է տալիս ձեռքերի հետքերը հայտնաբերելու և վերցնելու տեխնիկական միջոցների, նյութերի և արդյունավետ մեթոդների ճիշտ ընտրություն կատարել, հետևաբար նաև՝ ստանալ հետքում արտացոլված նախշի որակյալ պատկերը, ինչը բարձրացնում է հետքի հավաստիությունը՝ իբրև ապացույց, ինչպես նաև՝ էականորեն բարձրացնում է ավտոմատացված տվյալների բազայում նույնական նախշերի որոնման արդյունավետությունը:

Քրտնաճարպային հետքերի առաջացման վաղեմության պարզումն օգնում է լուծել հետևյալ խնդիրները՝

1. Հանցագործության դեպքի և կասկածյալի⁴ փոխադարձ ժամանակային կապի բացահայտում այն դեպքերում, երբ գործով առկա այլ ապացույցներով այդ փոխադարձ կապն ակնհայտ չէ: Պատկերացնենք մի այնպիսի իրավիճակ, երբ հանցագործությունը կատարվել է շինությունում, որտեղ կասկածյալը, ում հետքերը հայտնաբերվել են դեպքի վայրի գննության ընթացքում, եղել է կամ կարող էր լինել մինչև հանցագործության դեպքը: Կասկածյալի ձեռքի հետքերը դեպքի վայրում կարող են առաջանալ, ինչպես հանցագործության կատարման ընթացքում, այնպես էլ մինչև հանցագործության կատարվելը և դրանից հետո: Այս դեպքում կասկածյալի առնչությունը դեպքին պարզելու միակ միջոցը փորձագիտական հետազոտությամբ հետքերի առաջացման վաղեմության պարզումն է:

2. Կասկածյալների ցանկից անձի բացառումը՝ հետքի առաջացման իրական ժամանակը պարզելու արդյունքում: Այդպիսի հետազոտությունը կարող է լինել շատ արդյունավետ, օրինակ, երբ հանցագործության դեպքի հետ ուղղակի կապ ունեցող առարկայի վրա գննության ընթացքում հայտնաբերվում են երկու տարբեր անձանց կողմից թողնված մատնահետքեր: Պարզելով, որ կասկածյալներից մեկի մատնահետքերը թողնվել են հանցագործության կատարման հետ չհամընկնող ժամանակահատվածում կարելի է բացառել վերջինիս մասնակցությունը քննվող դեպքին:

3. Ձեռքի քրտնաճարպային հետքերի առաջացման ժամանակը պարզե-

⁴ Սույն աշխատանքում «կասկածյալ» եզրույթն օգտագործվում է միայն կրիմինալիստիկական կոնտեքստում՝ դրա տակ ընդհանրապես հասկանալով հանցագործության մեջ կասկածվող անձին:

լու միջոցով հանցագործության կատարման փաստի և ժամանակի պարզումը: Ենթադրենք, հանցագործության կատարման փաստը, հետևաբար նաև ժամանակը հայտնի չլինելու պայմաններում հայտնաբերվել է իր վրա մատնահետք կրող օբյեկտ՝ հրազեն, սառը զենք և այլն: Այս դեպքերում ձեռքի քրտնաճարպային հետքերի առաջացման վաղեմության խնդրի կողմնորոշող լուծումը հանցագործության կատարման փաստի և ժամանակի պարզման հնարավորություն է ընձեռնում:

Տարբեր երկրների փորձագիտական հաստատություններում քրտնաճարպային հետքերի վաղեմությունը պարզելու մի քանի մոտեցումներ են կիրառվում, որոնք հիմնված են հետքերում տեղի ունեցող փոփոխությունների տարբեր ցուցանիշների ուսումնասիրման վրա:

Հարցի լուծման հիմնական մոտեցումները հետևյալն են՝

- քրտնաճարպային հետքերի վաղեմության պարզումը չմշակված և մշակված հետքերի կազմաբանական (մորֆոլոգիական) հետազոտության միջոցով,

- հետքերի առաջացման վաղեմության պարզումը հետքի և հետքն արտացոլող մակերևույթի փոխազդեցության բնույթից ելնելով,

- հետքի վաղեմության պարզումը ըստ օտար նյութերի շերտավորման աստիճանի (խոսքը փոշուց առաջացած շերտի մասին է),

- հետքում տեղի ունեցած կենսաքիմիական փոփոխությունների միջոցով վաղեմության պարզումը:

Հետքերի առաջացման վաղեմության խնդրի լուծման բոլոր մոտեցումները հիմնված են ժամանակի ընթացքում հետքում տեղի ունեցող փոփոխությունների ֆիքսման վրա: Այդ փոփոխությունների բնույթը և արագությունը պայմանավորված են մի շարք գործոններով, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի⁵:

Առաջին խմբի մեջ մտնում են քրտնաճարպային հետքի, այսինքն՝ հետք առաջացնող նյութի հատկությունները:

Իրենց ֆիզիկաքիմիական էությամբ քրտնաճարպային նյութերը հանդիսանում են ճարպի էմուլսիան ջրում (քրտնաճարպը պարունակում է քրտինք՝ ջրի մեծ քանակությամբ (98-99.7%) և ճարպային նյութ՝ ճարպային

⁵ Տե՛ս Самищенко С. С. Современная дактилоскопия: основы и тенденции развития: курс лекций: учеб.-метод. пособие. М., 2004. էջ 130:

գեղձերի և եղջերձարայի արտազատման արդյունք (Էմուլսիա): Ինչքան շատ է ճարպի քանակը քրտնաճարպային նյութում, այնքան ցածր է հետք առաջացնող նյութի ծորունությունը և ավելի հստակ են արտացոլվում մաշկապտկիկային գծանախշերի մանրամասները (մասնավոր հատկանիշները) և հետքն ավելի կայուն է արտաքին գործոնների ազդեցության նկատմամբ: Բացառապես քրտինքի բաղադրությանը բնորոշ նյութերով առաջացած հետքերը հինգ անգամ ավելի արագ են հնանում և ոչնչանում արտաքին գործոնների ազդեցության ներքո:

Պրոֆեսոր Ս.Ս. Մամիշչենկոյի կողմից անցկացված հետազոտությունները ցույց են տվել, որ ծորուն հետք առաջացնող նյութերով ձևավորված հետքերին բնորոշ են հստակության բացակայությունը և նման հետքերով հնարավոր չէ իրականացնել նույնականացման հետազոտություններ⁶:

Երկրորդ խմբի մեջ են մտնում հետք ընդունող մակերեսի հատկությունները: Բոլոր հետք ընդունող մակերեսները կարելի է բաժանել ներծծող մակերեսների և չներծծող մակերեսների: Չներծծող մակերեսները իրենց ադիեզիոն (հարակցական) հատկություններով բաժանվում են խիստ ադիեզիոն և թույլ արտահայտված ադիեզիայով մակերեսների: Բացի ադիեզիայից, քրտնաճարպային հետքերի առաջացման գործում դեր ունեն նաև աջակցող երևույթները՝ աուտոհեզիան (ինքնահարակցություն) և կոզեզիան (բաղակցություն):⁷ Բացի այդ չներծծող մակերեսները ունեն թրջվելիության հատկություն:

Հետքի բաղադրության մեջ մտնող նյութերը՝ կախված հետք առաջացնող նյութի մազանոթային հատկություններից, ներծծող մակերեսների վրա որոշակի արագությամբ են ներծծվում, դրանով էլ որոշվում է հետքի հնանալու դինամիկան:

Ներծծող և չներծծող մակերեսների վրա հետքի առաջացման ընթացքի վրա կարող են ազդել բազմաթիվ լրացուցիչ գործոններ, որոնք ունակ են փոփոխել այդ մակերեսների հատկությունները և համապատասխանաբար նաև հետք առաջացնող նյութի հետ փոխազդեցության չափանիշները:

⁶ Տե՛ս Самищенко С. С. Современная дактилоскопия: основы и тенденции развития: курс лекций: учеб.-метод. Пособие. М. 2004. էջ 138:

⁷ Տե՛ս В.И. Перепелкин. Кинетические характеристики механизма слепообразования в трасологической экспертизе: автореф. Дис. Канд. Наук. М., 1997. էջ 14:

Հետքի արագ հնանալու վրա էապես ազդող գործոնների հաջորդ խումբը հանդիսանում են օբյեկտի գտնվելու վայրի արտաքին միջավայրին բնորոշ գործոնները: Առավել մեծ ազդեցություն են թողնում ջերմաստիճանը, խոնավությունը, օդի փոշոտվածության աստիճանը և այլն:

Ս.Ս. Մամիշչենկոյի կողմից արված փորձի ժամանակ օգտագործվել են երկու հետք ընդունող մակերեսներ՝ մաքուր ապակու կտոր և մաքուր թուղթ: Հետք ընդունող այլ մակերեսների բնույթը հետազոտելու անհրաժեշտության դեպքում նրանց հատկությունները համեմատվել են նշված երկու մակերեսների հատկությունների հետ: Ապակու կտորի վրա արված փորձի էությունը կայանում էր հետևյալում՝ միմյանց կիպ դրված երկու ապակու կտորների վրա թողնվել են ձեռքի քրտնաճարպային հետքեր: Ապակու կտորները պահվել են տարբեր ժամանակային տևողությամբ՝ փոշուց պաշտպանված, սենյակային ջերմաստիճանի պայմաններում: Տարբեր ժամանակային միջակայքերում հետքերը լուսանկարահանվել են թեք ընկնող թափանցող լույսի տակ: Փորձը ավարտվել է հետքերի կազմաբանական (մորֆոլոգիական) հետազոտմամբ: Հետազոտման օբյեկտ հանդիսացող ապակու կտորների վրա թողած հետքերում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Հետքի հնանալու առաջին նշանները մեկ օր անց արդեն իսկ սկսել են նկատվել: Այդ փոփոխությունները դրսևորվել են նախ հետքի խամրելով: Խամրելը պայմանավորված է ճարպերի օքսիդացմամբ և մաշկապտկիկային գծանախշերի առավել բարակ հատվածների չորանալով⁸:

Տ.Ֆ. Մոխեսևայի մենագրությունում⁹ և Ա.Լ. Մորոզովայի ատենախոսությունում¹⁰ նշվում է, որ հետքերում նախ և առաջ ցնդում է ջուրը: Հետքում առաջացած փոփոխությունները տեսանելի են դառնում միայն ծավալադիտակային մանրադիտակով 30-50 անգամյա խոշորացման շնորհիվ: 7-10 օր անց օպտիկական ոչ մեծ խոշորացման պայմաններում սպիտակավուն և խոնացած հետքերը նկատելի են դառնում:

⁸ Ст'у Самищенко С. С. Современная дактилоскопия: основы и тенденции развития: курс лекций: учеб.-метод. Пособие. М., 2004. էջ 139:

⁹ Ст'у Моисеева Т. Ф. Комплексное криминалистическое исследование потожировых следов человека. М., 2000. էջ 83:

¹⁰ Ст'у Морозова А.Л. Криминалистическое исследование потожировых следов рук человека с целью установления их давности: автореф. дис. канд. юр. наук. М., 1997. էջ 22:

Թեք ընկնող լույսի տակ չմշակված հետքերը անգն աչքով զննելիս հնարավոր է ժամանակային բնութագրերով և հետք առաջացնող նյութի ծավալով տարբերվող հետքերը միմյանցից սահմանազատել: Դա շատ կարևոր է, քանի որ փոշիներով մշակման ենթարկվելուց հետո թարմ հետքերը, հետք առաջացնող նյութի քիչ քանակություն պարունակելու դեպքում, նմանվում են քրտնաճարպային նյութի մեծ քանակ պարունակող հին հետքերի: Քրտնաճարպային հետքում ընթացող կարևոր կենսաքիմիական գործընթացներից բացի՝ Տ.Ֆ. Մոխսեևայի աշխատությունում նշվում են չհազեցած ճարպաթթուների նվազեցումը, եռազլիցերիդների հիդրոլիզը (ջրատարրալուծումը), սպիտակուցների կազմալուծումը¹¹:

Հարթ, չնեթծող մակերեսների վրա գտնվող թարմ, չմշակված հետքերում հնանալու գործընթացի վրա ազդող կազմաբանական (մոլեկուլոգիական) հատկանիշներից առաջինը մաշկապտկիկային գծանախշերի արտացոլվածքների ծայրերում խոշոր կաթիլների տեղակայումն է: Հետագայում այդ հատկանիշը անհետանում է:

Հետքի հնանալու առաջին հատկանիշները կարող են երևալ մեկ օր անց: Դրանցից կարելի է առանձնացնել խոշորացույցով հետազոտելու միջոցով երևացող առանձին հատվածների խամրելը և սպիտակավունությունը: Սպիտակավունությունը և խամրելը առավել ակնհայտ են դառնում 7-10 օր հետո: Հետագայում հնանալու այդ հատկանիշները առավել արտահայտված են դառնում և փոշուց անհասանելի տեղում գտնվելու դեպքում կարող են պահպանվել ընդհուպ մինչև մի քանի տարի:

Այլ կերպ են տեղի ունենում հայտնաբերող նյութերի հետ փոխազդեցության մեջ մտած հետքերի փոփոխությունները:

Ս. Ս. Մամիշչենկոյի կողմից արված փորձը ցույց է տալիս առաջին երեք շաբաթվա ընթացքում հիդրոֆիլային հատկություններով օժտված հատուկ լյումինեսցենտային փոշիների միջոցով ֆիքսված հետքում տեղի ունեցող փոփոխությունները:

Ապակու վրա հայտնվելուց անմիջապես հետո հետքի քրտնաճարպային

¹¹St' u Моисеева Т. Ф. Комплексное криминалистическое исследование потожировых следов человека. М., 2000. էջ 86:

մասը թրջվողականության ազդեցության ներքո, սկսում է ծորալ: Հետքի գոյության երկրորդ և երրորդ օրերին այդ հատկանիշը դառնում է տեսանելի, իսկ տասներորդ օրը՝ ակնհայտ: Քսաներորդ օրը հետքի հանդիպակաց հատվածների քրտնաճարպային նյութի որոշ հատվածներ մասամբ միաձուլվում են: Փորձագետի աշխատանքում հատուկ հիդրոֆիլային փոշիների կիրառումը թույլ կտա դեպքի վայրում հայտնաբերել միայն թարմ հետքերը, իսկ հին հետքերը կտարբերվեն իրենց տեսքով՝ հետևաբար դրանց հետ լրացուցիչ աշխատանքներ տանելու անհրաժեշտություն չի առաջանա:

Հետքերի վաղեմության պարզման խնդրի լուծման բոլոր մոտեցումներից մասնագիտական գրականության մեջ առավել տարածված է հետքի գնահատումը՝ ելնելով հայտնաբերող նյութերի հետ փոխազդեցության բնույթից:

Զանազան մակերեսների վրա վաղեմությամբ և պահպանման պայմաններով տարբերվող հետքերի հայտնաբերման համար նախատեսված նյութերի և միջոցների վերաբերյալ կուտակված է մեծ էմպիրիկ նյութ:

Վ.Ա. Իվաշկովի ուսումնական ձեռնարկում ներկայացված է աղյուսակ, որում ցույց է տրվում տարաբնույթ մակերեսների վրա առկա ձեռքի հետքերի հայտնաբերման համար նախատեսված մատնադրոշմային փոշիների և փոշենման նյութերի հնարավորությունները: Ընդ որում, նշվում են նաև հատուկ միջոցներով տարբեր մակերեսների վրա առկա հետքերի հայտնաբերման համար ամենաբարենպաստ ժամկետները¹²:

Նմանատիպ աղյուսակ ներառված է նաև Տ.Ֆ. Մոխսենայի մենագրությունում¹³:

Հետքերի հայտնաբերման համար ամենաբարենպաստ ժամկետների և միջոցների մասին հիշատակումներ կան նաև Օ.Ա. Մոկոլովայի հետազոտությունների վրա հիմնված գիտական հոդվածում¹⁴:

Հարկ է նշել, որ վերոնշյալ աշխատություններում ներկայացված տեղեկությունները ուղղված են հետքերի հետ աշխատելու համապատասխան մի-

¹² Տե՛ս Ивашков В.А. Работа со следами рук на месте происшествия. М., 1992. էջ 18:

¹³ Տե՛ս Моисеева Т.Ф. Указ. Соч. էջ 65:

¹⁴ Տե՛ս Соколова О. А. Установление давности образования следов рук человека на некоторых следовоспринимающих поверхностях // Судебная экспертиза. 2012. № 2 (30). էջ 52-61:

ջոցների ճիշտ ընտրությանը: Եթե ընտրված միջոցը կիրառելով փորձագետին հաջողվում է որակյալ հետք հայտնաբերել, ապա նա կարող է հետևություն անել, որ հայտնաբերված հետքի առաջացման վաղեմությունը համապատասխանում է կոնկրետ մակերեսի վրա իր կողմից կիրառած տեխնիկական միջոցով հետքի հայտնաբերման ժամկետներին: Օրինակ՝ իմանալով, որ որոշ ժամանակ ջրում մնացած թղթի վրա առկա քրտնաճարպային հետքը կարելի է հայտնաբերել մազնիսական փոշու միջոցով միայն տասներկու օրվա ընթացքում, փորձագետը, իր կողմից որակյալ հետք հայտնաբերելու դեպքում, կարող է գիտականորեն հիմնավորված հետևություն անել այն մասին, որ հետքերը առաջացել են ոչ շուտ, քան հայտնաբերման պահից տասներկու օր առաջ: Սակայն արդարացիորեն պետք է նշել, որ նման հետևությունները կրում են խիստ պայմանական բնույթ, քանի որ հաճախ հայտնի չեն հետազոտման օբյեկտ հանդիսացող հետքի պահպանման պայմանները և բացակայում են արտաքին գործոնների ազդեցության վերաբերյալ տեղեկությունները:

Ընդհանրացնելով հետքերի հայտնաբերման համար կիրառվող տեխնիկական միջոցների ճիշտ ընտրության հաշվին հետքերի առաջացման վաղեմությունը պարզելու գիտական հնարավորությունների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա վերլուծությունները, կարելի է ասել, որ այս մոտեցումը կրում է միայն կողմնորոշող բնույթ և չի ընձեռնում կոնկրետ, կատեգորիկ փորձագիտական հետևություն անելու հնարավորություն:

Ձեռքի քրտնաճարպային հետքերի վաղեմության պարզման հաջորդ մեթոդը հետքի պահպանման պայմանների մոդելավորման և անկայուն բաղադրիչների քանակի պարունակությունը պարզելն է: Այս մեթոդի կիրառման միջոցով կարելի է 20-30 օրվա ընթացքում լուծել հետքի վաղեմության հարցը: Քրտնաճարպային հետքերում առկա եռազլիցիրիդների հետազոտման միջոցով հետքի առաջացումից 7 ամիս անց վաղեմությունը պարզելու ճշգրտությունը կազմում է ավելի քան 89%: Դա պայմանավորված է հետքի նյութում եռազլիցիրիդների նվազեցման աստիճանով¹⁵:

Սակայն մեթոդի հեղինակն ինքն է նշում, որ նման բնույթի հետազոտությունների արդյունքները էականորեն պայմանավորված են քրտնաճարպային նյութի բաղադրությամբ և շրջակա միջավայրի մի շարք գործոններով,

¹⁵ Ст. 'u Моисеева Т.Ф. Указ. Соч. էջ 66:

ինչը նվազեցնում է փորձագետի կողմից արված հետևության արդյունավետությունը և շատ դեպքերում կարող են լինել միայն հավանական:

Այս մոտեցմանը հակադրվում է այն կարծիքը, որ հետազոտության նշված քիմիական մեթոդները առհասարակ չեն մտնում մատնադրոշմման առարկայի մեջ և հետքերի առաջացման վաղեմությունը պարզելու խնդրում առավել հստակ արդյունքներ կարելի է ստանալ հետքի առաջացման գործընթացի մոդելավորման և կոնկրետ դեպքով փորձագիտական աշխատանքի արդյունքում: Եթե փորձերի ընթացքում հաջողվում է ստանալ դեպքի վայրից հայտնաբերված հետքին համապատասխանող փորձարարական հետքերի կազմաբանական (մորֆոլոգիական) պատկերը, իսկ քիմիական հետազոտության միջոցով՝ հետքում պարունակվող բաղադրիչների վերաբերյալ ելակետային տվյալներ (կասկածյալի քրտնաձարապային հետքերի օգտագործման պայմանով), ապա կարելի է դեպքի վայրից հայտնաբերված հետքերի վաղեմության մասին գիտականորեն հիմնավորված հետևության հանգել¹⁶:

Մարտավարության տեսանկյունից առավել նպատակահարմար կլինի դիմել այս հետազոտությանը, երբ փորձաքննության այլ տեսակները կատեգորիկ պատասխաններ չեն տվել և հետազոտության օբյեկտն իր ընդհանուր վիճակով թույլ է տալիս իրականացնել նման բնույթի հետազոտություններ:

Ձեռքի քրտնաձարապային հետքերի վաղեմությունը պարզելուն ուղղված հետազոտությունների ուսումնասիրության արդյունքում, կարող ենք հետևություն անել այն մասին, որ խնդրի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, կենտրոնացված լինելով մի շարք աղբյուրներում՝ հողվածներում, մենագրություններում, ատենախոսություններում, մեթոդական ուղեցույցներում, կարիք ունի հետագա մշակման և ՀՀ փորձագիտական հաստատություններում ներդրման:

ՀՀ-ում քրտնաձարապային հետքերի վաղեմությունը պարզելուն ուղղված հարցերի շուրջ հետազոտություններ չեն ծավալվում, դրա մասին են վկայում մեր կողմից արված հարցումները, որոնցից պարզ դարձավ, որ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից նման հարցադրումներ որպես կանոն չեն արվում, իսկ այն եզակի դեպքերում, երբ փորձաքննության նշա-

¹⁶ St 'u Самищенко С. С. Современная дактилоскопия: основы и тенденции развития: курс лекций: учеб.-метод. Пособие М., 2004. էջ 145:

նակման մասին որոշման մեջ ներառվում են վաղեմության պարզելուն ուղղված հարցեր, փորձագետների կողմից հետևություն է արվում դրանց պարզելու անհնարինության մասին:

Ներկա պայմաններում ակտիվ աշխատանքներ են տարվում ձեռքի քրտնաճարպային հետքերի վաղեմությունը պարզելուն ուղղված հետազոտությունների միասնական մեթոդիկա ձևավորելու ուղղությամբ, որին ցավոք մասնակցություն չեն ցուցաբերում ՀՀ փորձագիտական հաստատությունները, այնինչ միասնական մեթոդիկայի մշակումը և գործնականում այդ հետազոտությունների լայն կիրառումը էականորեն կնպաստի քննության որակի բարձրացմանը:

ОСОБЕННОСТИ ОПРЕДЕЛЕНИЯ ДАВНОСТИ ПОТОЖИРОВЫХ СЛЕДОВ ЧЕЛОВЕКА

Сардарян Лусине Арутюновна

*Преподаватель кафедры ОРД и криминалистики
Академии Образовательного комплекса полиции РА,
майор полиции*

Актуальность разработки современной единой методологии исследования потожировых следов человека обусловлена необходимостью решения проблем, возникающих перед лицами, проводящими следствие, а также в практической деятельности экспертов.

В статье делается попытка представить основные задачи, которые могут быть решены путём определения давности потожировых следов человека, а также результаты исследований с использованием гидрофобных и гидрофильных порошков, влияние разных факторов на старение следов.

Ключевые слова: потожировые следы рук человека, определение давности, гидрофобные и гидрофильные порошки.

THE PECULIARITIES OF THE CLARIFICATION OF THE LIMITATION PERIOD OF THE FAT AND SWEAT TRACES OF THE HANDS OF HUMAN BEING

Sardaryan Lusine

*The lecturer at the chair of Operative
intelligence activity and Criminalistics of the
Law faculty of the Academy of the Police
Educational Complex, Police Major*

The necessity to cultivate the complete, modern methodology of the fat and sweat traces' investigation is due to the persons, realizing the investigation, as well as the necessity to solve the problems during the practice.

In the article we have mentioned the main problems, which can be solved through the finding out the limitation period of the fat and sweat traces of the hands, the results of the research works made with hydrophobic (hydrogen) and hydrophilic powder, as well as the influence with different factors on the traces that get older.

Keywords: fat and sweat trace of the hands, the clarification of the limitation period, hydrophilic, hydrophobic powder

Հոդվածը գրախոսվել է՝ 09.02.2019թ.
Ներկայացվել է տպագրության՝ 27.02.2019թ.

ՏԱՔՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԻՆՏԵՐՆԵՏ-ՄԻՋՆՈՐԴ

Օհանյան Դավիթ

ՀՀ ռստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

Տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի զարգացումը, անշուշտ, նպաստեցին և շարունակում են ազդել հասարակական հարաբերությունների զարգացման վրա: Արդի ժամանակներում համացանցն ակտիվորեն ներխուժել է հասարակական կյանք: Այդ ազդեցությունը հատկապես զգալի է իրավական հարաբերությունների վրա: Հետևաբար իրավունքի առջև հասունացել է հերթական հրամայականը. հասարակական հարաբերությունների այնպիսի նորմավորում, որն առնվազն համահունչ կլինի աննախադեպ տեմպերով զարգացող ինտերնետ իրականությանը: Մասնավոր հարաբերությունների վրա համացանցի ազդեցությունն ավելի մեծ է: Այդ ազդեցության դրսևորումներից մեկի ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն աշխատությունը:

Մի քանի տարի առաջ ստեղծվեց հայ իրականության առաջին ստարտափերից մեկը՝ gg-ն, այնուհետև փոխադրման շուկա ներգրավեց ոլորտի համաշխարհային հսկաներից Yandex taxin: Մրանց հաջորդեցին նմանատիպ այլ կազմակերպությունների ստեղծումը (Սtaxi և այլն): Սույն գիտական հոդվածի նպատակն է հստակեցնել նմանատիպ սուբյեկտների մասնավոր-իրավական կարգավիճակը, մասնավորապես՝ հիմնական իրավական խնդիրը կայանում է հետևյալում՝ արդյո՞ք այդ կազմակերպությունները հանդիսանում են փոխադրման (ուղևորափոխադրման) ծառայություններ մատուցող ընկերություններ, թե՞ հանդիսանում են ինտերնետ-միջնորդներ, որոնք միմյանց են կապում քաղաքացիական իրավունքի տարբեր սուբյեկտների: Այս խնդրի պարզաբանումը կօգնի հստակեցնել այս ոլորտում առկա պայմանագրային հարաբերությունները և դրանցից ծագող իրավական հետևանքները: Արդյունքում հնարավոր կլինի հստակեցնել նաև վնասի պատճառումից բխող պարտավորությունների իրական հասցեատերը:

